



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Հիմնական Ա.

Պարբեր Հայու-  
թափ հայոց պատմի:

Գ. I



1999


ՑԱԳՐԱՆ ՓԻՐՈՒՄԵԱՆՑ

# ՊԱՏԿԵՐՆԵՐ

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՀԱՅՈՅ

ԿԵՐԱՔԻՑ

( Արքայի պատճեններից )



ԹԻՖԼԻՍ

Տպարան Մոլիս Վարդանեանի

1888

65n

2201

ՑԱԳՐԱՆ ՓԻՐՈՒՄԵԱՆՑ

# ՊԱՏԿԵՐՆԵՐ

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՀԱՅՈՅ

ԿԵՐԱՎԻՑ

1848.

(ԴՐ ԱՇԽԱՂՈՎԹԻՆԵՐԻց)

ԳՐՔՈՑԿ Ա.Ա.ԶԻՒ



ԹԻՖԼԻՍ

Յայտան Մովսէս Վարդանեանի

1888



## Ապրանքաբան

Доз. цена. Тифлисъ, 24-го Октября 1888 г.  
Тип. М. Вартанянца, Тройц. пер. домъ № 11.

Բոյոր իրաւունքները վերապահուած են:  
S. F.

42201-60

2905

ՅԱՌԱՋԱԲԱԴ

(1881-1881) Հայոց պատմության առաջնահայր:

Դեռ եւս անցեալ 1887 թուականի  
վերջերին լոյս տեսաւ «Մշակի» համարնե-  
րում ներկայ պատկերներից մէկը՝ «Հին  
սերունդ»-ը։ Դոյն գրուածը, լիբրեւ մի  
ն մուշ, յանձնուեցաւ «Մշակին» այն պատ-  
ճառով, որ մեր ընթերցող հասարակութիւնը  
առիթ ունենար մի որոշ գաղափար կազ-  
մելու իմ՝ առանձին գրքերով հրատարա-  
կելիք՝ «Վասպուրականի հայոց կեանքից  
վերցուած պատկերների» մասին։ Նոյն իսկ  
նպատակով այդ գրութեան կցել էի նաեւ  
մի յառաջաբան, որի քանի մի կտորները  
դնում եմ այստեղ տառ առ տառ։

«Մենք չունինք այսօր—ասել էի ես  
այստեղ—փոքր իշխանէ լիակատար տեղե-  
կովթիւմներ ոչ միայն ամբողջ թիւքքիայի,

այլ նոյն իսկ նրա մէկ որեւէ բազմահայ  
նահանգի մարդոց տիպերի, նրանց ի ս կ ա-  
կ ա ն կեանքը ընդգրկող հանգամանքների  
մասին. . .

«Ի՞նչու գրեցի ես իմ «Պատկերները»:

«Երբ ես չորս տարի առաջ (1883-1887)  
ուսուցչական պաշտօնով Վան տեղափոխուե-  
ցայ, հինգ առաջին օրերից մի ապշովթիւն  
տիրեց վրաս: Կարծես մարդիկը, նրանց  
կեանքի հանգամանքները, սովորութիւնները,  
բնաւորութիւնը, նիստ ու կացը, խօսակ-  
ցովթեան ձեւը՝ մի չեղած ու տարօրինակ  
բան էին ինձ համար: Ոչ այդպիսի մար-  
դիկ եւ ոչ այդպիսի կեանք կարծես երբէք  
չէի տեսած ես. դա մի հանելով էր ինձ  
համար եւ շատ բաղադրեալ հանելով: Եւ  
որքան աւելի խորասուզում էի իմ նախ-  
կին գաղափարների մէջ Տաճկահայոց կեան-  
քի մասին, այնքան աւելի հիսաթափում  
ու կաշկանդում էի ես: Ուսումնասիրել  
այդ հաղուագիւտ, բաղադրեալ ու տարօ-  
րինակ կեանքը, վերլուծել նրա ամէն մի  
բարդ երեւոյթն ու հանգամանքը—եղաւ

իմ ակամայ պահանջն ու պարապմունքը:  
Այդ հետազօտութեան համար ես զոհեցի  
ամէն քան. եւ ժամանակ, եւ հանգիստ,  
եւ գիշերային քուն, եւ առողջութիւն, եւ  
երջանկութիւն. . . Ես պտոււմ էի տնէ-  
տուն, շրջում մերձակայ գաւառները, խօ-  
սացնում ամէն հասակի ու գասակարգի  
մարդոց: Երբէք չէի թերամում մոցնել  
նորանոր տպաւորութիւններ յիշառակարա-  
նիս մէջ: Ինչ որ ծուլանում էի արտադրել  
թղթի կտորի վրայ, այն ես գրոշմում էի  
սրտիս մէջ, սեւ մելանից աւելի անցնելի  
ներկով: Եւ ով կարող է հերքել թէ սրտի  
յիշառակարանը մելանի հետքերից էլ շատ  
անգամ ազդու չէ:

«Բայց Վանը այնպիսի մի կողքսն է,  
ուր անընդհատ երթեւեկութիւն կայ Տաճ-  
կաստանի շատ կողմերից: Իսկ ոչինչ չէր  
արգելում ծանօթանալ նաեւ այդ հիւրերի  
հետ եւ մանրամասն տեղեկութիւններ ձեռք  
բերել նրանց բնակած վայրերի մասին: Այ-  
նուհետեւ, Վանցիք հարիւրներով գնում  
են ամէն տարի Պօլիս ու վերադառնում:

Թա մի լաւ միջոց էր ինձ համար ծանօթանալ նաեւ Պօլսեցիների կեանքի ու նըռանց գործողութիւնների հետ։ Այդպիսով ես դիրութիւն ունեցայ ոչ միայն Վասպուրականը, այլեւ ամբողջ թիւրքահայոց կեանքը ըստ բաւականին ուսումնասիրելու։

«Երկու ամիս առաջ վերագառնալով իմ՝ հայրենի—Թիֆլիսը, ես աճապարեցի կարգի բերել իմ տպաւորութիւնները։ Ես անհրաժեշտ համարեցի եւ իմ մեծ պարտք կարծեցի հազորդել ստացած արդիւնքներու իմ հայրենակից Կովկասցիներմ։ Յիշողութիւնները կարելի է գրել շատ ձեւով, բայց նիւթին ու մարդոց աւելի կենդանութիւն տալու համար՝ վիճական պատճեն է անհագասեցի։

«Սոյն վէպիկները հրատարակելով, ես չունիմ որեւէ առանձին ձգտում, տէնդէնցիա։ . . Ես ուզում եմ դնել ընթերցող հասարակութեան առաջ մի հետաքրքիր ու անծանօթ աշխարհ՝ իր լիակատար ամբողջութեամբ։ Եւ անել այդ առանց երեւակայութեան ու բանաստեղծական ազատու-

թեան, ներկայացնել սոսկ իրականութիւնը, ճշմարտութիւնը, եղած գրութիւնը՝ իր խայտաճամուկ գոյներով՝ լուսանկարչի մը կրաւորական գերով։ Ընթերցողը միջոց կունենայ այդպիսով ճանաչել Տաճկահայոց հոգեւորականին, վաճառականին, պաշտօնեային, վաշխառուին, ուսուցին, արհետաւորին, գիւղացուն, գեղեցիկ սեռի ներկայացուցին. . . Եւ այդ ամէնը իրապէս, ճշմարտապէս եւ ոչ երեւակայութեամբ ու կարծեօք։

«Պիտի գոհացնեմ՝ արդեօք ընթերցողներիս,—այդ մասին ինձ չէ պատկանում դատավճիռ տալ։ Պիտեմ միայն որ գեռշատ անվարժ է գրիչս լեզուի ու արհեստի կողմից, բայց իցի՞ւթէ ընթերցողը գոհ մընար լոկ իր ստանալի պաշարից։ Եւ այդքիչ միփիթարութիւն չի լինի ինձ համար։

«Պատկերներս կոչեցի «Վասպուրականի կեանքից», զի նիւթերի մեծ մոսը այնտեղից, վոգրամասնութիւնը՝ ուրիշ նահանգներից ու Պօլսիցն է վերցուած։

«Պատկերներս պիտի բաղկանան չորս  
հասորից, իւրաքանչիւրը մօտ 400 երեսով։  
Չեռքիս է արդէն երկրորդ հատորը եւ  
ամբողջը լոյս պիտի տեսնէ (կտոր կտոր)  
միան մէկ տարուան մէջ»։

Երբ ես այժմ, ճիշտ մի տարի անցնե-  
լուց յետոյ, մոտաքերում եմ այն բուռն ոգե-  
սորութիւնը, որ զգում էի յառաջաբանի  
այդ վերջին կտորը գրելիս, այսինքն մի  
տարուայ մէջ այդ ահագին գրու-  
թեանց տպագրելու յաւակնութիւնը, —ե-  
րեսս կնճռուում է թթու կերպով ու ջր-  
դերիս մէջ սարսուռ անցնում։ Այս, մի տա-  
րուայ կրած մտատանջութիւնները մի ան-  
գամ էլ եկան ինձ համոզելու, որ ամէն մի  
ծրագիր յետ է քանդում, ամէն մի տեսնչ  
օդն է ցնդում, ամենազօրեղ կամքն իսկ  
ջարդուփշուր լինում, երբ նա բաղխում է  
այն հսկայակոփ ժայռին, որին մարդիկ  
ՄԱՄՈՆԸ. են անուանում։ . . .

Ես փորձ արի նաեւ բաժանորդագրու-  
թիւն բանալ, բայց այնպիսի մի ձեւով (ա-  
ռանց բաժ. թերթեր ցրուելու), որ շատ  
անսովոր նկատուեցաւ եւ, հետեւապէս, ո-  
չինչ արդիւնք չունեցաւ. . .

Բայց թող կորչի յուսահատութիւնը...  
յառաջ եւ յառաջ. . .

Անկարող լինելով հրատարուկելու այդ  
ստուարածալ մատեամները եւ թաղելով այն  
վարդագոյն ցնորդները, ես այժմ մասամբ  
միայն կատարում եմ իմ խոստումը, լոյս  
հանելով սոյն նիշար գրքոյկը։ Եթէ սա  
արժանանայ ընթերցող հասարակութեան  
ուշագրութեանը, կունենայ նաեւ իր յա-  
ջորդները, որոնցից իւրաքանչիւրը բաղկա-  
կած կըլինի 3—5 պատկերներից եւ կըծա-  
խուի գիրամատչելի գնով։

ՏԻԳՐԱՆ ՓԻՐՈՒՄԵԱՆՑ

22 Հոկտ. 1888 թ.

Թիֆլիս.

ବ୍ୟାକି ମହାନୀ ଶତ  
ଅଧିକାରୀ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

	Երես
I. Հին Սերունդ . . . . .	1
II. „ԱՇԽԱՐՁԻ ԿԵՍ“-Ը . . . . .	69
III. ԼԻՄ ԱՆՊԱՏԻ ԳԵՂՐԴ ՃԳՆԱԿՈԲԸ . . . . .	91

I

# ՀԻՆ ՍԵՐՈՒՆԴ

Ապրիլ 1890 թ.  
I Քառորդ մայ. I  
08 Ապրիլ 1890 թ. II  
10 Մայիս 1890 թ. III

# ԲՈՅԱԿԱՆ ԾԱ

## ՀԻՆ ՍԵՐՈՒՆԴ

Ես շատ էի սիրում երթալ մուղսի Ստեփան  
աղային։ Կարծես հիմա ել աչքիս առաջն է այդ  
ութունամեայ առաքինի ծերունին։ Շարաթը  
մի անգամ արել մայր մտնելուն պէս ես այ-  
ցելում էի նրան։

Ստեփան աղայի տունը եռայարկ էր, փառա-  
ւոր սենեակներով։ բայց նա միշտ մնում էր վարի  
յարկի մի ցած սենեակում զի սանդուղտներով  
բարձրանալ անկարող էր։ Ահա մտնում էմ իր  
սենեակը։ Մութն արդէն պատել է այնտեղ և  
հազիւ է նշարվում ծերունու ստուերը սենեակի  
մի անկիւնում։ Նա նստած է ծալապատիկ կամ  
չոքած՝ մինդարի (ներքնակի) վրա։

—Քարի երեկոյ, հաջի աղայ, ունի պրոճառ  
—Աստծու բարին, էֆենդի, —լսվում է նրա  
քաղցր, հիւրասէր ձայնը, ունի սկզբան  
հաջի աղան ունի արդէն մասնաւոր արտօնու-  
թիւն ոտքի չելնելու ոչ մի հիւրի առաջ, զի  
այդ բանի համար նա պէտք ունի օգնողի։ Տեղ  
եմ բռնում ծերունու կողքին, ի հարկէ ոչ ա-

թոռի վրայ—որ այնտեղ չը կայ— այլ մինդարի։  
Սենեակը ներկայացնումէ ասիական հին տիպ։—  
հողի յատակի վրա փոփած է նախ խսիր (հա-  
սիր) և ապա կապերտ։ պատերի տակ շարված  
են մի կանգուն լայնութիւն ունեցող փոքրիկ  
ներքնակներ և թանձր բարձեր՝ որպէս մէջքի  
յենարան նոտած ժամանակ։ Ուրիշ կարասիք,  
ինչպէս Վանայ, բոլոր հին ճաշակի տների մէջ  
գտնել կարելի չէ։

—Բարի՛ եկար, —ասումէ նա ինձ նստելուց  
յետոյ, ձեռքը տաճկական ձեռվ ճակատին մօ-  
տեցնելով (թամաննայ)։

Այս տաճկական բարել լինում է զանազան  
տեսակ։ Երբ նա ուղղում է բարձրաստիճան  
մարդոց, բարեողը պարտաւոր է այնքան խո-  
սարհիլ, որ կարողանայ, ձեռքը դիպցնել գետնին  
ու ապա մօտեցնել իր ճակատին։ Այդ նշանա-  
կումէ թէ բարեողը պատիւ է համարում իրան՝  
դոել իր գլխին յարգելի անձնաւորութեան ուսաց  
հողը։ Երբ գիմացինը պատուաւոր մարդ է,  
բարեողը ձեռքը դիպցնում է նախ իր կրծքին և  
ապա ճակատին։ —այդ նշանակում է որ նրա  
ծանօթը տեղ ունի իր սրահ ու գլխի վրա։ Երբ  
վերջապէս ողջունում են մի սիրելի ու մաերիմ  
եակին, —հարկաւոր է ձեռքը նախ տանել շըր-  
թունքներին և ապա ճակատին։ Դրանով ելցոյց  
են տալիս թէ նախ ուզում են. համբուրելիրանց

բարեկամին և այնպէս նստեցնել նրան գլխին։  
Կայ նոյնպէս բարեկի մի այլ տեսակ, որ նման  
է եւրոպացոց զինուորոկան յարգանքին (ՊԵՍՏԻ),  
թէն ոչ այնպէս կոկիկ և այդ գործ են ածում  
իրարու հետ նուազ ծանօթ կամ շատ ձևակա-  
նութիւն չը սիրող անձինք, ինչպէս նաև այն  
բարձրաստիճան մարդիկ, որոնք ուզում են պա-  
տուել հասարակ մահկանացուներին իրանց ող-  
ջոյնով։ «Թամաննաները» կամ՝ ուամկօրէն խօ-  
սելով։ «Թամանդաները» միշտ կատարում են աջ  
ձեռքով և ինչ որ մասնաւոր դիտողութեան ար-  
ժանի է, այդ այն է, որ արեւելեան ազգերի մէջ  
բարեողը անպատճառ տարիքով։ Հարստու-  
թեամբ ու պատով աւելի բարձր պէտք է լինի  
բարեւ «ընդունողից»։ Իսկ երօպական «ձեռք  
սեղմելը» այնտեղ իրերի կարգում է չէ։ Հայերը  
միայն սովորութիւն ունեն անել այդ՝ կրօնական  
մէծ տօները շնորհաւորելիս։

—Բարի՛ տեսանք, հաջի աղայ, —պատասխա-  
նում եմ նրան—ի՞նչպէս ես, աղե՞կ ես։

—Աղեկ եմն գեօյ... ոտքերէս շատ եմթուլցե,  
վարժապետ, ջորով (հազիւ) ձի՝ կը հեծնեմ։ որ  
ժամ երթամ... «Տէ՛ր, գիր պահապան բերանոյ  
իմոյ»... Քանի՞ գիր խնդրեցի, որ ուժէս ընկնելէ  
յետոյ էլ կեանք չունենամ... Բայց «օրհնեալ է  
կամք Տեառն»...

Ա. Անայն երկիւղածութեամբ այդ Խօսքերը

արտասանելուց յետոյ, նա կախեց իր դլուխը և  
սուզվեցաւ մտածումների մէջ:

Հաջի աղայ, ասեցի ես բոպէական լոռութիւ-  
նից յետոյ, դու արդէն տանդ մէջ բոլոր կրօնա-  
կան գրքերը կը կարդաս. կարելի չէ՞ որ միայն  
կիրակի օրերը ժամ երթաս:

Դպատասխան այդ առաջարկութեան, ծերու-  
նին ձգեց վրաս մի ցաւալի հայեացք միայն, ես  
այդ կարծիքը յայտնեցի նրան մանաւանդ այն  
պատճառով, զի տեղեկացած էի որ նա ոչ լէ  
միայն «ջորով» է ձի հեծնում, այլ նրան գրկե-  
լով հեծացնում են եւ տան երկու մշակներն էլ  
թևերը բանած՝ մեզմ քայլերով ձին քշում: զի  
այլապէս նա ձիուց վայր կընկնէր...

— Տուր ես տանեմ, տուր ես տանեմ: — լովե-  
ցաւ բակից փոքրիկ տղաների վէճը և յանկարծ  
դուռը բացվելով, ներս մտան տասի չափ մանր  
մանչեր ու աղջիկներ, որոնցից ամենափոքրը  
բռնած ունէր ձեռքին մի վառած ճրագ, այսինքն  
խեցեղէն ամանով ձէթ ու պատրոյգ: Ճրագը  
նշանակեալ տեղը դնելուց յետայ տղաները ամե-  
նայն ակնածութեամբ մօտեցան մի առ մի հաջի  
աղային և աջն համբուրելով, ինձ ևս տաճկական  
թամաննայ արին: Դրանք հաջի աղայի եղրօր  
թուներն էին:

Ճրագն ու տղաների ներկայութիւնը ի հարկէ  
մի փոքր կենդանութիւն տուին սենեակին և

մենք մօտ հինգ րօպէ զբաղվեցանք նրանց հետ-  
ունց: — Ե նեղութեան իմում ես առ Տէր կար-  
դացի և առ Աստուած իմ աղաղակեցի, — մրմջաց  
հաջի աղան, դժուարութեամբ իր նստած դերքը  
փոխելով:

Մեր խօսակցութիւնը առհասարակ պաղ էր  
անցնում, զի պէտք է ասած որ հաջի Ստեփան  
աղան սիրող չէր աստիճանական և մանր մունք  
զրուցատրութեանց: Նա չէր հետաքրքրվում ոյն-  
պէս Շնոր լուրերով: Հաջի աղան ինչպէս գրե-  
թէ բոլոր հին մարդիկ, մեծ հաճութիւն էր  
զգում իր անցեալ կեանքի դէպքերի և իր տե-  
սած մեծ մարդոց գովիստները անելուց: Այդ է  
գրեթէ բոլոր հին մարդոց թոյլ կողմը և ով որ  
կուզի անձանձրոյթ նրանց հետ երկար ժամեր  
անցկացնել պէտք է անպատճառ սիրահար լի-  
նի հնութեանց:

— Հաջի աղայ, քանի՞ տարի կայ լուսահոգի  
Գարրիկ սրբազնի մահը: — Հարցուցի ես դի-  
ւանագէտի մը արտաքին պարզութեամբ:

— Կայ քսան, քսանը հինգ տարի... Գարրիկ սրբազն... Հայ գիղի գիւնեա (աշխարհ)... Հը-  
րամանքդ անոր պատմութիւնը լսե՞ր ես: — Դար-  
ձաւ նա դէպի ինձ մի առանձին ոգեորութեամբ:

— Քիչ մը, Կայ շատ արդար մարդ էր:

— Ենպէս առաջնորդ Աւան ոչ եկած է և ոչ  
պիտի գայ: Լուսահոգին քառասուն տարի Լի-

մայ վանահայր էր, և որ կերթայ ո. Էջմիածին  
եպիսկոպոս ձեռնադրվելու, լուսահոդի ներսէս  
Կաթողիկոսը կամի թէ Շորգեակ Գարբիել, զու-  
իմ հայրն ես, հայր Գարբիելն ես... որքան էլ  
առաջ չոգած օրհնութիւնս կընդունիս, իմացի՞ք  
որ իմ հայրն ես... Դու որ քառասուն տարի  
50 միաբան կրցար խաղաղութեամբ կառավա-  
րել—որ աշխարհի ամենին գժուար բանն է—  
արժանի ես Վասպուրականն էլ կառավարելու,  
օրհնեալ լինիս, հայր Գարբիել բայց եթէ լսեմ  
որ մի օր Ախմամարայ Կաթողիկոս ես դար-  
ձեր, —պիտի նզովեմքեզ, հայր Գարբիել...  
— Կ'երդնում ո. կարգովդ առաջի վեհափա-  
ռութեանդ և Աստուծոյ, որ անարժանս երբէք  
պիտի չը բազմիմ այդ հեստեալ և նզովեալ Ա-  
թոռը—կամի լուսահոդին ու կը հեծկլաց  
սաւայ (կաթնակեր տղու պէս...  
— Կատարեց այդ երգումը, — հարցուցի ես  
անհամբեր,

— Ինչպէս չէ, ինչպէս չէ, Քանի մի տարիէն  
յետոյ Ախմամար Խորվութիւններ եղան:  
Ստամբուլյ պատրիարքը կոնդակ էօրիխկեց  
(ուղարկեց) որ նա երթայ իբրև քննիչ Լուսա-  
հոդին հնագանդ մարդ էր, էֆենդի, գնաց:  
Բայց երբ կաթողիկոս ուղեցին զինքը ընտրել  
պատրիարքին աղերսանաց գիր գրեց, որ զինքը  
այդ մեղքէն ազատէ և իր ո. Էջմիածնայ մէջ

տուած ուխտը յտրգէ... Նա Է'սպէս մարդ էր,  
էֆենդի: Տակ աղաջան ընդունած է աղաջանը  
Բակի մէջ լսվող ոտերի ձայնը, ապացոյց էր,  
թէ պիտի ունենայինք նոր հիւրեր և աչա սե-  
նեակի գուները բացվելով, ներս մտաւ մի բազ-  
մութիւն: Այդ բազմութիւնը բաղկացած էր  
մուղսի Ստեփան աղայի հանգուցեալ եղբօր որ-  
դիներից ու թոռներից: Դրանք խմբովին վերա-  
դարձած էին շուկայից, ինչպէս ամեն երեկոյ.  
Նախ մէկ երկու տեղեկութիւն այդ անձերի  
մասին:

Մեկ հաջի աղան անզաւակ էր: Երիտասարդ  
հասակին կարգւելով, տաս տարիէն յետոյ մե-  
ռած էր իր ամուլ կինը: Արդէն նա աշխարհա-  
սէր մէկը չէր, որպէս զի երկրորդը առնէր, ուս-  
տի իր բոլոր սերը և հարստութիւնը նուիրեց  
իր եղբօրորդիներին, նրա մեծ եղբայրը քանի  
մը տարի առաջ մեռնելով: Թողած էր հինգ ա-  
րու զաւակ—մուղսի Մկրտիչ Յօվհաննէս: Կա-  
րապետ, Պօղոս և Պետրոս: Դրանք բոլորն էլ  
իրանց հանգուցեալ հօր և հաջի Ստեփան աղայի  
հետ վարում էին իրանց առևտրական գործերը  
երկու մեծ խանութներում: Դրանց հանգուցեալ  
հանգուցեալ հօր և հաջի Ստեփան աղայի  
հետ վարում էին իրանց առևտրական գործերը,  
իրեւով ու հարստութեամբ:

Վաթսունամեայ մուղսի Մկրտիչը տարբերվում էր իր հօրից տաճիկների հետ ունեցած յարաբերութեամբ, դիւրագրգռութեամբ ու գինեմոլութեամբ։ Նա ունէր ինն աղջիկ ու չորս որդի։

Յիսուն ու հինգամեայ Յովհաննէս աղան գերազանցում էր հօրը իր ուսումնասիրութեամբ, ընկերականութեամբ ու համեստութեամբ։ Նա ունէր չորս աղջիկ ու վեց տղայ։ Քառասնամեայ Աարապետ աղան օժտուած էր մեծ հոչակ տալու իրանց արդէն հըռչակեալ ընտանիքին, եթէ կաթուածամահ չը լինէր։ Նա թողած էր հինգ որբ—արու և էգ։ Երեսուն ու հինգամեայ Պօղոս աղան աշխատում էր «նոր մարդ» երեալ, բայց նա չունէր բնաւ իր մեծ եղբայրների ու հօր բարութիւնն ու ողորմածասիրութիւնը։ Ագահ էր ու ժլատ, եթէ չասենք հարստահարող։ Ծատ էր պարծենում իրանց գերդաստանի անունով, «Ես Զթշենց տան զաւակն եմ»—ասում էր նա մի առանձին շեշտով երբ պէտք լինէր իր կասկածելի իրաւունքները պաշտպանելու։ Նա նոր էր ամուսնացել ու առաջին զաւակն էլ մեռած էր։ Վերջապէս երեսնամեայ պարոն Պետրոսը կարծես թէ բնաւ Զթշենց տան զաւակը չը լինէր, թէ որը քառասուն անդամ հպարտութեամբ յիշում էր իրանց տան անունը, բո-

լորովին անտեղի։ Իր կարծիքով նա պատկանում էր «նոր սերնդին», Ծատ էր սիրում կարդալ գրքեր ու լրագիրներ, բայց անպատճառ ձրի լինելու պայմանով։ Նա իր կեանքի մէջ մի փարայ տուած չէր գրքի կամ լրագրի, թէև մէկ շաբաթ իսկ չէր կարող դիմանալ առանց կարգալու։ Իր բոլոր խօսակցութիւնը «ազգասիրական» էր, մինչև իսկ չէր զլանում նուիրել իր «սիրած» ազգին օրական մէկ ոտանաւոր և պէտք է խոստովանած որ բաւական լաւ բանաստեղծ էր։ Նրա ոտանաւորները շատ մարդու լացը կարող էին շարժել իսկ ինքը հեղինակը ամբողջ մարմնով երկինք էր վերանումնրանց կարդալիս։ Պարոն Պետրոսը չափազանց ժլատ էր։ Նրա բառարանի մէջ «բարութիւն» բառը «մահացումնդք» էր թարգմանված։ Ոչ միայն ազգատը տառապեալը, ընկերը, այլ եթէ իր «սիրած» ու պաշտած» համայն ազգը իր աչքի առաջ անօթութենէ ու զրկանքէ հոգին աւանդէր՝ առանց բնաւ խղճահարվելու մի պատառ հաց մի փարայ իսկ չէր չպոտի նա նրա առաջ...։ Այլ սակայն—ո՛ մարդկային կուրութիւն—այլ սակայն, ասում եմ։ Նա ամենայն անկեղծութեամբ համոզված էր թէ ինքը մէ՛ծ, խիստ մէծ «ազգասէր» է։ Ամեն անգամ անգամ երբ ես լսում էի նրա կարօտակեզ ախը մեր «թշուառ» ազգի կարօտութեան համար, յիշում էի ակամայ

Գամառ-Քաթիպայի սղյն երգիծական տողերը.  
«Ա-իւ, ի՞նչպէս կուզեմ: որ հայի երկիրն  
Ճեմարան, դպրոց, գրատուն ունենար,  
Ունենար թատրօն և շատ լրագիր....  
Լոկ նա ինձ փողի անունը չի տար:»  
Պարոն Պետրոսը, ըստ նայելով իր հասակին,  
հօր և հաջի Ստեփանի ժառանգութեան մէջ ու-  
նէր աւելի քան 1,000 օսմանեան լիրայ կարո-  
ղութիւն: Նա դեռ ամուսնացած չէր: Նա չա-  
փաղանց արհամարհում էր ամենքին և շատ քիչ  
մարդու էր նուիրում իր մտերմութիւնը: Իսկ  
նրա մտերմութիւնը կայանում էր երեք բանի  
մէջ, 1. պարծանք իր հանգուցեալ հօր մեծ գոր-  
ծերի, 2. ցաւակցութիւն «թշուառ» աղջի կա-  
ցութեան և 3. գովեստ իր բանաստեղծու-  
թեանց: Նա գոց գիտէր (անգիր) գրեթէ իր բո-  
լոր ոտանաւորները և խօսակցութեան ատեն  
ցիտատներ էր բերում նրանցից իրը ի պատաս-  
խան իրան ուղղեալ հարցերի:  
Ա-երոյիշեալ բազմութեան մէջ այդ չ'ըս եղ-  
բայրներից զատ կային նաև իրանց 12—20 ամեայ  
որդիքը, վեց կամ եօթ հօգի: Դրանց վրա ա-  
ռանձին բան չունեմ ասելու. Աանայ ընտանիք-  
ներում այդ հասակի տղաները չունին դեռ  
ևս ոչինչ նշանակութիւն: Նրանք գտնվում են  
իրանց մեծերի ծանր ճնշման տակ և անկարող  
են արտայայտել իրանց ներքին «եսը», որով

գժուար է ճանաչել նրանց ընտանիքների մէջ:  
Այդ բազմութիւնը մոտաւ մեր սենեակը—ըս-  
նայած գուների լայնութեան—սագերի ձեռով,  
այսինքն մէկը միւսի ետևից, տարիքի ելեւջի  
համեմատ: Մուղսի Մկրտիչը տեսնելուս պէս  
ոտքի կանգնեցայ: Ամէն մէկի մոտած ժամանակ  
լսվում էր նորեկի «բարի իրիգունը» և իմ  
ու հաջի աղայի «Աստըծու բարինչը»: Նոքա  
բոլորն էլ շարվեցան իրանց հասակի կարգով  
իմ և հաջի աղայի կողքին՝ ծալապատիկ կամ  
չոքած:

Սովորական յարգանքներից յետոյ խօսք բաց-  
վեցաւ օրվան լուրերի վրայ: Պարոն Պետրոսը  
պատմեց, որ լրագիրների ասելով հրէից գէմ  
ամբոխի հալածումը շարունակվում է հարա-  
ւային Ռուսաստանում:

—Սուլթան Մահմուտի ժտմանակ... մեղայ  
Աստուծից—Սուլթան Մաջիդի ժամանակ: —սկը-  
սեց իսկցին հաջի Ստեփանը իր հանդարտ ու  
զուարթ ձայնով: —Ռապնեսպասենց Խամբօն  
Ստամբօլ էր իկե, ես էլ դա ի (այնտեղ): Էտայ  
մարդ եահօւդի (հրէայ) մը կը գտնայ: Կը հար-  
ցնի թէ ոտքի վրա առուտոր կուզեմանել: Ի՞նչ  
բան աւելի վաստակով կը ծախվի: Խաչուգին  
կը տեսնայ որ էտա մարդ խամ իւ զատ չկ հասկը-  
նար, կասի թէ աղուէսու պոչեց զատ վաստա-

կով բան չե ծախուէր. ինչքանդար<sup>1)</sup> փարայ ունիս, գու տուր աղուէսու պոչուն, վերջի ձիկ (ինձ) պիտի օրհնես. — «Աղէկ», ամմա որտեղ գտնեմ էնքանդար պոչ որ ծախեմա, կը հարցուցե Խամրօն. — «Ես վաղը պիտի երթամ ֆռանդստան—կասի եաշուղին—կուզե՞ս ես էնտեղէն քեզ էօրօնակեմ քանի մը հազար հատ... մէկ հազարի չափ էլ տունս կայ, կուզե՞ս իրի կունս արի տամա, Խամրօն էն իրի կուն, առանց մէկի մը բան ասած, կերթայ էնա 1000 պոչն էլ կառնի...»

— Հա, հա, հա, հա, ինդացինք ամենքս հաջի աղայի խօսելու ձեր նկատելով թէ վերջը մի լաւ կատակերգութիւն կայ:

— Միւս օր կանուխ—շարունակեց ծերունին— Խամրօն իր պոչերը կը տանի բազար, կը նստի մէկ տեղ, որ ծախի, «Այ մարդ, դու ծուռ (խենթ) ես, կասեն իրեն ամենքը, աղուէսի պոչը ծախելու բան է, որ բերած ես էսսա տեղ», Բայց Խամրօն մարդու չե հաւատար. 2ում (մինչև) կէսօր կը նստի, կը տեսնայ որ մէկ հաա էլ շը ծախուելէն զատ, ամեն անցնող վրան կը խընդայ: Սա մէկէն ի մէկ կը յեցուի, արիւն-արտը-

<sup>1)</sup> «Ինչքանդար», «էսքանդար», «էդքանդար» և այլն. այս քանդար աղաւաղված վերջաւորութիւնը առնը-ված է թիւքքեհնից.—բուկալար (այս-չափ), սկալար (այն-չափ) և այլն:

սունք կուլայ, Ճիշդ էդ ժամանակ սսւլթան Մաջիդ կանցնի, պատճառը կիմանայ և յօյս կը տայ էդ մարդուն թէ վաղը քառապատիկ գնով բոլոր պոչերն էլ կը ծախուին...

— Հա, հա, հա, հա ինդացինք մենք նորից, կարծելով թէ սուլթան Մաջիդը կատակ է միայն արել:

— Իրիկուան կողմ—շարունակեց հաջի աղան-նահաշուղիներու խախամբաշին հրաման կընդունի սուլթանէն, որ եթէ միւս օր բոլոր հրեաները մէմէկ աղուէսի պոչ չը կախեն իրենց ճակատէն,

— սրով կը մեռնին... Մէկէլ օր—վրայ բերեց հաջի աղան աւելի ոգեորված—տեսանք որ ի-րաւցնէ բոլոր եահուղիք աղուէսի պոչ են կախե...

Ասաց սւ քահքահ ինդաց ցամքած ծերունին, տեսնելով մեր ամենիս բոււն ոգեորութիւնը,

— Էդ պոչերը Խամրօէն գնեցին, հարցուցի ես հետաքրքիր:

— Հրամանքե, հապա—պատասխանեց նա դեռ իր ինդացը շարունակելով—Խամրօն էդ մէկ ա-ւուր մէջ 800 մեջիդ<sup>2)</sup> վաստակ արեց:

Վերջին խօսակցութեան միջոցին սենեակի մի անկիւնում պատրաստվում էր արդէն ընթրիքի

<sup>2)</sup> «Մէջիդ»-ը հաւասար է մեր Երկու բութուն: Նրա մի քսաներորդականը կոչվում է «ըրուշ», որ կը մին մեր 10 կոպէկ:

«սեղան»-ը, Տղաներից մէկը դրեց հաջի աղայից  
մի կանգուն հեռու մի տարուրէտ։ Երկու ուրիշ  
պատանիներ զետեղեցին նրա վրա բոլորակածն  
պատրաստ սեղանը, Դա պղնձի մէկ սինի<sup>3)</sup> էր  
երկու կանգուն տրամադրով։ Նրա մի պրուկը  
հասնում էր հաջի աղային, որով նա պէտք չու-  
նէր իր տեղէն շարժվելու՝ հաց ուտելու համար։  
«Սեղանի» ափերին շարված էին տանու ծալված  
հացեր (լոշեր), կարտված բողկու սոխ և խուրձ  
խուրձ խառն հանաչառներ, իսկ նրա ճիշդ մէջ-  
տեղ—մի պնակով պանիր, Պատերի տակից մին-  
դարները քաշվելով դրվեցան սեղանի շուրջ։  
— «Նստէ՛ք», հրամայեց հաջի աղան և ամէն  
մարդ, առանց իր նստած կարգը փոխելու, մօ-  
տեցաւ սեղանին և բազմեցաւ մինդարի վրայ ծա-  
լապատիկ։

Սեղանը կառնէր մօտ 15 մարդ, իսկ երկու  
պատանիներ ել պաշտօն ունէին ճաշողներին  
պապասաւրութիւն անելու, Երեխաների մի մա-  
սը, որ չէր կարող տեղաւորվել այնտեղ, գնում  
էին «տան-տուն» մայրերի հետ ընթրելու։

«Տան-տուն» է կոչվում վանեցոց ընդարձակ  
խոհանոցը, ուր գտնվում է երկու թոնիր։ Դրան-  
ցից մէկը աւելի մեծ է և ծառայում է հաց

<sup>3)</sup> Էժանութեան համար Վասպուրականի հասարակ  
և միջին դասակարգերը այդ սինին շինել են տալիս  
տախտակից։

թիւելուն. միւսի մէջ, որ երկու կամ երեք ան-  
գամ աւելի փոքր է, նրանք եփում են իրանց  
կերակուրները, Դա կոչվում է նյոնպէս «օջախ»։  
Տան-տունը համարվում է նոյնպէս կանանց սե-  
ղանատուն, իսկ ձմրան ժամանակ դա լինում է  
շատ ընտանիքների համար այն միակ ջերմոցը,  
ուր մեծը թէ փոքրը կարող են փոքր ինչ տա-  
քանալ, ոտերը թոնիր մէջ կախելով։ Բայց գիւ-  
ղերումնա ծառայում է նյոնպէս իրրե առանձ-  
նասենեակ, ննջարան և այլն. և այդ՝ մինչև իսկ  
քանի մի զշդ ամուսնացեալների համար։

Հաջի աղան մի հայեցք ձգեց ամենքի վրայ  
իր մօրուքը<sup>4)</sup> շիւլով և երբ տեսաւ որ խորին  
լուռութիւնը տիրապետում է, մի քահանավայել  
երկիւղածութեամբ ու բարձր ձայնով սկսեց։

— Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս, ամէն։  
Հայր մեր որ յերկինսու… (մինչև վերջ)։ Ճաշա-  
կեսցուք խաղաղութեամբ, զոր պատրաստեալն  
է ի Տրաոնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ, օրհնեալ  
է Տէր ի պարգևս իւր, ամէն։

— Հրամմէ՛, — դարձաւ նա դէպի ինձ՝ ուտելու

<sup>4)</sup> Վասպուրականում մօրուք պահելը բացառիկ եւս-  
ունք է միմիւյն հոգեորականների ու ալեոր աշխար-  
հականների, նթէ մի այլ ոք (տեղացիներից) փոքրձէ  
իրան սեփականել այդ արտօնութիւնը՝ կը դառնար  
հասարակութեան ծաղը և նախատինքի առարկայ։

Հրաւիրելով և ամէն մարդ սկսեց իր գործը տեսնել:

Հին մարդոց փափագն է, որ ուտելու ատեն երկար զրյացներ չը լինեն: Ուստի զանց առնենք մանր մունր նկատողութիւնները: Զանց առնենք նոյնպէս կերակուրների նկարագրութիւնը:

Հացը վերջացաւ դարձեալ ծերունու աղօթքով:

— Դոհութիւն և փառս տացուք կերակրողին տիեզերաց, անուտամբ Հօր և Որդոյ և Հոգւոյն Սրբոյ, ամէն: Հայր մեր, որ յերկինս... Լիութիւն ի վերայ սեղանոյս անհատ և անպակառ արասցես, Քրիստոս Աստուած մեր, որ զմեզ կերակրեցեր և լիացուցեր, քեզ փառք յաւետեանս, ամէն:

Առանց այս սրտառուչ աղօթքների Վասպուրականի ժողովուրդը չէ կարող ոչ հացի նըստել և ոչ հացից վերկենալ: Շատ ընտանիքներում աղօթելու պաշտօնը, մասսամբ կամ ամբողջովին, յանձնավում է նաև երեխաներին, սակայն մեր Ստեփան աղան երբեմն միայն զիջանում է «Հայր մեր»-ը կամ «Լիութիւն»-ը ասել տալ տղաներին:

Ինչպէս ընթերցողը տեսաւ, Զըմքենց տանը հացն ուտում են առանց պատառաբաղի ու դանակի: Զը կայ նաև ձեռք սրբելու որ և է ղենջակ: Այդ է պատճառը, որ սեղանը հաւաքե-

լուց անմիջապէս յետը պատանիներից մինը բերում է կոնք, իսկ միւսը՝ ջուր, սապոն և ղենջակ: Հաջի աղայէն յետոյ ձեռքերն ու բերանը լուանում են կարգով ամենքը:

«Մարսողակա՞ն», — լսվում է փոխադարձաբար չորս կողմից՝ լուացումը աւարտողի համար:

Հաջի աղան «չիգարայ» (սիգարայ) չէ խըմումն<sup>5)</sup> ուստի և աղաներից միմիայն վաթսունամեայ մահտեսի Մկրտիչը ունի արտօնութիւն նրա ներկայութեամբ ծուխ հանելու բերանից: Միւս եղբայրները քաշում են ծածուկ, իրանց սենեակների մէջ, Համարձակ հիւրերը ազատված են այդ արգելքից, ուստի ես և մուղսի Մկրտիչը ամենայն հպարտութեամբ հանում էինք մեր բերանից ծխի ամպերը: Մի-մի ֆինջան դառն սուրճ էլ խմելուց յետոյ ամենքս պատրաստուեցանք իսօսակցութիւն բանալու:

— Էսօր առաջնորդին գնացի, հաջի աղայ, — ասաց նրան Յովհաննէս աղան:

— Ե՞ս, ընդունեց հրաժարականդ:

— Ձեր ընդուներ, բայց հազար ջորով համաձայնեցուցի:

— Օրհնեալ է Աստուած:

<sup>5)</sup> Այս դարձուածը թիւրքերէն է: Թիւրքը երբէք չէ ասում սիզարայ կամ թիւթիւն քաշեր, ծխեր, այլ անպատճառ վեմեր (իշմաք):

— Բայց մի պայման դրեց. պէտք է մեղմէ մէկը  
անպատճառ թալական<sup>6)</sup> մայ:

— Ալլահ, Ալլահ...

— Կարելի չէ, հաջի աղայ, — Հանդարտեցնում  
էր նրան առաջինը, — դու գիտես մեր տան անսւ-  
նը. Ժողովուրդը իրար կանցնի: Կասեն թաղա-  
կան խորհրդարանը կը քակենք, եթէ շըմշենց  
տնէն էնտեղ մարդ չը տեսնենք: Առաջնորդը  
քանի դիր ուղեց «Պահպանիչ», ասել վրաս, չը  
թողի: Վերջն էնպէս կարդագրեցինք, որ Պօղոսն  
երթայ իմ տեղ...

— Ես էն խենթերի հետ դործ չունիմ: — աճա-  
պարեց Պօղոս աղան: Թաղական եղողը պէտք է  
իր բոլոր գործերը թողնի, որ ամեն մէկ խենթի  
հետ կոխւ անի: Մէկ չէ, երկու չէ, քանի մար-  
դու պէտք է բան հասկացնես. եօթ թաղական,  
ութ վարժապետ: չորս քահանայ, մէկ հարիւր  
հատ էլ ուրիշ խենթեր... Բան կասես, կը համո-

<sup>6)</sup> Ըստ Սահմանադրութեան, տաճկահայոց ամէն մի  
թաղ ընտրում է իր ազգային գործերի համար եօթ-  
կոկոց բաղկացած մի հոգաբարձութիւն: Այդ վարչու-  
թեան անդամները (Թաղական, են կոչվում և նրանց  
գլխաւոր պարտաւորութիւններն են: 1) Թաղի եկեղե-  
ցին պայծառ պահել, 2) ուսումնարանը բարեկազմել,  
3) թաղեցինքը վիճերը քննելու ու վիճողներին հաշ-  
տեցնել, 4) Թաղի ազգատների համար եկեղեցու ար-  
դիւնքներից ապօռուս հայթայթել:

զես, խորհուրդ կը տաս: — իզնուր: ո՞վ է հասկա-  
ցող. — չահմանադրութեան տետրակը կը բա-  
նան, կը խճեն աչքեր...

— Սահմանադրութիւն... հառաչեց հաջի  
աղան: Խոր հոգոց հանելով:

— Փուճ էլնի էտա Սահմանադրութիւն, — վրայ  
բերաւ զայրացած պ. Պետրոսը — ամեն տղու բե-  
րան երեք կանգուն լեղու կայ մըկայ (Հիմայ):

— Որդի, Յովհաննէս: — դարձաւ հաջի Ստե-  
փանը փաղաքշանօք դէպի նա — Պօղոսը աղորթ  
(Ճշմարիտ) կասի: Մեր տան պատուին կը վայելի:  
որ ամեն մարդ հաչի վեր ձե... «Տէ՛ր, վեր պահա-  
պան բերանոյ իմոյց... Պու գիտես Զըմշենց տան  
անուն. մեր խօսքը՝ խօսք էր, — ո՞վ կրնար դէմ  
դնել: Ժողովուրդը փորձած էր, որ մենք իր բա-  
րեկամն էինք, իր հայրն էինք: աղէկ կուզէինք,  
գէշէինք ուզեր: Քանի զրադաց շինեցինք՝ քանի  
արտ առինք, քանի խանութ «վագըֆ»<sup>7)</sup> անել  
տուինք... եկեղեցին պայծառ ացուցինք: Վարժա-  
րան շինեցինք, վարժապետ կարգեցինք: Քառա-  
սուն տարի մեր հանգուցեալ Աւետիս եղբօր  
հետ երէցփոխութիւն արինք, մեր կարողութիւնը  
փշացուցինք, որ ինչ է Աստծոյ տունը շինուի:

<sup>7)</sup> Վագըֆ, անել (թիւրքերէն) որ և է շինութիւն,  
ասել է զայն եկեղեցապատկան դարձնել:

մեր տղաների հացը կտրեցինք, որ ինչ է ազգի տղաները անուսում չը մնան...

— Ինոր համար էսօր մեր պատիւը կը պահէն, նկատեց հեգնօրէն պ. Պետրոսը.

— Ա թի, Պետրոս, — պատասխանեց ցաւով ծերունին, — մեր պատիւը Աստուած պիտի պահէ, չէ թէ երեկվայ նորելուկները։ Մենք ի փառս Աստուծոյ ենք աշխատել չէ թէ մեր, Բայց մի՞թէ մեզ պատիւ կը պահսի։ Քանի՞ տուն գլուխ Աւանայ մէջ, որ 2ըթչենց չափ պատիւ ունենան էս դառն ժամանակի մէջ... Բայց «Վայ քաղաքին այնմիկ, որոյ թագաւոր մանուկ է»... Մըկայ պատիւը պատուաւորինը չէ, որդի... Կասեն հաւասարութիւն է։ սահմանադրութիւն է... կասեն ամեն մարդ պատիւ ունի... — Ճերունին շեշտեց այդ քամեն մարդը։ մի առանձին ցաւով ելուց յուզմունքից։

Բայց պէտք է ասած, որ հակառակ պ. Պետրոսի գժգոհութեան, 2ըթչենց տունը պահպանել էր դեռ ևս մեծ հեղինակութիւն, մանաւանդ ուամիկ ժողովրդի առաջ, որ զիտէ յիշել իր մեծ բարերարներին։ Առաջ բերեմ այստեղ մի իրողութիւն, որ կարող է ամեն ինչ պարզել։ 2ըթչենց թաղի եկեղեցին փոքր ինչ հեռու է բնակութիւններից։ մի ձորակի մէջ Ամբողջ 30 տարի, երբ կիրակի առաւտօններ ժամը կարձակուէր, երեք հարիւրի չափ ժամաւորները սպասում էին, որ

Նախ մուղսի Աւետիս և Ստեփան աղաները դուրս ենեն։ Երբ նոքա դանդաղ քայլերով կը շարժ։ վէին դէպի տուն, այդ ահոգին ամբոխը հետևում էր նոցա քայլ առ քայլ առանց առաջն անցնել համարձակվելու։ Այդ սովորութիւնը վերջացաւ միայն քանի մի տարի առաջ մուղսի Աւետիսի մահուան հետ։ երբ «նոր մարդոց» կարծիքով մեր դարն արդէն փոխվել էր։

— Ինչո՞ւ չէք խօսեր, — դարձայ ես մուղսի Մկրտիչ աղային, կամենալսվ խօսակցութիւնը վերականգնել։

— Ի՞նչ խօսեմ։ Ես մտիկ կանեմ<sup>3)</sup>... Կասեն ժամանակը փոխվել է, մենք հինցեր ենք... Թող Շնորերը, գործեն, ինչո՞ւ մենք իզուր արգելք գառնանք։ Ներկայ թաղականութիւնը երեք տարի է որ կը գործէ, ի՞նչ է աւելցուցերնա եղածներին։ Քտնի՝ դիր գնացի խորհրդարան, որ տեսնեմ թէ ինչ կանեն։ — Օրակարգը կը նայեն — կը հանեն վարժապետի մը հրաժարական։ Կը կարգան էտա հրաժարական, կը վիճեն, կը կռւեն, վերջը նսմակ կը գրեն էտ վարժապետին թէ առժամանակ էլ շարունակիր պաշտօնդա... Էլ չեն մաածեր թէ այդ առժամանակէն յետոյ նա

<sup>3)</sup> Վասպուբականի լեզուով «մտիկ անելը — ը նայել չէ նշանակում, ինչպէս կովկասում, այլ լուել»

Նորէն պիտի յուղէ իր խնդիր<sup>9)</sup>... Նախսա (ինչեւ իցէ), էտա ինդիր կը վիրջանայ, Կիրիշկեն (կը նայեն) երկրորդ օրակարգին. կը հանեն թաղականի մը հրաժարական, նորէն նոյն կադու կոփւ. կը պոռան, զիրար կը վիրաւորեն, անդամները մէկ մէկ սենեակէն կը փախնճն, նիստը կը փակուի... գալ կիրակի նորէն կը գան—էլ մը էն տեսարան...

— Էֆէնդի', — գարձաւ դէպի ինձ ծերունի Ստեփան աղան— էֆէնդի': Սողոմոն իմաստուն կասի թէ «Մի յանդիմաներ զշարս, զի մի՝ առեսցեն զիբել», Երբ տեսնես որ մէկը կուրախանայ իր արած չարութեան վրայ, էլ նրան խրատելդ քանի փարայ կարժէ, «Որ սիրէ զիրատ՝ սիրէ զիմաստութիւն», կասէ Գիրքը:

— Գրքի գարն անցել է, հաջի աղայ, — ասաց պ. Պետրոսը մի առանձին հեգնութեամբ.

— Ա'ն, Պետրոս, — հառաշեց ծերունին— դու ինչու սկնայ (այսպէս) ծուռ ծուռ խարիներ<sup>10)</sup> կուտաս, Դու Գիրք կարդացած ես, որ էտա խօսք կասես: Ես գաղէթաներ ու վէպեր չեմ կարդար.

<sup>9)</sup> Վանցիք հայցակտն հոլովլ դործ են ածում մեծ մասամբ առանց ըստ ձայնաւորի, յար և նման վիրախոս Կովկասահայերի:

<sup>10)</sup> «Խաբար», բառը, որ առևելեան լեզուների մէջ լուր, համբաւ է նշանակում, վասպուրականցիք գործ են գնում փօսքը բառի տեղ:

բայց կը տեսնամթէ կարդացողներ ի՞նչեր կանեն: Դուրբան էնեմ էսա Գրքին, — ասաց նա ձեռը զարնելով գոլարի մէջ զրված Աստուածաշնչին. Քանի որ մեր ազգ էսա Գիրք մոռնայ, ուրախ օր պիտի չը տեսնայ... Աստուած որ մեզ էս Գիրքը տուաւ, մէկ տարվան, հարիւր աարվան, հազար տարվան համար չէ, — ինչպէս Դաւիթ մարդարէն էլ կասի թէ «Հազար ամ յաշս Տեառն որպէս» օր երէկի զի անց՝ հապա յաւիտենական է, անսահման է: «Եզդ գայ և ազդ երթայ և երկիրս յաւիտեան կայ»...

— Որքան էլ կրօնասէրները լաւ մարդիկ Խեն, — ասաց Պետրոսը ամենայն անհամեստութեամբ — ես չեմ կարող լնդունել որ նրանք պարբռութիւն թիւն տան աղքատներին:



Մի ակնթարթում ամենիս խաղաղութիւնը վըրդ դովեցաւ. կարծես մի որոտընդուստ կայծակ ջարդ ու փշուր արաւ մեր սրտեր: Հաջի աղան լեցվեցաւ մի անասելի դառնութեամբ: Մուղսի Մըկրտիչը իր աչքերով սաստիկ կշտամբում էր պ. Պետրոսին. Յովհաննէս աղան Պօղոսի յետեւ մէկ հատ զարկեց Պետրոսի մէջքին, Ես անյարմար էի զգում իմ ներկայութիւնը: Եթէ որ և է անհամենթիւն ծագէր, Պօղոս աղան էր միայն որ զգում էր մի ներքին բաւականութիւն իր գաշնակցի նկատողութեան համար, թէև այդ՝ գաշնակցի նկատողութեան համար:

արտաքուստքիչ էր ցոյց տալիս, Տիրեց մի բօպէական լոռութիւն:

—Որդի՛, —պատասխանեց նրան հաջի աղան՝ հաղիւ իր արտասուգը զսպելով—որդի՛, ես որ ողորմութիւն կանեմ՝ քո՞ վաստակէն կանեմ թէ ի՞մ վաստակէն...

—Ո՞վ կասի թէ իմ վաստակէն կանես, —ըըշնաց պ. Պետրոսը կորազլուիս:

Անցաւ մի լուռ բօպէ էլ:

—Եփէնդի՛, —դարձաւ ինձ հաջի Ստեփանը, ճիզ թափելով ցրվել իր տիրութեան մոայլը— Եփէնդի՛, մեղաւորիս կարծիքով քրիստոնեան երեք մեծ պարտք ունի կատարելու. ժամ երթալ, պահք պահչել և ողորմութիւն անել:

—Այո՛, —ասացի ես ամենայն հաստատամոռւթեամբ:

—Բայց պատահած է, հաջի աղայ, շարունակեցի ես, որ կեանքիդ մէջ պահք լուծած լինիս:

—Հրաման քե, հրաման քե, երկու դիր. Պոլիս ես շատ հիւանդի (էի.) երբ առողջացայ, լսեցի որ ընկերներս խաբեր էին ձիկ (ինձ), զատիկ աւուր կեր (կերակուր) էին տուեւ. Մէկ էլ էտա պուճախ (ցոյց տալով) օր մը պանրի կտոր էր ընկած, առի դրի բերանս, Ծամած գեախ

(Ժամանակ) միտս եկաւ որ պաս է. Շնալաթ<sup>11)</sup> քե չար սատանայց ասի ու թքեցի դիւս: Էսա րան մէկ քսան տարվան խօսք է. Մեր թաղ տէր Միքայէլ անունով քահանայ մը կար: Խոստովանքին պանրի կտորի համար ինորմէ թողութիւն ուղեցի: — «Ինչո՞ւ, ասաց, պանիրը բերանդ գնելուց առաջ լաւ չը մտածեցիր՝ պահք էր թէ ուտիք,» — «Տէր ողորմեա, ասացի, ես կարծեցի թէ ուտիք է, ել ինչչն (ինչպէս) մտածէի:» — Ասաց ու կուշտ խնդաց ծերունին, «մեղայ Աստուծոյց ասելով:

Ընդհանուր ծիծաղից յետոյ տիրեց մի կարձ լութիւն:

—Տղաներ, կասեն թէ գուք լաւ երգեր գիւաէք. Ճիշտ է, —դարձայ ես երեխաներին և, տեսնելով նրանց պատրաստականութիւնը՝ «Հրաման կանէք, հաջի աղայ, որ մէկ հատ երգ ասեն, հարցուցի:

—Երգէք, տղեներ, —լսվեցաւ հրամանը, նրանք երգեցին բաւական լաւ մէկ երկու րան, Պէտք է ասած, որ Աանայ ուրիշ տղաները տաճկերէն երգեր էլ գտան, Բայց Զըթչենց գերդաստանին անմատչելի են նրանք, ինչպէս նաև անմատչելի են, հակառակ Ընդհանուր

<sup>11)</sup> Շնալաթ, ըառը, որ գործածական է նաև մեր կողմբ, կետաքքքիք աղաւաղումն է արաբական զանէթ, մեր (նզովք):

սովորութեան, տաճիկ հիւրերը, «Որ տուն որ  
տաճիկը ուզք կոխէ—ասում էին հաջի աղան և  
իր հանգուցեալ եղբայրը—էնտեղ բարոյականու-  
թիւն չի լինի»:

—Կասեն Ստեփան Եպիսկոպոսի, գերեզմանի  
համար Բաղեշին մարմար քար պիտի բերեն,  
խօսեց Յովշաննէս աղան:

—Կուզեն թռ' ոսկի քար բերեն, —յարեց Պո-  
ղոս աղան—Եպիսկոպոսի արձանը ժողովրդի  
սրտի մէջ պէտք է լինի: Աչքածակ Ստեփան  
Եպիսկոպոսը միշտ Ստեփան Եպիսկոպոս պիտի  
մնայ...

—Մի՛ ասեր, որդի, մի՛ ասեր,—աղաջում էր  
Ստեփան աղան: —Մեռելի վրայ խօսել լաւ չէ.  
Ընորհալին կարդա, տես ի՞նչ կասի:

—Եղիշէն էլ ուրիշ բան կասի, —պատասխա-  
նեց Պողոս աղան:

—Ի՞նչ կասի:

—Կասի թէ «Գրեցաւ յիշատակարանս այս  
վասն նորա (Վասակայ) առ ի կշտամբումն  
յանդիմանութեան մեղաց նորա. զի ամենայն,  
որ զայս լուեալ գիտասցէ, նզովս ի հետ արկցէ  
և մի՛ լիցի ցանկացող գործոց նորա»:

—Աղէ՛կ, Վարժապետ, Ընորհալի՞ն է ջոջ  
(մեծ) թէ Եղիշէն, —Հարցուց ինձ ծերունին:

—Ընորհալին, պատասխանեցի ես:

Լրօնականյաղթանակի հրձու անքը լշու տուեց  
նրա հանգած աչքերին:

—Հաջի աղայ, հբաման կանե՞ս աղօթքի կայ-  
նենք (կանգնենք). յոգնած ես, հանգստացի՛ր, —  
դիմեց նրան մահտեսի Մկրտիչը:

—Հա՛:

Անմիջապէս երկու տղաներ օգնեցին հաջի ա-  
ղային ոտքի կանգնելու: Ամենի երեսը գարձաւ  
դէպի արևելք, Խորհրդաւոր լուութիւն և կրօ-  
նական պատկառանքը տիրեց սենեակի խուռն  
բազմութեան մէջ:

—Հայր մեր որ յերկինս... —լսվեցաւ հաջի  
աղայի լուրջ, յստակ ու հանդիսաւոր ձայնը՝  
Եպիսկոպոսի մը ամենայն փառահեղութեամբ:  
—«Անկանիմք...» —սկսեց մուղսի Մկրտիչ  
աղան:

—«Ընկալ քաղցրութեամբ...» —արտասանեց  
Կարեկացու զգայուն և երկար աղօթքը՝ Յով-  
հաննէս աղան:

—«Աստուած յաւիտենական...» —սկսեց Պո-  
ղոս աղան:

—«Հաւատառվ խոստովանիմ.» —լսվեցաւ նո-  
րից ծերունի Ստեփան աղայի հաւատաբուղի  
ձայնը:

Ներսէս Ընորհալու այս հոչակաւոր աղօթքը,  
ինչպէս յայտնի է, բաղկանում է 24 կտորից  
(տնից), Հաջի աղան ասում է միայն մի կտոր:

Երկրորդը, երրորդը և հետևեալները ասում են կարգով աղաներն ու տղաները, 10—12 հոգի իրանց բաժինը արտասանելուց յետոյ, կարգը նորէն սկսում է հաջի աղայից և շարունակվում մինչև 24-ր տունը, ինչպէս առհասարակ, մասնաւանդ սոյն աղօթքի ատեն, տեսնվում է անընդհատ ծունրադրութիւն, Զորս—հինգ տարեկան տղաներ, <sup>(12)</sup> գեռ ևս քիչ վարժ այդ բանին, գլորվում են յաճախ՝ քիթը ջարդելով, Բայց ընդհանուր լրջութեան մէջ այդ բանը անկարող է լինում շարժել մինչև իսկ երեխաների ծիծառը:

— «Եւ վասն սրբոյ Աստուածածնի...» — սկսում է նորէն հաջի աղան,

— «Սուրբ Աստուածածին...» — արտասանում է զել ձայնով փոքրիկ տղաներից մէկը,

— «Հայր մեր որ յերկինս...» — բաժին է ընկնում նորից հաջի Ստեփանին,

— «Զ. հանգստեան զաղօմս...» — յարակցում է գարձեալ նաև,

— «Փառք քեզ Աստուած...» — ասում է տղաներից մէկը,

— «Յ. օ-գ-ն-ո-ւ-թ-ի-ւ-ն մ-ե-ե-զ ժ-ա-ա-մա-նեա...» — երգում է մենակ ութսունամեայ ծերունին իր դողդոջուն, անոյշ և հաւատալից

<sup>(12)</sup> Տաճկայայերը երկու սեռի փոքրիկ մանուկներին էլ տղայ, են անուանում Սեռը զանաղանելու համար միայն աւելացնում են, մանչ տղայ, «աղջիկ տղայ»:

ձայնով՝ շարականի այդ սկիզբը և յետոյ յանկաբծ ամբողջ բազմութիւնը մի սրտատրով բեկրեկով շարունակում է այն...

Սիրտս լ ցվում է և ընկղմում եմ խոր մտածմունքի մէջ: «Որտեղ եմ այս հարցնում եմ ինքս ինձ: «Մի՞թէ եկեղեցումն եմ... բայց ոչ՝ ասում եմ ձեռքս արհամարհանքով շարժելով՝ ոչ այնտեղ ամեն ինչ վարձով է, չինծու է, պաղ է, մրմունջը: և' Սաղմոսը և' պատարագը»: — «Ենտեղ ամեն ինչ վարձով է, չինծու է, պաղ է, շարունակում եմ ես: Խորասուզվում եմ հեռու, հեռու անցեալի մէջ. հայոց հին, բարեպաշտական կեանքը իր բոլոր մերկութեամբ բացվում է աչքիս առաջ, «Սաղմոսք էին մշտընջենաւորք՝ մրմունջք ի բերանս նոցա և միսիթարութիւնք կատարեալք՝ ընթերցուածք մարգարէիցն»: — «Եւ զանձինս իւրաքանչիւր վկայարանս համարէին և զշինուածս մարդկեղէն»: քան զշողելէնս հաշուէին: Սուրբ սպանողացն ըթեցան և նոցա պարանոցքն ոչ ձանցրացան: աւարառուք ստացուածոց նոքա աշխատեցան և աւարն օր քան զօր աձեցեալ բազմացաւ...»

Ուրեմն ես գտայ ինքզինքս կատարելապէս Եղիշէի դարում: Հարականը երկար շարունակվեցաւ նոյն անկեղծ և սուրբներդաշնակութեամբ: Մանկիկները թառնում էին նոր ամէջ իրանց մըտացածին ու անկապ վանկերը, բայց բոլորը՝

ծեր և մանուկ), երիտասարդ ու հասակաւոր, մինչև իսկ նա ինքն՝ այն պաղ ու կրօնատեաց բանաստեղծ պ. Պետրոսը, —բոլորը, բոլորը, ասում եմ, կամայ թէ ակամայ, լեցված էին նոյն և մի մաքուր ու վեհ զգտցմունքով, յար և նման պատմաբանի վկայութեան, թէ «Առհասարակ զմի զինուորութիւն զինուորեցան և զմի ադան զրահս հաւատոյ պատուիրանին Քրիստոսի. միով գոտեաւ ճշմարտութեան պնդեցին զմէջս արբ և կանայք»:

Եւ պէտք է ասած, որ կանայք անմաս չէին այդ զինուորութիւնից, Զըթչենց պէս նահապետական տան մէջ նոքա առանձին են աղօթում բայն ուրիշ տեղեր նրանք էլ են միանում այրերին:

— «Առաջի պատուական ամենայաղթ...» — ասում է աղաներից մէկը Շարականից յետոյ:

— «Հայր մեր որ յերկինս...» — լսվում է վերջին անգամ Ստեփան աղայի ձայնը և տէրունական աղօթքին կցելով նաև քահանայական «Երթայք խաղաղութեամբ և Տէր Յիսուս Քրիստոս եղիցի ընդ ձեզ և ընդ ամենեսին, ամէն» մաղթանքը — խորին յարգանօք մօտենում ենք ամենքս համբուրելու այդ «Ժամ արձակողի»-ի թոռոմած ձեռքը և բարի գիշեր մաղթելով ցըլում ենք սենեակից...

Արօնասիրութիւնը չամարհող ընթերցողներին առաջարկում եմ աչքի անցնել յիշեալ աղօթքների ամբողջութիւնը մեր «Ժամագրքերում»... Դրանովն բանք կարող են փոքր ի շատէ գաղափար կազմէ Զըթչենց տան հանապազօրեայ բարեպաշտական հանդէսի վրայ: Ասում եմ «Վիոքը ի շատէ», քանի որ աղօթքի հոգին ոչ թէ չոք ու ցամաք ընթերցման, այլ սրտաբուղիս արտասանութեան մէջ է կայանում: Զը մոռանանք նաև աւելացնել, որ մեծ պասի օրերին յիշեալ աղօթքների թիւը կրկնապատկվում է և քանի մի շարական էլ աւելանում մեր վասպուրականցիների գէթ մի քանի հին տների ընտանեկան-կրօնական հանդէսներում: Այն ժամանակ արարողութիւնը տեսում է մօտ 2 ժամ և այդ՝ ամեն երեկոյ...

Բ.

Մեր գուրս գալուց յետոյ մեր սիրելի հաջին մնում է մենակ: Դրացի սենեակից տան մանկամարդ հարսները բերում են նրա անկողինը և նա մտնելով այդ նախապատրաստական գերեզմանը, քնում է իր անմեղ ու անվրդով քնով:

Աղաները իրանց տղաներով բարձրանում են շինութեան վերին մասերը, իրանց յատուկ բնա-

կարանները, Նրանց կանայքը նոյնպէս, դուրս ե-  
լած տան-տնից օրօրոցներով ու ծծկեր մանուկնե-  
րով, սպասում են ննջարանում իրանց շաղանե-  
րին։ Քառորդ ժամփց յետոյ ամբողջ տունը մը-  
րափում է արգելն խոր քնի մէջ։

Պ. Պետրոսի հետ բարձրանում ենք իր առանձ-

նասենեակը, Մենք դու մի երկու ժամ էլ կարող  
ենք աղատ խօսակցի։

— Սամովար կուղե՞ս դնենք, — հարցնում է նա  
ինձ։

— Դնե՞նք։

— Բայց այս զիշեր դու պէտք է այստեղ մնաս-  
նոր ոտանաւորներ եմ զրել, կարդանք։

— Լաւ կը լինի, — համաձայնում եմ ես։

Գցում ենք միասին սամովարը և նորից մը-  
նում սենեակ։

Իբրև «նոր սերնդի ներկայացուցիչ», պ. Պետ-  
րոսը ունի աթոռներ, զրասեղան և քանի մի կը-  
տոր զիրք, որոնց մի մասը ուղարկել էր Պօլսից  
իր ողբացեալ Կարապետ եղբայրը, իսկ մնացածը  
հաւաքւած էր զանազան անձերից կարդալու հա-  
մար։

Նա կարդում է իր «երգերը» — ինչպէս ինքը  
սովորութիւն ուներ ասել — ոտից ցղլուխ յափըշ-  
տակված, իր արտօնութեամբ ես ընդհատում եմ  
երբեմն նրա ընթերցանութիւնը և անում թեթև  
դիտողութիւններ, ևսում եմ «թեթև», որովհե-

նա չէ ախորժում «ծանր» տեսակից։ Կարդալուց  
յետոյ նա մտցնում է նոցա մէջ ինչ ինչ փոփո-  
խութիւններ, համաձայն յայտնված նկատողու-  
թիւնների։

Նրա «երգերից» մէկը սկսւում էր այսպէս.

Անի, երանի՝ այն օրին։

Երբ ես յանկարծ արթնցած, որի սեմբան

Առաւօտեան զեփիոռով

Խաչդրօշ տեսնեմ ծածանուած։

Բայց նա շարունակվում ու վերջանում էր ա-  
ւելի մեծ ու վեհ իղձերով։ Նրա հայրենասիրական  
երգերը շատ նման էին իրար և գրեթէ ամեն մի  
երգի ընթերցումից յետոյ միշտ գալիս էի ես այն  
եղրակացութեան, թէ մեր բանաստեղծը ուզում  
է, որ ամեն ինչ իր քնած ժամանակ կատարվի։

Յետոյ երգում էինք, թէյ էինք խմում ու խօ-  
սում ձեմելով սենեակի մէջ։

— Հաջի աղան ծանօթ է քո երգերին, — հար-  
ցուցի ես մի անգամ։

— Անի... մարդ գտար դու էլ, «Աքաղաղն ինչ  
գիտէ, թէ մարդարիտն ինչ կորադար է»<sup>18)</sup>, Հա-  
ջի աղային պէտք է Շարական տալ որ կարդայ։

<sup>18)</sup> «Կորադարը»-ը վանցիների լեզուով իսկապէս  
առէլ է Ժանզուտված և անպէտք երկաթի կտոր, ըայց  
մեծ մասամբ նըանք այդ բառը գործ են դնում մեր  
կահըումարի, մտքով։

— Հաւ իրաւ ։ — Հարցուցի ես մի բօպէական  
լոռութիւնից յետոյ ։ — դու ինչո՞ւ այդքան կծու  
դիտողութիւններ ես անում հաջի աղային ։

— Պէտք է նրա փտած գաղափարները ջարդել ։

— Բայց դու կը յուսամս որ նա իր ութսուն  
տարվան գաղափարները թողնէ ։ Դու պէտք գառ-  
նացնես իզուր նրա վերջին օրերը և ուրիշ ո-  
չինչ ։ Եւ մի՞թէ ձշմարիտ դու այդքան վնասա-  
կար ես համարում կրօնասիրութիւնը ։ — աւել-  
ցուցի ես մի մտերմական փաղաքշանքով որպէս  
զի շատ չը գրգռեմ խօսակցիս ։

— Դու կերևի չես գիտեր ։ որ հաջի աղան մեր  
տունը կը քանդէ իր այդ կրօնասիրութեամբ ։

— Իրա՞ւ բացականչեցի ես զարմացմամբ ։

— Հապա՞ինչ կը կարծես ։ Ամիսը երկու ոսկի  
փարայ կը տանք իրեն ։ և ի՞նչ կը կարծես,  
ի՞նչ կանի էդ փարաները ։

— Ի՞նչ կանի ։

— Բռնել է թաղի մէջ չորս հինգ մարդու ամ-  
սական է կապել ։ Մէկը որպէս թէ վարժապետ  
է ։ տասը տղայ ունենալու համար չէ կարող շա-  
հութի ։ Միւսը ծեր քահանայ է ։ «պարտքեր  
ունի» ։ երրորդը այրի կին է ։ չորրորդը կայր է ։  
հինգերորդը՝ չեմ գիտեր ինչ ջայնամ է ։

Ես դիտում էի ապշած ։ կարծես չը հաւա-  
տալով թէ այդ մեր բանաստեղծի խօսքեն  
են ։

— Կը տեսնես մարդ մը մեղ փարա պարտ է ։  
շաբունակեցնա զայրոյթով ։ — ինքզինքը աղքա-  
կը ձեւացնէ ։ կերթայ կը նկնի հաջի աղայի ոտներ ։  
Հաջի աղան էլ կառնի ամենայն պարզամտու-  
թեամբ մեր մուրչակը կը պատռի ։ Կը հաւա-  
տաս էս բաներին ։ — Հարցուց նա ինձ ։

— Ինչո՞ւ չեմ հաւատար ։ ասեցի ես այնպիսի  
պարզութեամբ ։ որից նա ոչինչ չը գուշակելով  
շարունակեց ։

— Դու լսե՞լ ես ։ որ այս կողմէր դրեթէ տաս  
տարին մի անգամ սովով կը պատահի ։ Գիտե՞ս թէ  
մենք այդ սովերին վնասներ կը կրե՞նք ։ — Մեր  
ամբարները ։ փառք Աստուծոյ ։ միշտ լեցուն են ։  
Բայց մեր ցորենի կէսը ։ հաջի աղայի և իմ հան-  
գուցեալ հօրս շնորհիւ ։ լոռ-լոռ (ձրի) կերթար  
աղքատների տուն ։ Նրեակայիր ։ մարդ էդպէս  
ժամանակների կը սպասէ ։ որ ցորենը ծախէ ։ մի  
քիչ փարայ վաստակէ ։ — իսոնք կառնեն աղքատ-  
ները կը կշտացնեն ։ Դեռ այդ բաւական չէ ։ —  
շարունակեց նա յիշելով կարծես մի աւելի մեծ  
յանցանք ։ էս վերջին սովին (180) հաջի ա-  
ղան կերթայ ֆրոնին (փուր) ամսական կը կապէ ։  
որ տաս մարդուն մինչև սովի վերջը օրական  
երկու օխայ (14) հաց տայ ։

(14) Տաճկաստանում երկու տեսակ օխայ կայ ։ մէկը  
ժողովրդական ։ որ կաչում է կաշ աղաւար կաւասար  
է մեր 4½ գրվանքային ։ իսկ միւսը պետական (դքամ-  
դաշ) ։ որ Ճեղդ երեք ուռւսական ֆունտ է ։

— Յետոյ:

— Յետոյ ի՞նչ ։ ինքը իր խելքով կընտրէ մեր թաղի աղքատներից տաս հոգի և հացթուխին կը պատուիրէ, որ այդ մարդոց յայտնէ թէ մեղաւրը մարդու մէկը նրանց յատկացուցած է այդ օրական պարէնը: Նրանք էլ կը գան ամբողջ տասն ամիս առօք-փառօք կը տանեն իրենց որսը՝ մինչեւ իսկ բարերարնին չը ճանչնալով...

— Հաջի աղան ձեզ ժառտնդութիւն պիտի թողնէ՞ — Հարցուցի ես անտարբեր կերպով:

— Ի հարկէ պիտի թողնէ: Արդէն ամէն բան մեր ձեռքն է. . . Եօթ տարի առաջ նա իր բոլոր կարողութիւնը մեզ յանձնեց մի ընդարձակ կտակով, Մեր հարստութեան կէսը արդէն նրանն է. մենք այդ մասին բան չունենք ասելու: Բայց ինչո՞ւ պէտք է իզուր այդքան փարաները ջուրը ձգէ . . . թուշի, յիմար նախապաշարում, Աշխարհի մէջ ողորմութիւն անելու պէս զզուելի բան չը կայ ինձ համար . . .

— Եւ գիտե՞ս Նալբանդեանը ինչ կասի այդ մասին, — աճապարեց նա մի բօպէ լուր մնալուց յետոյ:

— Ինչ կասի:

— Կասի թէ «Ողորմութիւն անողը ամենայն անմոռութեամբ հաւատում է, թէ փող տալով և Աստծուն խարելով պիտի արքացութիւն երթայ»:

«Տես—մտածեցի ես—տես թէ ինչպէս այս մարդիկ գիտեն օրինակել Նալբանդեանից այն տողերը միայն, որ իրանց միայն ձեռնտու է»:

— Նալբանդեանցը ուրիշ շատ բաներ էլ կասիւ — դիտեցի ես, Ճիշտ նրա աչքերին նոյելով:

Նա հասկացաւ միտքս և պատասխանելէ ձեռնտու չը համարելով՝ լուց:

— Բայց մի բան կայ! — ասաց նա քիչ յետոյ մի առանձին մտերմութիւմը — մենք այնու ամենայնիւ կարող էինք մի փոքր ճնշում գործ գնել հաջի աղայի վրայ, բայց մեր մեծ հղբայրները այդ մասին բոլորովին տարակարծիք են, Մկրտիչ և Յովհաննէս «ախապերները», ինչպէս նաև հանգուցեալ Կարապետ «ախապերը», յար և նման են ու հետեւող հաջի աղային: Ես և Պօղոս «ախապերը» մէկ ենք: Բայց գուշ գիտես որ մեր մէջ մի անսահման սէր կայ, չենք ուզեր զիբարցաւցնել...

— Պարոն Պետրոս! — ասացի ես մի զգացված կարեցութեամբ — ես շատ եմ ցաւում քո յայտնած գաղափարների համար . . .

Նա նայեց վրաս իրրե մի կապելու իսենթի վրայ:

— Եյն, ինչ արել են ու անում են Ստեփան աղան ու մեծ եղբայրներդ և մանաւանդ հանգուցեալ հայրդ՝ է մի կատարեալ առաքինութիւն: Ես չեմ ասում, որ նրանք նուիրեն ուրիշներին

իրանց սմբողջ ունեցածը. դու տեսնում ես որ  
այդքանը անելով հանդերձ, նրանք թողնում են  
ձեզ մի կարողութիւն, որ նախանձելի է երևում  
քաղաքի շատ մեծատանց աչքում: Ես իբրև օտա-  
րական, աւելի լաւ. եմ նկատում թէ ինչ մեծ ժո-  
ղովրդականութիւն ունի ձեր տունը և այդ ուրիշ  
բանից չէ, բայց եթէ ձեր մեծերի բարերարու-  
թիւնից, արդարասիրութիւնից, ողորմասիրու-  
թիւնից, բարեպաշտութիւնից... Զըթչենց տու-  
նը շատ մեծ տուն է այսօր Աւանայ մէջ...

— Այդ ճշմարիտ է, — ասաց նա ակամայ, չը  
դիմանալով իր ինքնասիրութեան:

— Գալով հաջի աղային — շարունակեցի — ես  
կարծում եմ, որ նա հաղիւ թէ կարողանայ մի  
տարի ապրել...

— Հաւանական է, — աճապարեց նա մի առ ան-  
ձին ոգեսրութեամբ:

— Ուրեմն պէտք է թողնել, որ նա հանգիստ  
աւանդէ իր հօգին...

Ճիշդ այդ միջացին լսվեցաւ սանդուղտի վրայ  
ստի ձայն և պ. Պետրոսը նշանով արեց, որ չը  
շարունակեմ:

Ներքնաշորով երևեցաւ Պօղոս աղան, մի վե-  
րաբերուի մէջ փաթաթված:

— Ծօ. հարիֆ (մարդ), — ասաց նա դրան շէմ-  
քեց, ծիծաղելով: — Բերլինի վեհաժողով ունիք  
էստեղ, ի՞նչ է. էդքանդար խօսել կէլնի...

Աղէ'կ, խօսել կուզէք — խօսէ'ք, էդքանդար թրիսկ  
թրիսկ անելն ինչ է. նստէ'ք մի տեղ և էնպէս  
խօսէ'ք: Օ... (տեսնելով սամովարն և մօտենա-  
լով) հասկացայ հիմայ... զէ', մըկայ ինչքան  
կուզէք խօսէ'ք և քալեցէ'ք, — ասաց նա և սկսեց  
ամենայն ագահութեամբ չայ լեցնել:

Մենք էլ նստանք իր քով, աշխատելով ուրախ  
երևալ:

Տեղի ունեցան զանազան կատակներ:

— Քունդ չը տարած, ախպեր! — Հարցուց պ.

Պետրոսը:

Վասպուրականցիք շատ են սիրուն այս հախ-  
պեր, յորջորջումը: Երբ ընտանիքի մէջ երկու  
եղբայր կայ, անհնարին բան է, որ կրտսերը  
արտասանէ երբ և իցէ մեծի անունը: Նա միշտ  
ճանաչում է նրան «ախպեր» տիտղոսով: Բայց  
երբ ընտանիքի մէջ քանի մի եղբայր միասին  
խօսակցին, այն ժամանակ միայն փոքրը անում  
է մի յաւելում: «Պօղոս ախպեր» և այն, Սա-  
կայն մեծ եղբայրները դիմում են փաքրերին սոսկ  
նոցա անուանակոչութեամբ: Պօղոս, Յովհաննէս  
և այլն: Երբ նորածին երեխան սկսի թոթովել  
«մա» (մայրիկ) և «աղայ» (հայրիկ) բառերի հետ  
սովորում է նաև «պապերը» (ախպեր) և շատ  
երկար տարիներ նա չ ը զիտէ իր եղբօր իսկա-  
կան անունը ճիշտ այնպէս, ինչպէս — իր ծնողնե  
րի: Բացի այդ, ժողովուրդը սովորութիւն ունի

Նոյնպէս դիմել անծանօթ մարդոց «ախակեր» բառով, երբ պէտք լինի նրան որ և է բան հարցնել. — «ախակեր», քաղքի ճամբախ որ դեմն (կողմ) իւր նոյնը անում է նա, երբ պէտք լինի յիշել խօսակցութեան մեջ երրորդ անձի մը անունը. «Փանոս ախակերն էսպէս կամէր», եւ ես կարծում եմ, որ սա հայոց շատ հին, նահապետական սովորութիւն է եղել. Սակայն այժմեան քաղաքակրթութիւնը, որ ամեն ինչ տակն ու վրայ է անում, այստեղէլ չել թերա ել առնել իր տուրքը և «ախակեր» մտերմական բառին (ոչընտանեկան մարդոց համար) «աղայ», «էֆէնդի», և «պարոն» պատւանուններն են յաջորդել.

— «Օ՞», ի՞նչ քուն, —պատասխանեց Պօղոս «ախակերը» պ. Պետրոսի հարցման —բան կասեմ քեզ.. դուք վեր, ես վար—ձեր ոտի ձայնից կարո՞ղ է մարդ քնանալ, Ի՞նչ որ գիտնայի էս տեղ չայ կայ... Իրաւ որ ես էդքան մանգալ չեմ կարող... զրա համար է, որ խեղճ հաջի աղան ալաֆրանկայ<sup>15)</sup> բաներ չե սիրեր.

<sup>15)</sup> Տաճկաստանի բոլոր ժողովուրդները «ալաֆրանկա» ասելու սովորութիւն ունեն այն ըլորը կարգ ու կանոնին, էտեկտաներին, հագուստին և այն, որոնցից Արօպայիք համար է բուռնութիւն: Դրա հակառակն է ալաթիւրքան, որ տեղական, թիւրքական ասել է (ըստ եւրոպացոց, ըստ թիւրքաց):

Տիրեց մի փոքր լոռութիւն. «Մի երգ ասա՛, Պետրոս—խնդրեց մեծ, եղբայրը», Պ. Պետրոսը երգեց մէկի աԵլ երկուքը: —Տեսա՞ր հաջի աղան ինչպէս յաղթեց ինձ քո օգնութեամբ, —դարձաւ դէպի ինձ Պօղոս աղան: —Է՛՛, ծերացել է խեղճը, ի՞նչ կուղեք իրմէ, —նկատեցի ես.

— Ո՛վբան կասի, —ասաց նա, ուշագրութեամբ շնելով պ. Պետրոսին, թէ մի՛ գուցէ մէկ բան տեղի ունեցած է: Միայն «խեղճը» այնպիսի բանը կանի, որ մեղքս կու գայ—շարունակեց նա իր ծանօթ քաղաքագիտութեամբ: Երէկ էլ նոյն նիւթերի վրա խօսք բացուեցաւ, — «Ղուրբան էլ նեմ, ասաց, վարդապետների ոտաց», — «Վայ, հաջի աղայ, ասի, ինչքանդար վարդապետ, վեղարաւոր կայ, թո՞ղ բիւթիւնն էլ (բոլորը) դուրբան էլնեն քո ոտաց», Ասաց. «Տէ՛ր, դիր պահապան բերանդյ իմյայ, բայց էլ չը բարկացաւ.

— Դէ՛ հերէք խօսեցինք, —շարունակեց նա երրորդ գաւաթն էլ պարպելով—կէս գիշեր է, պառկենք, որ առաւօտ շուտ ելնենք վեր... Բարի՛ գիշեր:

Սենեակի պահարանից երկու ձեռք անկողին հանելով, մենք էլ մտանք վերջապէս Մորփէոսի գիրկը:

Առաւօտը շատ կանուխ ելնելով և պ. Պետրոսին քնուծ թողնելով, գնացի դեպի տուն. Ճանապարհին հանդիպեցայ հաջի աղային, որ ձին հեծած, երկու մշակների օգնութեամբ վերադառնում էր եկեղեցուց:

Տունս հասնելուց առաջ, եթէ կը հաճիք, պատմեմ ձեզ թէ ինչպէս պիտի անցընէ այդ օրը մեր ալեոր մուղսին:

Տարվայ բոլոր լի օրերը անցնում են մուղսի Ստեփան աղայի համար կատարեալ միօրինակութեամբ: Հատ կանուխ, զեռ ևս Ադամայ մութը չոխած, նա արթնանումու ճրագը կպցնում է: Լուացւելուց յետոյ ամբողջ մէկ ժամ բազկատարած ու ծունը դրած, աղօթում է: Ազօթը ների մէջ զլխաւոր տեղ է բռնում Սաղմոսը, որ նա ծայրէ ի ծայր դոց զիտէ և որից նա պիտի արտասանէ այդ պահուն ամբողջ մէկ կանօն, այսինքն նրա գլխների մի ահագին քանակութիւն: Մէկ ժամէն յետոյ կը գայ ժամկոչը իր կոչնակով և պինդ կերպով կը տփէ փողոցի բոլոր դռները: «Ոչնակ» զարնելը հայոց հին, կամաւոր սովորութիւններից չէ: Մահմետական մոլեռանդութիւնը արգելել է նրանց զօղանջեցնել եկեղեցու զանգերը և առիթ տուել հնարելու այդ անպաճոյն գործիքը: Դա մի կիսաբոլորակ տախտակ է, որ կախ է ձգում ժամկոչը իր վզից և փայտէ մուրճը զարնելով, պտտում փողոցները:

Նա մօտենում է նոյնպէս ամէն մի դրան և նրա «Ճկիկը» բռնելով, ծեծում է պինդ կերպով ու երգի ձայնով «Ողորմի Աստուած» ասում: Տան մէջ ամենքը զարթնում են և ուզողը պատրաստվում է գնալ եկեղեցի: Քրիստոսի այդ համեստ պաշտօնեան այստեղ թոյլ է տալիս իրան ծանրացնել փոքր ինչ իր հոգին, նա աւելի պինդ ու երկար է բաղխում հարստի, քան աղքատի գուռը: Եւ մեր տաճկահայ կրեսոսները մե՛ծ, խի՛ստ մեծ պատիւ են համարում այդ իրանց...

Իսյց մութը շարունակում է և հաջի աղան երկու մշակների օգնութեամբ ու զկորվում է գէպի ժամ: Նա Ճամբան պէտք է մրժնջայ անպատճառ Սաղմոսի քանի մը գլխներ, մինչև եկեղեցի համելը: Նոյնը անում էր նա մի քանի տարի առաջ նաև շուկայ գնալիս, որ իրանց տնից մօտ մէկ ժամ հեռու էր: Փակագծի մէջ աւելացնենք նոյնպէս, որ երբ նա իր Ճամբորդութեան միջոցին հանդիպէր քըխտոնէի մը գերեզմանին, անմիջապէս կը կանգնէր, գլուխը կը կռացնէր ու «Հոգւոց» կասէր վրան:

Ժամէն վերադառնալուց քիչ յետոյ, երկրի սովորութեան համեմատ, նա կուշտ ճաշում է, ի հարկէ այն խմբի հետ, որ երէկ տեսանք: Այսուհետև սենեակի բազմութիւնը նորէն ցըրվում է, բայց երկու մասի բաժանվելով: Անծագոյն մասը գնում է շուկան, փոքրագյնը —

կրթարան։ Հաջի աղան սկսում է զբաղվել հիմայ իր գրադարանի հետ, որ ամփոփված է իր մէջքի յետև եղած դոլարում (պատի մէջ), նրա այդ գրադարանը պարունակում է իր մէջ մշտապէս՝ 1) Աստուածաշունչ, 2) Սաղմոս, 3) Նարեկ, 4) Շարական, 5) Վարք սրբոց, 6) Ժամագիրք, 7) Ներսէս Ընորհալու հաւաքածուն, իսկ պատահապէս կարելի է այնտեղ դժնել նաև ուրիշ կրօնական գրքեր և 2ամշեանի պատմութիւնը։

Հաջի աղան կարդում է (առանց ակնոցի) այդ գրքերը փոփոխակի գրեթէ ամէն օր։ Սաղմոսին երբեմն նայում է միայն ձեւի համար, զի ամբողջը գոց գիտէ և կտոր կտոր ասելով, նա աւարտում է միշտ երկու օրվայ մէջ ու նորից ըսկում։ Նա գոց գիտէ նոյնպէս շատ դիմուներ նարեկացուց։ Շարականներից և այլն, իսկ այն բոլոր աղօմքները, որ քահանան եկեղեցում անգիր է ասում, — նա գիտէ աւելի և աւելի լաւ։

Բայց չը մոռանանք յիշել այստեղ մի շատ կարեռը բան։

Հաջի աղան Աստուածաշնչից կարդում է միայն հին կտակարանը, նա իր կեանքի մէջ կարդացած չէ մի երես իսկ Աւետարանից։ Երբ ես նոր ծանօթացած ժամանակս նրան այդ մասին զարմանք յայտնեցի, — «Մեղք է, պատասխանեց,

Աւետարան կարդալը աշխարհականների համար չէ։»

— 2ե՞ս տեսներ, — յարեց նա փոքր ինչ յետոյ — չե՞ս տեսներ թէ ի՞նչ ահիւ և գողովթեամբ քահանան կառնի եկեղեցումէջ մետաքսի շորով փաթաթված Աւետարանը և կը սկսի կարդալ բուրգառով ու զոյգ մոմերով . . . Եւ երբ Աւետարանը կը կարդացվի եկեղեցին, պէտք է ամէն մարդ լաւ ականջ գնէ ու հասկանայ նրայ միտքը . . . Մեղաւորս երբէք չեմ կարդացել սուրբ Աւետարանը, բայց զրեթէ գոց գիտեմ ամբողջը . . .

Ես, ըստ սովորութեան, աւելորդ համարեցի վիճել այդ մասին ծերունու հետ։ Բայց ինչպէս յետոյ իմացայ, այդ ոչ միայն նրա, այլ բոլոր հին մարդոց կարծիքն է այդ կողմեր և ինչպէս երեսում է, դա մի շատ հին սովորութիւն է եղել հայոց մէջ, թէեւ չեմ կարծում, որ մեր նախնիք այնքան խիստ աչքով նայում լինէին այդ բանին, ինչպէս անում է այսօր մահմետական աշխարհը Կուրանի վերաբերութեամբ։ Եւ կարելի է ասել աւելին, երբ Կուրանը կարդացվում է մզկիթում, ոչ միայն ժողովուրդը, այլ նոյն իսկ նրա մօլլաները բնաւ բան չեն հասկանում այդ արարական բնագրից։

Հաջի աղան երբ յոդնի կը փորձէ քնանալ՝ իր նստած տեղ կամ քիչ երկննալով, նրբեմն ման կը գայ խարխափելով ու փայտը ձեռին՝

սինեակի, բայի կամ այդիի մէջ, Աը զուարձա  
նայ նոյնպէս տան փոքրիկ տղաների հետ։ Ե-  
րեկոյեան, ի հարկէ, կերթայ նորէն եկեղեցի։  
Այսպէս են անցնում մուղսի Ստեփան աղայի  
օրերը . . . Քանի մի տարի առաջ, երբ նա գեռ  
խանութ էր գնում, իր զրականական պարապ-  
մունքները վերապահված էին միմիայն կանուխ-  
առ աւօտներին։

Գ

Իմսովորական այցելութիւնքը ի Զըթչենց տուն  
շարունակվում էին, բայց ես չէի յաջողում ի  
մօտոյ ծանօթանալ մուղսի Ստեփան աղայի ան-  
ձնական համոզումների հետ։ Կա, ինչպէս ար-  
դէն ասել եմ, շատ չէր սիրում դատողութիւն-  
ներ անել. նա աւելի ուրախ կը լինէր, երբ  
միջոց տայիք պատմել իր հին կեանքի էպիզոդ-  
ները։ Ինձ թւում էր, թէ նա այդ անում էր  
մանաւտնդ այն պատճառով, որ իր համարա-  
դաբացիների ներկայ վիճակի վրայ խօսելը միշտ  
յուղմունքի մէջ էր ձգում նրան։ Այսպէս թէ  
այնպէս, բայց նա առիթ չէր փախցնում մէջ  
բերել շարունակ իր սիրած պատմութիւնները,  
ինչպէս մենք այդ տեսանք հրէից խնդրի առիթով։

Բայց ինձ չափազանց հետաքրքրում էին նրա  
անկեղծ հայեացքները եր հայրենակիցների ներ-  
կայ հանգամանքների վրայ. Եւ այդ մանաւանդ  
այն պատճառով. որ հաջի աղայի օրերը հաշ-  
ւած էին և այսօր չել վաղ մենք պիտի զրկվէինք  
նրանից. «Ահա մի սերունդ—մտածում էի ես—  
որ մարելու վրայ ե. պէտք է լսել նրա վերջին  
խօսքը այն մարդոց վրայ. որոնց նա յանձնում է  
իր տեղը, յսպիս ու իդէալը» Ճիշդ է, որ պա-  
կաս չէին ուրիշ ծերունիներ էլ, բայց հաջի աղան  
մէկ շատ տարրեր նմուշ էր և ես ունեի իմ պատ-  
ճառները նրա համոզումներին էլ առանձին գին  
տալու:

Ուստի պէտք էր ինձ տեսնվել նրա հետ և առանձին, լոյս ցերեկով:

Բայց այդ պյնքան գիւրին չէր. Երկրի սովորութիւնը արդէն անտեղի էր կացուցանում ցերեկեայ այցելութիւնքը. Ամէն մարդ այդ ժամանակ գործի վրայ է, անէն դուրս է, շուկան է, Դալով Զըթչենց պէս մի նահապետական գերդաստանին՝ նոցա բազմաթիւ կանայքն ու աղջիկները միշտ վխտում են բակի մէջ, որով մի տղամարդի համար վայելուց չէ այդպիսի տեղեր յաճախ ելումուտ անել. Ուրեմն պէտք էր մի նշանաւոր պատրուակ:

Մէկ առաւ օտ բարակ անձրև էր մաղում, Հետ-  
զիետէ հատիկները մեծանալով կեսօրին մի փա-

ռաւոր հեղեղ եկաւ։ Մէկ ժամից յետոյ, ինչպէս  
սովորաբար այդ պատահ չում է, ամէն ինչ վերջա-  
ցաւ, մինչև իսկ ամպերի մի պուճախից արևն  
երեցաւ, «Էլ սրանից լաւ առիթ չեմ սւնենայ»  
մտածեցի ու դիմեցի ուղղակի շըթէնց փողո-  
քը։

Բարեբաղդաբար Ստեփան աղային գտայ փո-  
ղոցի դրան վրայ, Այնտեղ նստած, գիտում էր նա  
յորդացած առուները ու զովանում փողոցի  
խոնաւ օդով։

—Պ. Պետրոսը մերն է, հաջի աղայ, —հարցու-  
ցի ես բարեկելուց յետոյ։

—Զ՛Է... քաղաքն է, բիւթիւնն էլ քաղաքն  
են.

—Եյս եղանակին քաղաքն ի՞նչ կանեն... ես  
կործեցի ամենքն էլ տունն են, —յայտնեցի նրան  
սուտ զարմանքու։

—Գնացին գեց<sup>(16)</sup>... գործի մարդ են, տուն  
մնան ի՞նչ անեն...։

—Լաւ, բարեկ'ք իմ կողմից երբ որ գան...։

—Ո՞ւր կերթաս, էֆէնդի, հրամանէ գնանք  
ներս, խարար տանք. ես էլ մըսսայ էսա տեղ...։

<sup>(16)</sup> «Գնացին գեօյ» այս դարձուածը անթարդմանեմի  
է և յատուկ միմիայն վասպուրականցի հայոց։ Մօտա-  
ռապէս նշանակում է. «Գնացին հաւ համ ողնացին  
ահաւ»։

«Աստուած ողորմի քո հօր հոգուն» —ասացի  
ես մտքիս մէջ ու մտայ փառաւորապէս նրա  
սենեակը։

Երկար —բարակ, սարէն ու ձորէն խօսելուց  
յետոյ, ես յաջողեցայ վերջապէս լսել ծերունու  
հետագայ քանի մի համոզումները։

Կրթական գործի համար ասում էր.

—Ես գաղափար չունիմ լուսաւորեալ ազգերի  
վրայ, բայց մեր ազգը (այսինքն վանցիք) պէտք  
ունի երկու բանի. Աստուծոյ և վաստակի։ Մեր  
տղաները պէտք է իմանան Աստուծոյ պատուէր  
ները և իրանց կրօնը, Վաստակի, գործի համար  
նրանց պէտք է գիտնալ քիչ մը կարդալ գրել ու  
րախամ (թուաբանութիւն)։ Մեր վարժատանց  
մէջ դաս կուտան բնագիտութիւն, աշխարհագրու-  
թիւն և շատ մը ութիւններ, որ միտս չեմ  
կանայ պահել. ես ատոնց վրայ էլ գաղափար  
չունիմ: բայց թէ որ օգտաւէտ է, թող դաս  
տան... Միայն թէ լաւքրիստոնեայ պատրաստեն,  
պարկեշտ մարդ գուրս հանեն, Բայց էդ ութիւն  
ներ սովորած տղաները ես էնպէս չեմ տեսնար...  
Տըղան ամենէն առաջ պիտի գիտնայ Աստուծոյ  
վախ, մեծի պատիւ, պարկեշտութիւն, համես-  
տութիւն... —«Սկիզբն իմաստութեան երկիւղ  
Տեառն» —կասէ մեր Գիրքը, Բայց մեր տղաներ  
էնպէս չեն, Մենք էլ աղայ ենք եղեր. վավ (ով)  
էր տեսե էտայ համարձակութիւն... Մենք մեր

ծնողաց խրատէն, ինոնց խօսքէն չեհնք կանայ գուրս ելնել. ինոնք որ մէկ հատ երեսնին ծրմռէին, մենք ահու կը կտրէինք... « և ուր, որդեակ, խրատու հօր քոյ և մի՛ մերժեր զօրէնս մօր քոյ ».— կասի Սողոմոն ի մաստուն:

— Գիտե՞ս, էֆէնդի! — շարունակեց նա փոքր ինչ յետոյ — մեր լուսահոգի ախպերը թիւթիւն չեր իմեր, Քաման տարի առաջ ես որ Պոլիս գացի, թիւթիւն խմելու վարժուեցայ և խիստ շատ գործ կածէի, Աերագարձին օխայի մը չափ հետս առի, որ Ճամբան իմեմ Երբ հասանք էսա մեր Աւանց գեղը, միտս եկաւ որ Հախպերը թիւթիւն չի իմեր, ես էլ զաթի (արդէն) կտմչնայի ինոր մօտէն, Առի էտա թիւթիւնն ու չուբուխը տուի ջորեպանին, Էն օրէն ի վեր ես էլ թիւթիւնի համ տեսած չեմ...

— Քանի՞ տարեկան էիր այն ժամանակ, հաջի աղայ, — Հարցուցի ես,

— Վաթուն, Մըկայ ճիշտ սաքսան (ութսուն) տարեկան եմ. յուսահոգի ախպերը հինգ տարով քան զիկ ջոջ էր:

Հատ զգացված էր խօսում մուղսի Ստեփանը Սահմանադրութեան հետեանքների վրայ, Նրա կարծիքով դարոլորովին աւելորդ էր գաւառացու ներկայ կացութեան համար, Նա պնդում էր թէ կարելի չէ շատ երես տալ մեր ռամիկ ժողովրդին, մանաւանդ նրա լուսաւորեալ կարծուած « նորե-

լուկներին», թէ հաւասարութեան գաղափարը դեռ անմատչելի է իրենց մարդոց, այլ նրանք ընդունակ են կամ հնազանդիլ ու պատուել իրենց մեծերին կամ ըմբոստանալ ու անարգել նրանց, Աերջինի համար նա բերում էր բազմաթիւ փաստեր ու կրկնում շարունակ Աստուածաշնչի պյն խօսքերը թէ « Որպէս մտրակ՝ ձիոյ և խթան՝ իշոյ, նոյնպէս և գաւազան՝ ազգի անմտի»:

Ծերունին հետզիետէ տաքանում ու յուղվում էր, Մի դառը ակնարկ նետելով նաև « նոր մարդոց» անհաշտ կուսակցութեանց, նրանց փոխադարձ ատելութեանց ու ոխակալութեանց վրայ, նա յանկարծ բացականչեց.

— Էս, բօշ (գատարկ) է, բօշ, էֆէնդի, մեր էսա ազգից (վանցիների տեղ նա միշտ ա զ գ բառն էր գործ գնում) ոչինչ չը կայ... Մեղայ Աստուծոյ, մեղայ մեծ խօսքիս... Աստուած չի ընդուներ մեր արած... « Ազդ չար և դառնացող, ազդ՝ որ ոչ ուղղեաց զսիրտ իւր և ոչ հաստատեաց առ Աստուած զհոգի իւր» — Մրմնջաց ու փղձկաց խեղձ մարդը տաս տարեկան աղայի պէս:

Խս շատ աշխատեցի միիթարել նրան, տեղեկութիւն տալով ուրիշ կողմերի հայոց լաւ յատկութիւնների վրայ, բայց նա վերաբերվում էր այդ ամենին մի ինչ որ թերահաւատութեամբ: « 2եմ գիտեր, բայց տայ Աստուած որ էդպէս էլնեն

(լինեն) ... ։ Այդքան խոր վէրք էր բացել նրան  
սրտի մէջ իր հայրենիքի տարօրինակ վիճակը. մի  
մասշտաբ, որով նա ուզում էր չափել անպատ-  
ճառ համայն հայութիւնը.

Կանանց կրթութիւնը տան շրջանակէն դուրս  
—բացէ և բաց մերժում էր մուղսի Ստեփան ա-  
ղան.

Մեր քաղաքը Ստամբուլ չէ — ասաց նա — մեր  
կնիկները՝ մեր տան մշակներն են. Ինչ որ մեր  
մէկ կնիկը կանի, Ստամբուլ տան մը հինգ վարձ-  
կան չեն կանայ անել. Մեր կնիկներ կը լուան,  
կը կարեն, կեփեն, կը թիւն, կաւելեն, ծիծ  
կուտան, տղայ կը շահեն, — ամէն բան կանեն. . .  
Մեր կնիկներ ուսման ժամանակ չունին. աղօթք  
ասելու չափ կարդալը տան մէջ էլ կանան ոով-  
րիւ. Կնոջ առաջին լաւութիւնն է պարկեշտու-  
թիւն, երկրորդը — տնարարութիւն, բայց առանց  
պարկեշտութեան կնիկը՝ մէկ փառայ <sup>17)</sup> էլ չար-  
ժի... «Իրաւ զինդ ոսկի ի քիթ ինոզի՝ այս-  
պէս կնոջ չարարարցի՝ գեղեցկութիւն...»

17) «Փարայ» բառը թիւրքեէն է և ունի երկու նշա-  
նակութիւն. ա. — դրամ, փող. բ. — զբուշք  $\frac{1}{40}$  մաս, այս-  
էնքն քառորդ կոպէկ: «Փարայ» մը չարժէ, դարձուածէ  
մէջ նա ըմբռնուում է միշտ վերջին մոքսի:

Վերջին խնդիրը՝ որով ես ուզեցի զբաղեցնել  
ծերունուն՝ այդչափ յոգնեցնելուց յետ այ. — այդ  
իրենց տան հնոր սերնդի երկու ներկայացուցիւ-  
ներն էին, բայց նա շատ զգուշացաւ նրանց վրայ  
երկար ու աննպաստ իոսելուց. Միայն իմ այն  
խօսքերին թէ «Պողոս և Պետրոս աղաները ճար-  
պիկ են իրենց զործերում և լաւ վաստակ ունին»,  
— նա, մոռնալով կարծեսիր բռնած քաղաքագի-  
տական դիրքը այդ մասին. — Եթէ ոչ Տէր շինէ  
զտուն — մրմջացնա հառաշելով՝ ի նանիր վաս-  
տակին շինողը նորա: »

Բայց նրա այդ լակոնական պատասխանից կա-  
րելի էր շատ և շատ բան հտսկանալ:

Այդ օրից հազիւ վեց ամիս անցած, Զըթչենց  
տունը ենթարկված էր այնպիսի մի կերպարանա-  
փոխութեան, որ այնտեղ մտնողը չէր կարող հա-  
ւատալ. թէ այդ իր նախածանօթ, մեծանուն  
Զըթչենց տունն էր. Զըթչենց տուն... մի բառ.  
որ պարունակում էր իր մէջ մի ընդարձակ աշ-  
խարհ նրա բոլոր հայեացքներով. ծէսերով և  
կարդ ու կանօնով. Այդ ժամանակամիջոցում  
տեղի ունեցան այնտեղ, արագ արագ իրարույթա-  
ջորդելով. հետագայ եղերերութիւնները:

Երդէն զերև յիշեցի, որ այդ տան մի ներկա-  
սացուցիչը, Կարապետ աղան, կաթուածահար  
էր եղել. Նյդ պատահարը տեղի էր ունեցած Կ.  
Պօլում մէկ տարի առաջ, Կարապետ աղան իրանց  
տան ամենափայլուն գոհարն էր. հանձարը, աղնը-  
ութիւնն ու անձնուրացութիւնը մի զարմանալի  
եռապատութիւն էին կազմում այդ հոյակապ  
մարդու բնաւորութեան մէջ, նա գնում էր յա-  
ճախ Կ. Պօլիսիրանց առետրական տան գործերի  
համար. Պօլսի ամբողջ վաճառական աշխարհը  
ճանաչում էր նրա անաղարտ շիտակութիւնը և  
Զըմչենց տունը յանձին իր այդ ներկայացուցչի  
մի անսահման յարդ ու վարկ ունէր հայոց այդ  
մեծ գաղթականութեան մէջ. Բայց նախախնա-  
մութիւնը, որ միշտ ընտրանօք է առնում իր  
հարկերը, չէր մոռացել և այդ թշուարականին.  
Նրա վերջին անգամ Պօլիս գնալուց ճիշտ մի շա-  
բաթ էր անցած, երբ նա Պօլսի եկեղեցիներից  
մինում՝ իր առաւօտեան ջերմ աղօթքները կա-  
տարելիս, գետին փովեցաւ յանկարծական սրաի  
պայթումից.

Նրա մահուան գոյժը ի սուդ համակեց իր բո-  
լոր հայրենակիցներին, իսկ իր մօտիկ ծանօթնե-  
րը հեծում ու հառաջում էին կողկողազին. Մին-  
չեկ հաջի Ստեփան աղան, մի մարդ, որի սիրտն  
արդէն թթացել էր իրանց բազմարնակ տանքանի  
մի առանեակ մեռելներով, — մինչեւ իսկ այդ եր-

կայնամիտ ծերունին, ասում եմ չէր կարող ա-  
ռանց փղձկալու յիշել այդ վաղահաս ու անդառ-  
նալի կորուստը. «Ա'իս, ես ինոր հոգուն մեռնեմ»,  
— ասում էր նա յաճախ սրտատոչոր և անմիջա-  
պէս, կարծես վախենալով իր առ Աստուած ուղ-  
ղեալ այդ տրտնջից՝ «Բայց օրհնեալ է կամք  
Տեառն» աւելացնում.

Իյդ չնաշխարհիկ մարդուց յետոյ կարգը եկաւ  
Յովհաննէս աղային. Սա էլ հանգաւ օտարու-  
թեան մէջ, հեռու իր սիրելիների գրկից. Սա գը-  
նում էր Բաղէշ աչքի անցնելու Հալէպից հասած  
մանիսայի գանկերը: Ճանրան կարճ կտրելու հա-  
մար սա ընտրեց ծովային ուղին<sup>19)</sup>: «Աման, Յով-  
հաննէս — աղաչում էր Հաջի աղան — աման Յով-  
հաննէս, ծովով մի երթար... վատ երազ եմ տե-  
սեր. մի մտներ քո տղաների արիւն...», Բայց  
Յովհաննէսը, Բզնունեաց ծովի այդ եղկելի գոհը,  
յամառեց ու անսաստեց — թերեւս առաջին ան-  
գամը կեանկին մէջ — իր գորովալից հաջի աղա-  
յին.

Ջրհեղեղեան փայտենաւն արդէն ծովի մէջ-  
տեղն էր, երբ արևելեան մի մոռնչ ուռցուց ու  
փրփրալից արեց ջրի թանձը կոհակները... Քա-

<sup>19)</sup>Զերով Բաղէշ են գնում երեք օրում, իսկ նաւով  
— մօտ տաս ժամում, եթէ լճի օդը նպաստաւոր լինի

մին հետզետէ անտանելի էր դառնում և նաւ ա-  
կը նետվում էր ալեքների գլխից որպէս մի տա-  
շելի կտոր, ծովի փոսացած տեղերը, Եջտ բանին  
աւելանում էր երբեմն լճի հակառակ քամին, — և  
նաւակը երբեմն բարձրանում, երբեմն ընկնում  
երբեմն կանգնում, երբեմն յետ ու առաջ էր գը-  
նում, Քանի մի ժամկան տանջանքներից յետոյ  
նաւագարները ձեռք քաշելով ամեց բանից, նա-  
ւի առագաստը կարեցին, «Հիմա մեր յօյսը մի-  
այն Աստուծոյ վրայ է, ասաց նաւապետը իր  
յատուկ լրջութեամբ, փարայ տուէք, որ ս. Գէոր-  
գի համար խունկ ու մոմ առնենք, երբ նրա զօ-  
րութեամբ պրծնենք էսա պատուհասից, » Եւ նա-  
ւի կիսամեռ հասարակութիւնից հաւաքեց նա  
բաւական դրամի փասս իրենց դիմաց գտնվող  
ծովաշյեաց ս. Գէորգ վանքի:

Առաւօտեան կողմ հողմը գամքան զգամ մեղ-  
մացաւ և խոռվեալ նաւը հասաւ վերջապէս  
Դատվանի ցանկալի նաւահանգիստը, նաւն հա-  
սաւ, բայց նրա ուղեորները զրեթէ չը հասան  
այստեղ իրենց շնչով: Նրանց մէջ շատ էր վը-  
տանգված մանաւանդ Յովհաննէս աղան. վերա-  
հաս մահուան երկիւղը, զաւակների ուրուական-  
ները և նաւի մէջ թափած անչափ մաղձը մահ-  
ւան դուռն էին ձգել նրան: Ցամաք ելնելուց կէս  
ժամյետոյ աւանդեցնա իր հոգին: Նրա վերջին  
խօսքն էր մի «մեղայ», որով ներում էր խնդ-

բում հաջի աղայից իր մեծ անհնազանդութեան  
համար:

Նրա մահն էլ վշտացուց հաւասարապէս զինքը  
լաւ ձանաչող բոլոր բարեկամներին, «Ո՛չ, մեծ է  
զօրութիւն Քրիստոսի», — ասում էր Ստեփան ա-  
զան գլուխն օրօրելով ու պատմում ամենքին իր  
սրտաճմլիկ երազը:

Բայց մուշզի Ստեփան աղան պատրաստւում էր  
արդէն հրաժեշտ տալ մեր ունայն աշխարհին:  
Նրա ոյժը նուազում էր ժամէ ժամ, ծնկների  
մէջ այլ ևս զօրութիւն չունէր: Անհնարին լինե-  
լով նրա օրը երկու անգամ եկեղեցի երթալը, նա  
սկսեց, մի սնանկացող մարդու պէս, աստիճանա-  
կան իջեցման ենթարկել իր երթեւեկութեանց  
բիւղմէն (Նախահաշիւ), Նախ նա որոշեց օրը  
մէկ անգամ միայն երթալ յետոյ օրամէջ, շաբա-  
թը երկու անգամ և վերջի վերջոյ միմիայն կի-  
րակի օրեր:

Բայց լնութիւնը, որ սովորութիւն չունի նայել  
մարդոց բիւղմէներին, որոշել էր արդէն մաքրել  
այդ զառամեալ մարդու հետ իր բոլոր հաշիւն-  
ըը: Մի կիրակի էլ մեծ նեղութեամբ եկեղեցի  
գնալով, հաջի աղան զգաց, որ արդէն բանը բա-  
նիցն անցել է, «Քրիստոսն ինձ թասկեարայ  
(անցագիր) է ուղարկել» — յայտնեց նա տնեցի-  
ներին, ուժասպառ սենեակը մտնելով: «Բժիշկ  
բերենք, հաջի աղայ» — առաջարկեցին նրան:

Ծերունին իր հայեացքով զարմանք յայտնեց  
նոցա տխմարութեան վրայ.

—Աչա իմ բշիշկը, —աւելցուց նա, ձեռքը դը-  
նելով Աստուածաշնչի վրայ.

—Թագեարան գեօյ առեր եմ, —շարդւնակեց  
նա, հետղիշետէ հանդարտ ու զուարթ դէմք առ-  
նելով—ես ճամբորդ եմ... հալա մէկ շաբթու  
շափ ձեր մուսաֆիրն (հիւր) եմ... «Տէ՛ր, մի  
դարձուցաներ զերեսս քոյ յինէն»...

Եւ նա սկսեց պատրաստվել իր այդ անյետա-  
ձգելի «Ճամբորդութեան» համար.

Հացէն վերջ նա շինեց մի ցանկ Աստուածաշըն-  
շի ու Նարեկացու այն կտորների, որ բաւական  
ժամանակէ ի վեր չեր կարդացած, Հետեւեալ օ-  
րից նա ձեռք զարկեց նոցա ընթերցման ճիշդ  
այնպիսի մի տագնապով ու լարված ու շարու-  
թեամբ, ինչպէս այդ անում են տարեկան քննու-  
թեանց պատրաստվող դպրոցական աշակերտնե-  
րը, երբ յոգնում էր կարդալուց, աղօթք էր ա-  
սում ու շարական երգում, Յաճախ նա գիրքը  
ձեռքին մոափում էր, մտաղբաղ իր անվերջ,  
խառնիխուռն երազներով: Այդ շարաթ նշա-  
նաւոր փոփոխութիւն էր մտել նաև նրա բնա-  
ւորութեան մէջ: Պարապ ժամերին նա սովորա-  
կանից զուարթ ու անհոգ էր, ախորժանօք  
զբաղվում էր տան երեխաների հետ, իսկ տան  
աղաներին պատմում էր նա իր տեսած երկայն

ու հրաշալի երազները, որոնցից շատ բան կա-  
րելի էր հասկանալ այն կիանքից մասին:

Բայց նա անում էր այդ ամէնը հակառակ իր  
կենսական ոյժերի յամառ քայլայման: Նա այդ  
կարողացաւ զգալ միայն ուրբաթ գիշեր, յայտ-  
նելով թէ ցաւ է զգում իր բոլոր ոսկորների մէջ:  
Առաւոտ կանսւխ նա կանչեց իր մօտ Մկրտիչ  
աղային և պատուիրեց, որ այդ օրը ոչ քա-  
ղաք չերթայ, զի ինքը հազիւ մինչև կէսօր պիտի  
ապրէր, Հակառակ մուզսի Մկրտչի դանդաղկո-  
տութեան, նա պահանջեց որ անպատճառ քահա-  
նայ բերեն իրեն սրբութիւն տալու համար: Տէրտե-  
րի գնալուց յետոյ ծերունին պատուիրեց որ ուտեն  
իրենց սովորական ճաշը, իր ներկայութեամբ:  
Խնըը ոչինչ չը կերաւ, այլ խմեց միայն մի գա-  
թթ ջուր, ասելով թէ շատ ծարաւ է:

Մօտ մի ժամ լուռ ու գլխահակ նստելուց յե-  
տոյ, նա ցանկութիւն յայտնեց ոտները պարզելու  
և գլուխը բարձի վրայ դնելու, Եղբօր տղաները  
օգնեցին նրան, ուզած դիրքը տալու համար:  
—Թո՛ղ բոլոր հարսներն ու տղաները գան  
էսա տեղ, —հրամայեց նա:

Հինգ րօպէից յետոյ ծերունու սենեակը լցվե-  
ցաւ երեսունից աւելի կանանցով, օրիորդներով  
և զանազան հասակի երեխաներով: Դոքա ամէն-  
քըն էլ ներս մտնելուն պէս մերձենում էին

պարկած հաջի աղային ու համբուրելով նրա  
աջը, շարվում պատի տակ:

— Որդի՛ք — արտասանեց ծերունին, ուղղելով  
իր խօսքը այդ խայտաճամուկ բազմութեան —  
որդի՛ք, Աստուած ձիկ կը կանչե... Ես պիտի  
երթամգտնեմ մեր լուսահոգի հանգուցեալները:  
Բայց մեռնելէս առաջ, Զըթչենց տան սովորու-  
թեան համեմատ, պիտի անեմ ձեզ իմ կտակը...  
Դուք ամենքդ էլ հասկացեր էք, թէ ի՞նչ անուն  
ու պատիւ ունի Զըթչենց տունը մեր ժողովրդի  
մէջ, նոյն իսկ էս դառն ու լեղի ժամանակում...  
Մի՛ կարծէք թէ ագոր պատճառը մեր հարստու-  
թիւնն է, չէ՛, չէ՛.. վալլահ, չէ (Աստուած վկայ)..  
Ագոր պատճառն այն է, որ մենք պահած ենք  
միշտ սրտներուս մէջ Աստուծոյ երկիւղը, չենք  
ուրացեր Անոր սուրբ անունը, չենք մոռցեր Անոր  
արդար հրամանները... Բարի զործոց, եկեղեցու,  
տնանկների աղքատների և սմէն տեսակ կարո-  
տեալների համար մենք զոհած ենք, իրաւ է, մեր  
հարստութեան մի մասը, բայց Աստուածն ամե-  
նակարող տասնապատկեր է միշտ մեր վաստակն  
ու հարստութիւնը... Թա՞ղ ողորմած մարդը չը  
կարծէ թէ իր ողորմութեամբ պիտի քանդէ իր տու-  
նը... Որդի՛ք, ձեզմէ ծածկեմ: Աստուծմէ ի՞նչպէ՛  
կարողանամ ծածկել... Մեր մարդկային տկար  
կարողութեան չափ, մեր ամեն գործի մէջ չենք  
մոռցեր մեր խղճի ու արդարութեան ձայնը...

Բայց, մեղայ Աստուծոյ, — ո՞վ կրնայ գիտնալիք  
ծովացեալ մեղաց պատճառը... Ուրեմն, որդիք  
օրհնեալ լինիք ի շնորհաց սուրբ Հոգւոյն, եթէ  
պիտի հետեւէք ձեր նախնեաց օրինակին, ծլիք ու  
ծաղկիք, աձիք ու բազմանաք որպէս աւաղ ծո-  
վու... բայց պարտական պիտի մնաք առաջի ա-  
հեղ դատաստանին Աստուծոյ, թէ որ արատաւո-  
րէք Զըթչեւց տան երկու հարիւր տարվան պա-  
տիւը... Մերտի՛չ քեզ կը յանձնեմ մեր տան «մե-  
ծութիւնը», դու պիտի լինիս այս բոլոր կանդ ու  
կլուզ (մանրիկ) տղաների հայրը, նոցա մասին օր  
ու գեշեր հոգացողը... Դու պիտի չը թողուս,  
որ ասոնցից մէկը յանդգնի անպատճել մեր դա-  
րաւոր անունը... Ա՛խ, Զըթչենց տուն...: Ա՛խ,  
Զըթչենց տուն...

Ցուզեալ ծերունին ձգեց զլուխը բարձի վրայ և  
պահ մը լուեց: Քիչ յետոյ նա ուզում էր նորից  
շարունակել, բայց տեսնելով իր նուազումը, —  
«Եկէք, որդիք, ասաց, աջս առէք ու գնացէք  
ձեր տներ... ձեկ թողէք մէնակ, կուզեմ քիչ  
հանգստանամ:»

Եւ ամենքը արտասուալեց աչքերով համբու-  
րելով նրա չորացած ձեռքը, մէկնեցան սենեակից:  
Երբ ամենէն վերջ դուրս էր գնումնակ Մկրտիչ  
աղան, նա նկատեց, որ հիւանդը ճգնում է շուռ-  
գալ միւս կողի վրայ, երեսը դէպի պատն ուղղե-

լով, նա հարկ համարեց սպասել դրան մօտ, առանց հաջի աղայի գիտութեան:

— «Փորձեա զիս, Տէ՛ր, և քննեա զիս, փորձեա զերիկամունս իմ՝ և սերտ իմն—մրննջում է ծերունին ու լուսմ: Մկրտիչ աղան մէկ երկու բոպէ սպասելուց յետոյ ոտի ծայրերով մօտենում է հաջի աղային ու տեսնում: որ ամէն ինչ վերջացած է...»

— Ա՛խ, ափսո՞ս իմ հաջի աղան:

Լուսահոգի ծերունու այդ վերջին օրուան մանրամասնութիւնը հաղորդեց ինձնրա եղբօրորդի պ. Պետրոսը, որ չը զլացաւ, ի հարկէ, քննադատել իր կողմից նրա ճառի «անհեթեթութիւնը»...

Նրա մահից յետոյ մուղսի Մկրտիչը մնաց «հին» գաղափարների միակ ներկայացուցիչը 2ը թշենց տան մէջ: Պօղոս ու Պետրոս «ախափերները» մէկ լայն կրծքով շունչ քաշեցին. մեծամասնութիւնը այս անգամ նրանց կողմն էր: Նրանք, հակառակ հաջի աղայի կատակի, ամենեին չէին ուղում «մեծ» ընդունել—այդ բառի բուն նշանակութեամբ— Մկրտիչ աղային: Նրանք որոշեցին մի ներքին ու համր պատերազմ պահել իրանց «նախապաշտեալ» եղբօր դէմ:

Գալով Մկրտիչ աղային—նա արդէն առաջուց էլ կարող էր գուշակել այդ ամէնը, բայց նա երբէք չէր ցոյց տալիս իր դժգոհութիւնը այդ մա-

սին: Նա նայում էր նրանց վրայ ճիշտ այն ներուղամութեամբ: ինչպէս անում է այդ մի փորձառու կրթիչ իր չար աշակերտների վերաբերութեամբ: Բայց բանն այն է, որ ինչպէս ամէն դորհի մէջ, այնպէս էլ այդտեղ մենակութիւնը մի անտանելի ճանձրյթ էր նրա համար: Իր փոքը եղբայրների մահը անբուժելի վերըեր էին բացել նրա սրտում: Նա հաստատ համոզված էր թէ ինքը իր խիստ չափաւոր տաղանդով չէր կարող մենակ պահել իրանց տան հեղինակութիւնը այն բարձրութեան վրայ: ուր թողել էին զայն իր բաղմահմուտ նախորդները: Եյդ համեմատութիւնը այնքան աւելի սոսկալի էր երկում: որքան նախորդ թափանցում էր իր համարակաբացիների այժմեան կեանքի րոլորովին նոր հանգամանքնե: Իի մէջ: Յուսահատութիւնը կատարեալ էր և նա կարծես վճռել էր—թերեւս առանց կատարեալ կամքի—վերջ տալ իր հողետանջ կեանքին: Կամ գուցէ նա վճռել էր մոռացութեան տալ իր ցաւ: և էր իր միակ միսիթարիչ—օղիով...

Ինչպէս արդէն վերն յիշել եմ մուղսի Մկրտիչ աղան մի բացառութիւն էր 2ը թշենց տան մէջ, որ մօտիկ յարաբերութիւն ունէր տաճիկ իշխանաւորների հետ: Թէ՛ նո ամենայն սրբութեամբ պահում էր իրանց աւանդական սովորութիւնը և երբէք իր այդ ծանօթներին չէր թոյլ տալիս ողատուել իրանց փոխաղարձութեամբ: բայց այդ

Նրան չեր արգելում շարունակել նրանց հիտ իր մտերիմ առընչութիւնը, եւ նա շուտուց ի վեր սովորած էր նրանցից արադի սիրահարը լինել.

Իրանց տան վերջին հանգամանքները ստիպեցին նրան քառապատկել խմած գաւաթների քառակը: Նա խմում էր գիշերը իր առանձնասենեակում: Ճը նայելով իր դժբաղդ կնոջ արտասուքներին: Հաջի աղայի մահուան ժամանակ արդէն նրա գրութիւնն էլ բաւական ծանր էր և հազիւ երկու շաբաթ անցած, — նա բռնվեցաւ թոքախտի և ընկաւ անկողին: Նա էլ մերժեց բժշկի ծառայութիւնը և երեք շաբաթ անցած շանցած — աղատվեցաւ իր բոլոր հոգսերից... .

Մեռնելիս նա աւելորդ գատեց կրկնել Զըթչենց տան աւանդական կտակը՝ իր եղբայրներին:

Այդքան կարծ միջոցում վերցուաւ երկրի երեսից մի սերունդ, որ ամբողջ երկու դար մի անջնջելի համակրութիւն էր զարթուցել հաղարաւոր մարդոց մէջ՝ իր անխարդախ արդարութեամբ: Թափունութեամբ, բարութեամբ ու մաքուր քրիտոնէական ոգով:

Աերջին տարիներ կարծես մի ներքին ոյժքաշում տանում էր նրանց իրարու մօտ: Կարծես նրանք, ձանձրացած այս աշխարհից, ուր ամէն ինչ տակն ու վրայ եղել ու խանդարվել էր, գիտում էին մի ուրիշ, աւելի ապահով տեղ, հեռու

մեր մթնոլորդից՝ բանալու միմեանց իրանց սրաի վերքն ու յուզումները... Այդպէս թողեն ու գընացին, գրեթէ մի ակնթարթում: մուղսի Աւետիսըն ու Ստեփանը, Մկրտիչ, Յովհաննէս ու Կարապետ «ախպերները»:

Ցիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի: Աերջացաւ նրանց հետ նաև Զըթչենց «հին» տունը և տեղի տուեց Շնորին: Նրանց Շնոր յաջորդները ունէին, ի հարկ է, իրանց յատուկ ծրագիրն ու իդէալները: Նրանք ուրախ էին, որ Շնոր Զըթչենց ֆիրման զերծ էր իրանց նախնեաց «փտած» ու «վերացական» գաղափարներից: Նրանք համոզված էին վերջապէս թէ այդ նոր ֆիրման, թէպէտ տարբեր ուղղութեամբ, բայց աւելի մեծ հոչակ պիտի ունենար քանի մի տարիէն յետոյ:

Սպասենք...



Հեղին ընտեհումն զարդարու միաւացվել  
էնիւ ըմբեցն առ առ զարդ ապահով, և  
շաբաթ՝ օմբառն զարդ պահան և պատա  
քառակ զարդ է ժիշտ է, մինչև զգմարդութան,  
ու մինչ պահան զարդ զգմարդ ու պատաքն  
պահ զարդ ու հզար մասնիք զարդ գույն  
մարդութան և առաջազնութիւն ու պատաքն զար  
դ մինչ առ ապահով մինչ ապահով զարդ զարդ  
զարդ ու պատաքն ապահով զարդ զարդ զարդ  
զարդ ու պատաքն ապահով մասնիք զար

III

## „ԱՃԻՄԱՐԴԻ ԿԵՍ“.

առաջ զմույթ պարբեր շուրջ մարտ զարդ և  
առցանց պատճեն քաղաքացին գոմքան մասն ի  
կայդեցած անունը ու պատճենայի նայել զարդ

## «ԱՇԽԱՐՀԻ ԿԵՍ»-Ը

Մէկ օր լուր տարածուեցաւ, թէ Զաքար  
աղայ Կորէծեանը կնքել է իր մահկանացուն.  
Ես այդ լուրին չը հաւատացի, զի առաջին  
անգամը չէր, որ այդ լսւում էր այն մարդու  
վրայ, որ ամբողջ վեց ամիս մերձիմահ պարկած  
էր. Մահը կարծես անզօր էր երկում այդ  
երկաթի մարդու առաջ, Քանի միժամէն յետոյ  
այդ հաստատուեցաւ վերջապէս այն արժանա-  
ւատ մարդոց բերնով, որբ ոչ ոքի խօսքին չը  
հաւատալով, գնացել էին ժամտուն իրանց աշք-  
րով Զաքար աղայի դիակը տեսնելու.

Հանգուցեալը իմ ծանօթներէն էր, ուստի և  
պէտք էր տալ նրան իմ վերջին հրաժէշտը:  
Հետեւեալ օր գնացի եկեղեցը՝ նրա թաղման  
հանդէսին ներկայ գտնուելու.

—Գնանք բակ մէկ հատ շիգարայ խմենք, —  
ասաց ինձ կողքիս կանգնած նշատ վարժապետը,  
մօտ մէկ ժամէն յետոյ:

Ես համաձայնեցայ: Բակի մէջ մենք նստանք  
մի բարձր գերեզմանաքարի վրայ ու կպուցինք  
մեր սիգարաները:

— Զոքար աղայի վրայ աննպաստ բաներ շատ  
կ'ասեն, արդեօք ձի՞շտ է այդ ամէնը! — Հարցու-  
ցի ես ընկերոջս:

— Հըմ... — արտասանեց նա զլուխը շարժելով  
— անոր վրայ լսածնիդ ոչ միայն ձիշտ, այլ շատ  
քիչ է... Մեր քաղաք ուրիշ մարդոց վրայ  
բամբասանք շատ կ'անեն, բայց Զաքար աղան  
այն աստիճան Շնեխածա մէկն է, որ ինչ որ ա-  
սեն, կը յարմարի նրան...

— Բայց մեռելի վրայ այդպէս չեն խօսեր պ-  
եշոտ! — կատակեցի ես:

— Հաւասահ, Հաւատահ, որ ինձ մնար՝ այդ  
մարդուն գերեզմանոց տեղ չէի տար... Նրա  
գլուխը ուրիշ տեղ ձգուելու արժանի էր, չէ թէ  
անմեղ մեռելների մէջ հանգստանալու... Զա-  
քար աղայ... թո՛ւշ...

Եւ նա շպոտեց ամենայն անբաղաքավարու-  
թեամբ մի ահազին թուք մեր առաջ:

— Կ'երեկի քեզ էլ վնաս մը տուածէն, որ  
այդքան կըբարկանաս, — Հարցուցի նրան:

— Ծօ՛, ախպե՛ր, նա ո՞ւմ վնաս չէ տուած, որ  
ես աղատ մնայի... Բայց իմ վնասը ջայնամ...  
Դիտե՞ս թէ քանի՛ մարդու տուն է քանզեր  
էտա... էտա... Մեղայ Աստուծոյ, ի՞նչ ասեմ...

— Գու մէկ ասա թէ քանի դրուշդ է կերել  
պ. Աշոտ, — ուրիշների հետ ի՞նչ զործ ունիս:

— Կ'ասեմ ինձմէ կերածը շատ բան չէր թէեւ  
— կորադար թո՛ղ ուտէր բայց նորէն հարիւր  
զրուշն էլ ինձպէս մի աղքատ ու օլուղ-չօջուխի  
տէր վարժապետի համար քիչ փարայ չէր...

— Ի՞նչպէս կերաւ այդ ստակդ (փող):

— Շան պէս... Աֆանդըմ վեց տարի առաջ  
ես էսա վարժարան (ցոյց տալով դիմացի շի-  
նութիւնը), կառավարիչ<sup>1</sup> էի, ամսական 100  
զրուշ կ'առնեի. էտա անպիտանն էլ Թաղական  
էր. Մէկ անգամ ութ ամիս շարունակ ինձ փա-  
րայ շը տուին, ես էլ շատ սեղն էի...

— Բայց հիմայ էլ այդպէս կ'անեն, — ընդհատեցի  
ես:

— Աղէկ, հիմայ էլ կ'անեն, բայց էն ժա-  
մանակ էղպէս չէր. Էն ժամանակ աշակերտաց  
ձաշէն յետոյ թողած հացերը ինձ կը պատկանէր:  
Հապա հիմիկան պէս չէր, որ չաշալ տնտեսներն  
(ծառայ, сторож) առնեն տանեն. Մի բան էլ  
կայ. Ես էն ժամանակ միայն փշուրնէր չէր որ  
կըտանէր... Աշակերտաց կըպատուիրէի որ բօլ  
հազար հինգ մերեն... Իսկ որոնց տուն որ  
հազար հազ լինէր, — զաթի հինգ պատուական

<sup>1)</sup> Տա Ճկահայոց կըթարանների վերակացուները  
(надзиратель) կառավարիչ, են կոչւում:

Ի՞շու մէջը պանրի կտորներ կլորուած, իմկս մաթն էր (բաժին). Շատ անգամ կը պատահէր՝ շրո-  
հինդ տուն մէկ օրուան մէջ հաց կ'եփէին. Կը  
տեսնէիր առաւաօս կանուխ տղաները «թամանդա»  
անելով տաք տաք հացը կը դնեն վեր սեղանիս...  
Էդ հացերը որ վեր մէմէկու շարէի—ահա էս-  
պէս կ' էլնէր հա... ճականեցած առաջ ան-  
եւ նա ցցց տուեց գերեզմանաքարի վրայ իր  
երեակայեալ լոշերի կէս կանգուն բարձրութեւ-  
նը.

— Ամէն օր, — շարունակեց նա—երկու զբու-  
շի շափ հաց կը ծախէի մեր դրկեցներին (գրա-  
ցի). Մեր տուն չէին կանայ բիւթիւնն էլ ու-  
տել... Բայց մըկայ—անցաւ էն ժամանակը...  
Հիմայ նոր վարժապետները կ'ասեն թէ ամօթ  
է... Բայց անողներ էլ կան Մելքոն վարժա-  
պետ հալա կ'անի, Ասատուր վարժապետ կ'ա-  
նի, Թօփալ (կաղ) Թարգիս կ'անի...

— Դու ինձ առաջ էն հարիր զրուշի բան  
առաջ—ընդհատեցի ես նրան—էդ թող կենայ  
յետոյ,

— Հարիր զրուշ... Աֆանդը (իմ պարոն),  
ասի որ 8 ամիս ինձ մէկ հատ պլիկ<sup>2)</sup> չին  
տուած, ես էլ շատ նեղն էի. Դու գիտես որ

(1) Պլիկ—ը մէկ փարախ մանր կոտորակն է, որ կի-  
մայ այլ և գործածութեան մէջ չէ:

մը երկիր Պօլսոյ պէս չէ. այստեղ պէտք է ա-  
մէն մարդիր տարուան պաշարը տեսնէ. Կ'ասեն  
թէ շատ համրերութիւնը իշխ մարտիրոսութիւն  
է. Էօ Թաղականի ոտն ընկայ էն Թաղականի  
ձեռքը պագի—տեսայ որ չէ ինձ երես տուող չը  
կայ... Նախսայ, միտք արի որ բոնեմ էտա  
գեօրեկեու Զաքար աղի եախէն (օձիք)...  
Ինչ գլուխդ ցաւցնեմ, էտա քաւթար (պատռ)  
զաթի առանց կաշառի դժոխը էլ չէր երթար.  
Խօստացայ իրեն 100 զրուշ տալ և մէկ շարթէն  
յետոյ ստակս առիւ, մասնայաբան մէջ մաս  
Այնուհետեւ մէկը միւսի յետեկից սկսեց պատ-  
մել ինձ Աշոտ վարժապետը, իր սովորական  
դանդաղ երկարախօսութեամբ, Զաքար աղայի  
սխրագործութիւնքը. Միացնելով նրա հաղորդ-  
ածներին նաև իմ՝ ուրիշներից լուծները պյու  
անձի վերաբերութեամբ, տեղեկութիւններ, ոքք  
հաստատուած են բազմաթիւ փաստերով.—կը  
ստանանք այդ 70—ամեայ ծերունու հետագայ  
համառօտ կենսագրութիւնը, ողառ զդուած  
Քառասուն տարի առաջ նա Անձայ մէջ բա-  
զազի խանութ, ունէր. Իր յաճախակի խարդա-  
խութեանց համար նա կորցնում է իր առնետրա-  
կան վարկն ու մուշտարիները. Գուշակելով իր  
մօտալուած անկումը, նա փոխում է իր առպա-  
րէզը ու դառնում կապալուած՝ զօրքերի կենսա-  
կան պաշարների. Այդ գործում նա միջնց է ուշ-

Նենում ծանօթանալ շատ նշանաւոր տաճկաց  
հետ ու վարժում՝ նոցա նիստ ու կացի, և փողի-  
տիքայից <sup>3)</sup>, բնաւորութեան և որ ըստ կարգին.  
Անտարակոյսնա լաւ հմտութիւն է ձեռք բե-  
րում նաև տաճկաց լիզուի մէջ, Երկու տարիէն  
յետոյ այդ տեղի զինուորական հրամանատարը  
պաշտօնով տեղափոխւում է Սիւրիա և մօտիկ  
բարեկամութիւն ունենալով Զաքար աղայ Կո-  
րէծեանի հետ, Խորհուրդ է տալիս նրան գնալ  
իր հետ և տիրանալ Սիւրիական բանակի կա-  
պալներին. Կապալառուն ընդունում է այդ ա-  
ռաջարկն ու մեկնում, նա մնում է այնտեղ  
ամբողջ 13 տարի և այդ ժամանակամիջոցում  
կւր ոչ մի հայրենակից չէ ունենում նրա բաղդի  
մասին որևէ պացի տեղեկութիւն, Բայց նա  
ինքը յաճախ նամակներով յայտնում է այնտե-  
ղից իր ծանօթ հայրենակիցներին, թէ մեծ յա-  
ջողութեան մէջ է ու տէր նշանաւոր հարստու-  
թեան.

Տասերեք տարուան բացակայութիւնից յետոյ  
Նա մտնում է վերջապես իր հայրենի քաղաքը  
իրեւ մի մեծահարուստ անձու յայտնում ամէ-  
նին թէ ինքը այլևս միտք չունի որկեւառեւ

8) «Փոլիթիքայ», և Տաճկաստանում՝ Նշանակում է՝  
կեղծաւորութեան ու շողոքորթութեան վրայ հիմնուած  
բազա բախարութիւն...

տրական ձեռնարկութիւն անել որովհետեւ իր  
նիւթական կարողութիւնը բառական է իրան  
նցյն իսկ հարիւրամեայ շռայլ կեանքի համար  
այլ թէ միտք ունի անդամը ընտրուիլ կառա  
վարչական ժողովներում ու պաշտպանել եր  
և խեղճ՝ հայրենակիցների դատերը եւ իր հին  
ծանօթ թիւրքերից զատ գտնելով նաև նորերը  
յաջողութէ ձրի պաշտօն ձեռք բերել մի դա-  
տական առեանում։<sup>4)</sup>

Բայց նախ քան գործին ձեռք զարնելը պետք  
էր նրան ապրուստ ունենալ, որից նա բացէիրաց  
զուրկ էր... Ամենայն գիւրութեամբ իրու մի  
մեծաչարուստ. կնքում է նա քանի մի հարիւր  
ոսկու փոխառութիւն ու սկսում տալ իր փա-  
ռահեղ հացեցիթեաները քաղաքի ականառոր  
մարդոց. Այնուհետև իսաղաղ սրտով սկսում  
է նա իր գիւրանագիտական ձեռնարկութիւն-  
ները.

— ხერია დათანასაყნელი ჩრონიგ ფასტე სისხლით  
ათავს უხერხევას უთმოს უნ ურან ათანას ათა-  
სახელი ურეხევას მწ ირხენის ურეხევას ურეხევას  
ათას მხდარი ურეხევას ურეხევას ურეხევას ურეხევას

4) Տաճկաց վատախան ատեանները լարում են 4-6  
անգամներ, մի նախականվ՝ Անդամները կէսը լընում  
են միշտ քըլսունեաները, նրանցից մայն երկուսը կամ  
չորսը լարձով են, միւսները՝ ձըլ:

բակ քաղաքագիտական ցիրուազութիւնից յետոյ նա հասկացնում է նոցա անուղղակի այն միակ միջոցը, առանց որի անհնար է այդ դատը վաստակել: Սկսում է երկար սակարկութիւն ու վերջանում քանի մի փայլուն ոսկիներով: անշուշտ համեմատ գործի մեծութեան: Այդ բանը կատարեւամ է երկու դատաիազի հետոն էլ: 'ի հարկէ առանց փոխադարձ գիտութեան: Տարակը չըկայ: որ դատարանի մէջ յանցանքը նոցանից մէկի վրայ պիտի դրոշմուէր, բայց Զաքար աղայի համար մի շատ գիւրին բան էր տալ պէտք եղած բացարութիւնը խեղճ դատապարտեալին: Հասկացնելով նրան, որ իր (Զաքար աղայի) բոլոր չարաչար աշխատանքները 'ի դերեւ հան լոկ այն պատճառով, որ նրա (դատապարտեալի) անպիտան հակառակորդը քառ ապատիկ կաշառ է տուել իր (Զաքար աղայի) թուրք պաշտօնակցին: Այդպէս է վարուել նա իր: 5—ամեայ պաշտօնէութեան մէջ (նա միշտ ձրի է վարել իր պաշտօնները) հազարաւոր մարդոց հետ: Ըստ նրա բաղաքագիտական հայեացքների, չըկար աշխարհի մէջ ոչինչ այնքան անխելք ու յիմար, քան կաշառ ուտել միայն մի կողմից: «Նւելորդ պատառը բողաքը չի ծակերց: ասում էր նա— «Ինչո՞ւ մէկ հօղմից առնել: քանի որ երկուսիցն էլ կարելի է: »

Եւ մարդը յաջողում էր:

Բայց լինում էին նաև ամիսներ, երբ փոքր ինչ քեսատութիւն էր ամրում դատաստանական գործերում: Այդ լաւ բան չէր: Եւ մեր գիւնադէտն էլ հաստատ համոզված էր: թէ լաւ բան չէր: Ուստի նա մտնում էր սրճարաններ ու շուկայի ծակուծուկեր: Հոտոտում էր: ականց դնում ու գտնում մարդիկ: որոնց պատ ճառ չէր պակսում իրարմէ գժգոհ լինելու: «Դէ՛, քեզ տեսնեմ: Զաքար աղայ», — իրախուսում էր նա ինքն իրան և այնպիսի ինտրիգներ սարքում նրանց մէջ: որ ինքը սատանան չէր կարող հասկանալ: Զաքար աղան, իբրև քարեկամա, մատնանշէր անում նրանց այն ժամանակ արդարադատութեան ատեանը և բաց անում իր ևսակարանը:

Երբեմն նա խորհուրդ էր տալիս իր այցելուներին այսչափ ոսկի էլ տանել այն ինչ թիւք է քէնքուն: Խոկ երբեմն էլ ինքն իր ձեռքովն էր անում այդ: երբ խնդիրը աւելի լուրջ բաների վրայ էր:

Խօթանասուն թուականներից Սահմանադրութիւնը մօւտք է գտնում: Աասպուրական<sup>5)</sup> ու

5) Թէկ Սահմանադրութիւնը հաստատուեցաւ 1860 թուականին, բայց նա երկար ժամանակ մնաց գործունական միմիայն Պօլոյ և նրա մօտիկ զաւաաների համար: Վերջին տարեներու միայն աշխատանք է լինում մացնել այդ ներքինքնական սիստէմը նոն: Կեռաւոր գաւառաներում:

մի նոր ասպարէզ տալիս մեր Զաքար աղային  
իր շահատակութեանց համար: Տասերկու տա-  
րի շարունակ նա մնում է Թաղական ու ծծում  
բոլոր թաղեցիների արիւնը: Թաղական խորհր-  
դարանն էլ մի աղպային դատարան է, որտեղ  
հանձնրեղ Զաքար աղան ունի իր գերագոյն  
աղդեցու թիւնը միւս վեց պաշտօնակիցնիրի վրայ:  
Փողովուրդն էլ նրա բազգից վիճող, կոռուող,  
վրէժինդիր ու զատամոլ ի վայելում նրա լայն  
գրպանի:

Թաղի եկեղեցում նա վարեց նոյնպէս երկար  
տարիներ երեցիոսի պաշտօն ու այնպէս լոպկեց:  
Կողոպտեց եկեղեցու զրամերը, որ քիչ էր մնա-  
ցել նրա սուրբ սպասներն էլ ծախէր: Թաղի  
հասարակութեան յանգուգն փոքրամասնութիւն.  
Նը մեծ ձիգնր թափելով յաջողցուց նրան հա-  
նել յնտեղից ու հաշիւ պահանջեց: Զաքար  
աղան շատ խնդաց նրանց տիւմարութեան վրայ  
ու ներկայացնելով մի գեղեցիկ բուխհալտերա.  
կան հաշուեկշու, մի քանի հազար զրուշի էլ  
պարտք դրեց կողոպտուած սնդուկի վրայ:

Բայց Զաքար աղան չէր բաւականանում այդ  
ու զդակի տուրքերով նա զբած էր իր հայ.  
բենակիցերի վրայ նաև բանի մի անուշաղա-  
կի տուրքեր: Առջորական բան էր նրա համար  
զանազան մժերներ առնել նրանցից ապառիկ,  
բայց ի հարկէ երբէք չը վճարելու պայմանով:

Այդ բանը նա անում էր մանաւանդ տղետ  
գիւղացիների հետ, որոնց քանի մի սոկի պարտք  
տալով, քամում էր նրանց բոլոր կարողութիւնը:  
Նա շարունակ պարտք էր վերցնում նոյնպէս իր  
աղքատ զրացիներից՝ «քանի մը աւուր» համար,  
բայց այդ քանի մը օրը նա վճռած էր յետա-  
ձրգել մինչեւ հանգերձեալ կեանքը, ուր շատ  
մուհանակներ պահուած էին նրան ներկայանալու:

Մէկ անգամ բարեկամի մը հետ անցնում էի  
ես փաղոցավ:

— «Ասեղ առէ էք... մախարնայ (ԿԱՏՈԵՑ  
ԽԱՏԷԱ) առէ էք... ծամոն առէ էք... — լսեցի  
ես մի աչեղնագոչ ձայն յետե էս:

Անմիջապէս յեմ եմ նայում և ի՞նչ տեսնում...  
Մէկ վաթուունամեայ յաղթանդամն բարձրահա-  
սակ ու պարարտ ծերունի, մէջքին շալկած մի  
ծրարիկ, նղիքներս գալարուեցան. — «Ո՞վ է այս  
մարդը», — հարցուցի ես ընկերոջս սարսափա-  
հար ու տեսայ մի ակընթարթում մեր կողքին  
նստած տղաների խումբ մը, որ մարում էր ծի-  
ծաղից ծերունու այդ անսովոր ու նրուտ ձայնի  
վրայ:

— Ա՝իւ, Զաքար աղայ, — մը մնջաց ընկերոս,  
մի գորովալից հայեացք նետելով այդ անշնորհէ  
«Ասեղ ծախողի» վրայ, — Ա՝իւ, Զաքար աղայ,  
թէ որ ասեմ, «զետինն անցնի» ու զետինն ափ-  
սոս է քեզ համար...»

— Գու Կորէծենց Զաքար աղան կը ճանչնամս  
— Հարցուց նա ինձ արագութեամբ:

— Կը ճանչնամի — պատասխանեցի ես:

— Ա՞յս, զիտե՞ս թէ քանի՞ մարդու տուն է  
քանդել էդ նզովից արմատը... Էս խեղճ մարդը  
— Բաղսար կ'ասեն ինոր — մի պատու ական վա-  
ճառական էր: Դատ մը ունէր քանի մի տարի  
առաջ: Զաքար աղան 50 ոսկի կաշառ ուտելէն  
զատ էնակս խառնակեց գործը, որ խեղճ մար-  
դու դատն աւրուաւ ու խանութն էլ վրան  
դնաց...

— Իրա՞ւ, — բացականչեցի ես:

— Բայց այդ բաւական չէ: Յետոյ ի՞նչ անի  
էդ փուժ Զաքար աղան, որ խեղճ Բաղսարին  
մահուան գուուը ձգէ: — Բաղսարը այգիով տուն  
մը ունէր, որ կ'արժէր մօտ 200 ոսկի: Զաքար  
աղան մօտիկ բարեկամութիւն կը հաստատէ  
անոր հետ: Քանի մը անգամ դաւաթ (խնձոյք)  
կը տայս իր տուն կը թանի: Մէկ անգամ էլ իր  
նման երկու փուժ բարեկամաց հետ Բաղսարը  
կ'առնեն կը տանեն մեյխանայ (զինետուն) մը:  
Աղէկ'մը կը զինովցնէ խեղճ մարդը ու մօտէն  
ստորագրութիւն կ'առնի, թէ նա (Բաղսարը)  
40 ոսկով ծախած է իրեն (Զաքար աղային) իր  
մի լքը... Հիմայ այդ խեղճ թշուառ ականը  
մնացել է առանց տուն ու տեղ և իր ահազին

ընտանիքը կը պահէ եղակս փողոցների մէջ  
բուլով:

— «Ծամոն առէ՝ էք... մախարնայ առէ՝ էք...  
ասեղ առէ՝ էք...» — լսուեցու նորէն թշուառ  
Բաղսարի արօրինակ ձայնը ու սարսաւու անցաւ  
ամրող նեարդերիս մէջ:

— Բայց գիտե՞ս թէ, — շարունակեց ընկերս —  
քանի՞ Բաղսարը ներ կան այսօր Վանայ մէջ:  
որ կը տառապին այդ անհոգի մարդու երեսէն՝  
յետին աղքատութեան մէջ...

Եյդ սրտաձմիկ գեպից յետոյ ես երբէք չւ-  
կարողացայ, մոռնալ խեղճ Բաղսարի պատկերը:  
Կարծես հեմայ էլ երբ գրում եմ սոյն տողերը:  
կանգնած է նա առաջս, որպէս մի մարմացեալ  
կեղեքում: Ու իր անհոգ, կոպիտ ու անընտել  
ձայնով սիրտըս ծակելով գոռում: «Ծամոն ա-  
ռէ՝ էք... Ասեղ առէ՝ էք...» Մախարնայ ա-  
ռէ՝ էք...»:

Ասացի որ 70-երորդ թուականներին Սահմա-  
նագրութիւնը հեմք ձգեց Աւապուրականում:  
Զաքար աղան երեք անգամ Թաղական ընտրու-  
եցաւ<sup>6</sup>): Ընտրութիւններից առաջ նա հաւա-  
քում էր իր տուն քանի մի տասնեակ թաղեցի-  
ներ և նոցա մի փառաւոր խնձոյք տալով ու

6) Բատ Սահմանագրութեան, Թագականութիւնը  
փոխուում է 4 տարին մի անգամ:

գլխները տաքցնելով բացէիրաց առաջարկում  
էր՝ որ քուէն տան անպատճառ իրեն ու այս  
ինչ մարդոց նանրանց պատուիրում էր նշյնպէս  
պրօպագանդա անել իրենց ժանօթ շրջաններում.  
Նա չէր ինայում այդ բանի համար նաև քանի  
մի զրուշ խճել ինչ ինչ մարդոց ձեռք Այդ մի-  
ջոցներին նա սովորականից դուրս ուրախ ու  
բարի գէմք էր ստանում ու թաղեցիներին ճա-  
նապարհին կամ սրճարանի մէջ հանդիպելիս  
նրանց բէֆն ու ողջութիւնն հարցնում։ Իսկ  
բուն ընտրութիւնից երկու օր առաջ նա պատ-  
րաստել էր տալիս իր մի ժանօթ վարժապետին  
քանի մը հարիւր քուէ, ու ցրվում իր կտրիչ  
գործակալների ձեռքով ամբողջ թաղեցիների  
մէջ . . ձիշտ երկու օրից յետոյ Զաքար ազայ  
Կորէծեանի վարչական կարինէթը ընտրում ու  
վաւերանում էր — ի մէծ պարծանա Վասպուրա-  
կանի — քուէից «մեծամասնութեամբ» ու Սահ.  
մանազրութեան պահանջած շամենայն օրի-  
նաւորութեամբ» . . Կեցցէ Սահմանադրութիւն։

Սակայն պէտք է ասած, որ Սահմանադրու-  
թեան այդօրինակ գործադրութիւնը Զաքար ա-  
ղայի բացառիկ հեղինակութիւնը չէր այլ դա մի  
ընդհանուր սովորութիւն է Վասպուրակա-  
նում . . .

Այստ Սակամախաղը ութեան, ըոլոր տեսակ քաւէնելը  
տրում էն թղթի վրայ:

Զաքար աղան մի անուս մարդ էր նա հա-  
զիւ կարող էր կարգալ ու գրել մի բան Բայց  
նա օժտուած էր բնութիւնից մի ընդարձակ  
հանձարով ու խորագիտութեամբ։ Ըատ զժուար  
էր ճանաչել նրա ներքինը իր հետ խօսած ժա-  
մանակ. Կրոպական շատաքիչ քաղաքագէտներ  
ընդունակ պիտի լինէին մրցել նրա հետ։ Նա  
ունէր մի զարմանալի ընդունակութիւն ազդե-  
լու մարդկային արարածների վրայ նրա մէկ  
հայեացքը բաւական էր շատ անդամ նրւածելու  
տկարամիտ մարդոց միտքն ու սիրաը։ Նա  
պատկանում էր վերջապէս մարդկանց ոյն որոշ  
իմրին, զորս յաւ ճանաչելու համար պէտք է  
Արգոսի աշքերով քննել իրանց թուղած հետքե-  
րը։ Դա անդ չեն մասնակութան հանգ

Հանգսւցեալի կենսագրութիւնը աւարտելու  
համար աւելացնենք նաև որ նա ամեն առաւօտ  
ժամ էր գնում ու ցերմաջերմ աղօթում . . Եւ  
որ նրա մահը մի ցնծութեան օր էր իր բոլոր  
համաբաղաքացիների համար մա իւ պատ

Պ. Աշոտը գեռ չէր վերջացուցել իր անհատ-  
նում պատմութիւննիրը Զաքար աղայի կեան-  
քից, երբ եկեղեցուց գուրս ելնող ստուար բազ-  
մութիւնը մի նշան եղաւ մեզ համար թէ թաղ-  
ման թափորը պիտի քայլէ ՚ի գերել մանոց։ Ոտքի  
ելանք.

Կը տեսնե՞ս այս ուրախ բազմութիւնը՝ առաց ինձ խօսակիցս—կարծես ամենքն էլ հարսանիք կ'երթան և ոչ թէ թաղման տիսուր հանդէսը.

Ե՞ս հաստատեցի պ. Աշոտի խօսքերը ու ընկանք թափորի յետև համրաքայլ:

—Բարե՛ ձեզ! —ասաց ու ձեռքս բռնեց՝ կարծես յանկարծ գետնից բուսած՝ մի անծանօթ երիտասարդ:

Ես նայեցի զարմացմամբ նրա երեսին. Անծանօթս մի քսանամեայ նի՛ ար երիտասարդ էր: Նրա բեղերը հազիւ կըմրային ու կաշուին ըպած ծնօտները ածիլուած էին: Փոքր, փայլուն աչքերը անհանգիստ թռչկոտում էին և երեսի ամբողջութեան մէջ երեսում էր ինձ մի ինչոր անհամակրելի բան:

—Եյս մեր Բիսմարկին լաւ կը ճանչնաք, —հարցուց նա ինձ անմիջապէս, ցոյց տալով հեռուից Զաքար աղայի դադաղը:

—Քանի մը անգամ միայն խօսած եմ իրեն հետ, —պատասխանեցի ես:

—Բայց իսկական Բիսմարկի հետն էլ ծանօթութիւն ունիք—հարցուց նորէն անծանօթս:

—Ո՛չ, ես Բերլին գնացած շեմ...

—Կը ծիծղաք վրաս, էֆէնդի... Ես գիտեմ որ Բերլին գնացած չէք, բայց մի՛թէ ֆրանսերէն լրագիրներէն տեղեկութիւն չ'ունիք այդ գերմա-

նական հանձարի վրայ, —հարցուց նա, առանձին կերպով շեշտելով «գերմանական» բառը:

—Հա, այդ ուրիշ ինդիր է, —պատասխանեցի բայց «գերմանական» հանձարի վրայ ես իմ տեղեկութիւններս քաղում եմ հայ լրագիրներից:

—Ուրեմն ոչինչ... հայ լրագիրների մէջ շատ քիչ բան կարող էք գտնել նրա մասին... Ես կըկարդամ միքանի ֆրանսական թերթեր... .

—Չեր անունն ի՞նչ է, —ընդհատեցի նրան:

—Մարգար Պոչովեան, —Այդ ֆրանսերէն թերթերին նայելով, Բիսմարկը լաւ ալՃերրայ գիտեղերը... Եւ այդ շատ բնական է. առանց ալՃերրայ գիտնալու, նա չէր կարող այդ տիեզերական նշանակութիւնն ունենալ... Օ՛՛ մե՛ծ գիտութիւն է ալՃերրան...

—Գիտե՞ք գուք ալՃերրա, —ընդհատեցի ես:

—Այո՛, նոր եմ սկսեր, բայց մինչև Զդ աստիճանի հաւասարութիւնները հասած եմ. Խընդիրներ լուծելու մէջ շատ վարժ եմ... Մե՛ծ բան է ալՃերրան... Եւ եթէ Բիսմարկ, Գլագուտոն, Սալիսբիրի, Ֆրէյսինէ, Կալնոկի և այլք իրենց քառասնամեայ, ծաղիկ հասակին մէջ՝ այդպիսի յառաջակիմութիւններ կըցուցնեն, կարելի է գուշակել. թէ ի՞նչ հրաշքներ պիտի դորձեն մինչև իրենց «ծերութիւն հասնելը»...

— Իուք ո՞րտեղէն գիտէք նոցա տարիքը, — Հարցոցի ես և մասնաւուն եմ...

— Գրանսերէն թերթերէն, ... կասեմ որ հայ լրագիրների մէջ բան չկայ կարդալու... Ես գըրքեր էլ կըկարդամ. հիմա ձեռքիս է Voltaireի Dictionnaire philosophique-ը . . Աշխ, ի՞նչ անուշ է այդ Dictionnaire-ը . . մարդ կարծես նորից կըստեղծուի, երբ այդպիսի հայակապ երկեր կըկարդայ. . .

Բայց մենք հասանք արդէն գերեզմանոցը, որ 5 րոպէ միայն հեռու էր եկեղեցուց. Զեմյիշում ինչպէս եղաւ, որ Մարգար Պոչովեանը անչետացաւ ամբոխի մէջ: Պ. Աշոտը ինդալուց թուլացած՝ նայում էր վրաս:

— Լաւ ձանչացար էտա մարդը, — Հարցուց նախձ, շարունակելովիր ծիծաղը:

— Ո՞վ է այդ, ասացէք ինպեմ: — աղաչում էի ես.

— Խանութի մը աշակերտ է, Պոչովինց Մարգար կ'ասեն, բայց թշուառականը շատ աշխատասէր է. իր բոլոր զիտցածը ինքնաշխատութեամբ է ձեռք բերել: Զարշիի (շուկայ) մարդիկ շատ կըխնդան վրան, . . Իր բոլոր խօսածները մեծ մարդոց վրայ է և մեզ բոլորովին անձանօթ մարդոց վրայ . . Ինչ որ Հարցնես: — պատասխան կըտայ. բայց չեմ զիտեր աղորթ բան զիտէ՞ թէ չէ . . .

— Բայց առ հասարակ ի՞նչ կարծիք ունին դրա մասին, — Հարցուցի նրան:

— Կըինդան ջանը (հոգիս), ամենքն էլ կըկընդան վրան . . . Թշուառականը ինքն էլ շատ պարծենկոտ է ու խիստ մեծ համարում ունի իր վրայ, . . . և մի աւելորդ անուն էլ ունի, չեմ գիտեր՝ լսե՛ր ես թէ չէ . . .

— Ո՞չ, լսած չեմ:

— Կրան կ'ասեն Աշխատականը, — ասաց ու քահքահ խնդաց պ. Աշոտը:

— Այստեղ դրա նման ուրիշ մարդիկ էլ կան, Հարցուցի ես:

— Զէ՛, էդ մէկ հատն է . . .

— Լաւ կըլինէր, — ասացի ես խնդալով — լաւ կըլինէր, որ մէկ հատ էլ ուրիշ «Մարգար Պոչովեան» ունենայիր, որպէս զի Աճեղող աշխատածեղ մօտ լինէր և Վանցիք այն ժամանակ այլևս ուրիշ բանի պէտք պիտի չըզգային:



### III.

III  
ԳՅՈՒՅԹԻ ՍԱՀ  
ՊՐՈՒՄԱՐՔ ՔԱՐԺ

## ԼԻՄ ԱՆԱՊԱՏԻ

Գ Ե Ո Ր Գ Ճ Գ Ն Ա Կ Ո Ր Ը

Մէկ երեկոյ գնացել էի Մելքոն վարժապետ  
տի տուն ծիրան ուտելու։ Այնտեղ գտայ նաև  
իր երկու ծերունի դրացիները, մուղսի Մանուկն  
ու մուղսի Կարապետը։ Ըստ երկութին, դոքա  
երկուսն էլ ութսուն տարեկանից պակաս չեին,  
թէև ժիր ու առողջ, Առաջինը ինձ նախածանօթ  
էր, իսկ երկրորդին ես երբէք տեսած չեի։

Մի մի գաւաթ արազ խմելոց յետոյ, մենք  
ելանք այգին և նստանք խոտի մէջ՝ պատրաս-  
տուած մինգարների վրայ։ Մելքոն վարժապետն  
ելաւ ծառ, որ ծիրան թափթղփէ, իսկ նրա  
փոքրիկ տղաներն և աղջիկները ժողովում էին  
իրանց վեշերի մէջ այդ ընկած պտուղները՝ հե-  
րերին մատուցանելու համար։

Երեքս գիտում էինք հեռուից գոյն տեսարանն  
ու խօսակցում։ Նախ և առաջ ծանօթացները  
ընթերցողին մեր Մանուկ աղայի հետ՝ ՊԱՐԱՊԱ

Այդ պարզ ու շատախոս ծերունին իր երիտասարդութեան մեծ մասը անցուցած էր կ. Պօլսում: Նա ճիշտ հինգ անգամ էր գնացել պյատեղ, միշտ երեքական տարի մնալու պայմանով: Նա այնտեղ «այլազութիւնից» զատ երբէք ուրիշ բան արած չէր: Այլազութիւնը Պօլսոյ մէջ զանազան տեսակ է լինում և այնպիսի մի բարդութեալ պաշտօն է, որ չէ կարելի հայերէն մի որոշ բառով արտայայտել: — Արշափ մի թուրքի տուն (Կամ հայի) հարուստ է Պօլսում: Այնքան պարզ ու որոշ է նրա «այլազների», պաշտօնը: Քայլ որովհետև մուղսի Մանուկը միշտ միջակ կարողութեան տէր մարդոց է հանդիպել: Նրա պաշտօնը բազկացած է եղել միանուագ՝ դունտապանութիւնից: Տախսարաբութիւնից: Լաքէյութիւնից և ձիապանութիւնից:

— Քայլ ժամանակ կ'էլնէր: — ասում էր նա, — որ ուրիշ գործ էլ կ'ունենայի: Մեր Մուստաֆա բէյն (իր ազան) շատ անգամ իր բարեկամներով կ'երթար ծովի ափ՝ այգի մը: Ես էն աւուր բոլոր կերակուրները ամաններով ու հացով՝ կը շարէի մէջ մեծ սինու ու գլխիս դնելով: Կրտանէի բէյի դաւաթ (Խրաբճան, Հրաւէր),

Եւ նա ինչազով աւելացնում էր: Թէ իր շատ անշնորհք պաշտօնակիցներ երբեմն փորձանքի հանդիպելով: այդ ահագին օհնին դիմից վայր էին ձգում:

Մուղսի Մանուկը Պօլիս եղած ժամանակ երբէք չէր մոռանում իր ընտանիքին ապրուստ ուղարկել: իսկ հայրենիք վերագառնալիս նա բերում էր իր հետ յետաձգուած 30—50 սուրբները: Այդ զրամով նա մէկ երկու տարի ուրախ կիները: Այդ զրամով նա մէկ երկու տարի ուրախ կիներէն իր ընտանիքի հետ և մը նում պարապ: Էմէն վերագարձին նա աշխատում էր նոյնպէս նորոգել և մեծ ացնելիր տունն ու այգին: Փողը վարդանալուն պէս, նա նորէն ուղարկորւմ էր Պօլիս: Նա ցաւում էր որ չէր իմանում ուրիշ որեւէ արհեստ: իսկ իր երկու տղաները նա յանձնել էր սօլկարին<sup>1)</sup>: Քսան տարի առաջ հինգերորդ անգամ հայրենիք վերագառնալով նա գտաւ նոցա լաւ վարպետ եղած և այլեւ ձեռք քաշեց իր թափառական կեանքից: Նա շատ չէր էլ ափսոսում իր կորցնելիք վաստակի վրայ: որովհետև վերջին տարիները նա նկատել էր, որ Պօլսոյ թուրք և հայ կրեսոսների ելմոտական անկումը լաւ ապագայ չէր գուշակում պանդուխտ այլազների համար: Նա կարգեց (պսակեց) իր երկու տղաներին և մնացած փողով մէկ արտ էլ առնելով: հանգիստ նստաւ իր համար:

Մուղսի Մանուկը իր հայրենիքի մէջ չունի որեւէ պարապմունք տնէն գուրս. մշակում է

<sup>1)</sup> Ա օ ը-ը Վահեցց մեամանութեան հագած ու նամաննն է, յաք և նաման մեր իմբէների չոտերին:

տան այգին ու երբեմն միայն հանդիպում գիւղ՝  
իր արտը տեսնելու, Զաւակները հաւատարիմ  
են իրան և լաւ են պահում զինքը: Զունենալով  
նիւթական կարողութիւն, նա չէ ունեցել, հե-  
տեւապէս, և որևէ նշանակութիւն իր հայրե-  
նակիցների աշքում:

Բայց պարապութիւնը ձանձրացուցել էր նը-  
րան և վերջին տարիներ օրու ան մեծ մասը անց  
էր կացնում նա փողոցում: Նստած իր գրան  
մօտ եղած մի քարի վրայ, Իրը և մի հարկա, ան,  
նա բռնում էր այդտեղ բոլոր անց ու գարձ ա-  
նողներին և հարցնում նոցա քէֆը, ողջութիւնը  
տան վիճակը, քաղաքի լուրերը, նրանց հայրե-  
րի ու պապերի պատմութիւնը և այլն և այլն:  
Եւ այդ բանի համար նա ոչինչ խտրութիւն  
չէր գնում ծանօթի ու անծանօթի մէջ, Բայց նրա  
շատախօսութիւնից տաղտկանում չին մարդիկ  
և միաձայն որոշեցին չըճտնաշել այդ ինքնակոչ  
հարկաշանին: Նրանք շատանում էին միայն  
բարեւ տալով ու վազում էին առանց յետ նայե-  
լու, ականջախից լինելով ծերունու բոլոր թա-  
խանձանքներին: Սակայն հաջի Մանուկը, յուսա-  
հատուղ մէկը չէր: «Զայնամի տակ թաղ եր-  
թան ամենքն էլ» — ասում էր նա — «Մարդարէ  
յիւրում գաւառի պատիւ ոչ ունիւ: Թաղ սիք-  
տիր էլնեն (Կորչին) բիւթիւնն էլ».

— Ինոնք չեն գիտեր, որ Շաղ դաղայ կա-  
ւուշմազ, ադամ՝ ադամայ կաւուշուր<sup>2)</sup>): ... Մեր  
աշխարհ մարդ չի պակսեր. ամէն օր մեր փո-  
ղոց տաս, քսան գիւղացի կ'երթայ կուգայ: . . .  
ինոնց հետ իւրաքանչ տալը դաշա անուշ է: . . .  
Եւ այնուհետեւ նա բռնում է խեղձ գիւղա-  
ցիների օձիքը:

— Բարի՛ երթաս, ախպէր, ո՞ւր բարով, — գի-  
մում է նա առաջին հանդիպողին:

— Աստծու բարին, կ'երթամ քաղաք... .

— Արի՛ ասեմ... .

Հնազանդ շինականը մօտենում է:

— Անունդ ի՞նչ է, ախպէր:

— Մըրտօ քե ծառայ:

— Մըրտօ Աստծուն ծառայ, Աստծուն ծա-  
ռայ... գու շատ անուշ մարդ կ'երեւիս: Զեր  
գեղի անունն ի՞նչ է, բալաս... .

— Խարակոնիս:

— Օ՛, Խարակոնի՛ս, Խարակոնի՛ս... հայ  
գիգի գիւնիա... Գիտե՞ս, բալաս, ի՞նչ օրեր  
եմ անցուցել ձեր գեղ... Ի՞նչ քէֆեր եմ արել...  
Զեր ուէս<sup>3)</sup> Պօղոն հալա կայ, բալաս...

---

2) «Ասթը սարբին չի մօտենայ, մարդը մարդուն կը-  
մօտենայ»:

3) «Ոէս են կոչվում Տաճկաստանի գիւղապետները:  
Բայց ուէս (ըէեղ) Ծիւրքերէն ասել է նոյնահս նա-  
խագահ, »—«Բալաղիէ ըէեղի՝ նախաղահ քաղաքուե-  
տական ժողովոյ:

— Հէ, մեռած է։  
 — Քանի՞ տղայ ունի։  
 — Երեք։  
 — Աստուած պահէ ։ Մեծ տղան ի՞նչպէս է, ի՞նչ կ'անի։  
 Գիւղացին պատմում է ինչ որ գիտէ։  
 — Օրթանջին (միջին) ի՞նչպէս է։  
 Գիւղացին նորէն պատմում է։  
 — Պատիկ տղան ի՞նչ կ'անի։  
 Գիւղացին դարձեալ իր իմացածն ասում է ու  
 մէկնելու հրաման խնդրում։  
 — Կաց, բալաս, քե բան պիտի հարցնեմ։  
 Զեր գեղի երես ժողովելու վիր (ո՞ւմ) վրայ է։  
 — Գիւհւմ ջիբաշենց Կարապետ աղի ձեռքն  
 է։  
 — Աջարա (արդեօք) նեղութիւն շատ կըտպյ  
 ձե, բալաս։  
 — Աստուած ինոր տունն աւեր չ'անի։ Կը-  
 տայ, հապա չի՞ տայ։  
 — Աւար, աւար, (վայ, վայ), էն ի՞նչն  
 կ'անի։  
 — Ի՞նչին պիտ որ անի. . . կտոր մը որ վեր-  
 ջին (տուրք) ուշացուցինք, — նա՛ (ոչ) տաւար  
 կըթորկի (կըթողնի) մեր տուն, նա՛ ոչխար (կը-  
 թորկի, նա՛ ջիւլ (կապերտ), նա՛ բան. . . ըիւ-  
 թիւնն էլ կ'առնի կըբաշի։ — Աստուած ինոր  
 տունն աւիրի, որ մե հի՛չ մէկ օր բահաթ (հան-  
 գիստ) չի թորկեր. . .

— Հիւ գողութիւն կ'անե՞ք, ցորնէ՞ն, խոտէ՞ն  
 բան—ման կըպահէ՞ք հիւ. . .  
 — Մենք կանա՞նք ինոր երեսէն բան ծածկել. . .  
 Բնչքանդար ցորեն էլնի, ըիւթիւնն էլ դաջել  
 (գրոշմել) կըտպյ, ցորեն մը չենք կանայ պախել  
 մե, խել (շիւղ) մը խոտ չենք կանայ թագջնել. . .  
 Խերու, խերզնամ (անցած տարիներ) որ կառա-  
 վարութիւնը մեր գեղի երեսը չըծախեց, մենք  
 գահա (աւելի) բահաթ էլանք, զարիթները (ոս-  
 տիկան) մե էսքանդար զուլում (հարստահարու-  
 թիւն), չէին տար. . . Ա՞ի մեր իշխաններ. . .  
 Մնա՞ս բարի, աղայ, քաղաք կ'երթամ, աջալայ  
 եմ (շտապում եմ), — ասում է ու մեկնում յան-  
 կարծ մուղսի Մանուկի ըրալան։  
 — Մըրտօ ախպէ՛ր, Մըրտօ ախպէ՛ր, արե՛ քե-  
 բան ասեմ, — կանչում է հապճեպով ծերունին.  
 Գիւղացին նորէն հնազանդւում է։  
 — Բալաս, ձեր գեղ Տէր Յովհաննէս մը կաբ,  
 էն մըկայ սաղ ի (ո՞զ է).  
 — Կըբաման քե, սաղ ի. . .  
 — Աստուած սիրես, էն մըկայ ի՞նչին է, ա-  
 զէ՞կ է. . .

4) Վասպուրականնում թէ՛ քաղաքացի և թէ՛ գիւղա-  
 ցի հարուստները վշխան, ե՞ն կըշւում. . . Մըրտօն  
 ակնարկում է այստեղ քաղաքի Եշխաններին, որոնցից  
 շատերը կապալով են վերցնում տէրութիւնից գիւղեր  
 հարկահանութիւնը.

Գիւղացին պատմում է ինչ որ գիտե։  
— Եսիկ Ստամբօլ գնալու միտք չունի՞։ . . .  
Գիւղացին նորէն մի բան է ասում կարճ  
կերպով։  
— Ինոր մէկ ախպէր Ստամբօլն ի, հիշ խարար  
կայ ինոր մօտէն. . . .  
Գիւղացին դարձեալ գոհացնում է նրան ու  
շտապով մեկնում։  
— Մըրտօ ախպէ՛ր, Մըրտօ ախպէ՛ր, արե՛ք բ  
բան կ'ասեմ. . . .  
Մըրտօն նայում է հեռուից ինդալով ու ել  
չէ ուզում մօտենալ։  
— Արե՛ք բալաս, քե հարկաւոր բան կ'ասեմ  
չէ՞ դու իմ Մըրտօն ես. . . .  
Մըրտօն ամաչում է և քիչ ել չողոքորթում  
նրա փաղաքշանքներից ու մօտենում է դարձեալ  
նրան, նա միենոյն ժամանակ հետաքրքրում  
է ծերունու «Հարկաւոր բանով»։  
— Զեր գեղ մըկայ քանի տուն կայ, բալաս. . . .  
Ել չէ համբերում մեր Մըրտօն ու գլուխն երկու  
ձեռքով բռնելով, այնպէս է ճողոպըրում մազա-  
պուրծ, որ տաս ձիաւոր յետեից ուղարկես,  
այլես չեն կարող նրան բռնել. . . .  
Բայց մուղսի Մանուկը հաստատամիտ էր և  
ոչինչ չէր արգելում նրան գանել մի ժամից  
յետոյ մի ուրիշ Մըրտօ, օրինակ Կիկօ, Աըկօ և  
այլն, եւ այդ ամէն օր Այդպիսով նա տեղե-  
կութիւններ էր ստանում բոլոր գիւղերի վրայ

և ներկայանում էր գիւղացոց՝ իբրև անձնական  
ծանօթ բոլոր մարդոց ու հանգամանքների. Եւ  
նա դարձել էր աշխարհագրութեան մի կենդանի  
գիրք, որի մէջ ուզողը կարող էր կարդալ հա-  
մայն Վասպուրականի կեանքը, Բայց վերջը  
գիւղացիքն էլ դաւաճանում էին նրան և մէկ  
անգամ փորձանքի հանդիպողը դեռ ևս նրան  
չըմօտեցած՝ պինդ կերպով վաղում էր նրա ա-  
ռաջից. . . .  
Ահա այդպիսի մարդու հետ էր վիճակուած  
ինձ ուտել Մելքոն վարժապետի ծիրանը.  
Տղաները իրենց ժողոված ծիրանները լեցու-  
ցին մի մեծ պղնձեայ պնակի մէջ և Մելքոն  
վարժապետը պաղ ջուր լեցնելով վրան, մատոյց  
մեզ ու ինքն էլ նստաւ։  
Մելքոն վարժապետը մի խեղճ ու բարեսիրա-  
45 աարեկան մարդ է։  
— Քանի՞ տարի է, որ վարժապետութիւն կ'ա-  
նես. — Հարցուցի նրան։  
— Աֆանդըմ, ես սկսեր եմ 1866-ին, հա-  
շուիր տե՛ս քանի՞ տարի կը լինի. . . Առաջ ես  
երեք տարի գիւղը մնացի, յետոյ մեր թաղեցիք  
հրաւիրեցին ինձ մեր վարժատան համար։ Գի-  
տե՞ս թէ ի՞նչքան կը զջամ վարժապետութեանս  
համար. . . . Բայց ի՞նչ անեմ անցածն անցել է.  
«օլաջաղայ չարէ եօք»<sup>5)</sup>) — կ'ասէ թիւրքը ես

5) «Պատահելու ըանին Ճար չըկայ»

առաջ հիւս էիր Քաղաք լաւ վաստակ չըկար,  
գնացի Բողազքեասան գիւղ սել կըշնէի,  
գութան կըշնէի, կըշահուէի Ես առաջ լաւ  
ձայն ունէի, շաբաթ—կիրակի օրեր տիրացու,  
թիւն էլ կանէի, ինչպէս հիմայ, Մէկ տարիէն  
ետք գիւղացիք ինձ ասացին, թէ վարժարան  
բանալու միտք ունինք, դու մեղ վարժապետ  
եղիր, Ով կըմտածէր վարժապետութեան վրայ  
Ես չէր ընդուներ, բայց կըմտիպէին թէ հիլահ  
(անպատճառ) պէտք է լինիսու, Ճիշգը խօսելով,  
Ես իմ արհեստէս շատ լաւ չէի շահւէր, իմա-  
րացայ ու ընդունեցի նոցա առաջարկութիւնը,  
Այս էլ պէտք է ասած, որ էն ժամանակ Վաս-  
պուրականի ոչ մի գիւղի մեջ գեռ ևս վարժա-  
րան բացուած չէր և Բողազքեասանը եղաւ  
առաջին օրինակը:

—Իրաւ, —բացականչեցի ես,

—Հրաման քե, հրաման քե, —հաստատեցին  
երկու ծերունիները:

—Արդեօք այդ վարժարանը Բողազքեասան-  
ցիք ինքնայրդո՞ր բացին, թէ դուք էիք համո-  
զել կամ մի ուրիշը:

—Ոչ ոք չէր համոզած նոցա, Յաճախ քա-  
ղաք գալով նոքա այցելած էին այստեղի վար-  
ժարաններն ու իրենք յլացել այդ միտքը:

—Ուրեմն եթէ Բողազքեասանը Վասպուրա-  
կանի անդրանիկ գիւղական վարժարանն է  
ունեցել, —ասացի ես, պ, Մելքոնին գուք էլ

նրա առաջին գիւղական վարժապետն էք ե-  
ղել, Այդ տալիս է ձեղ մի պատմական նշանա-  
կութիւն:

—Ողջ մնաք, Էֆէնդի, —ասաց ինչեցն ու  
ամչըցաւ համեստութիւնից:

—Քաղաքի վարժարաններն էլ շատ հին չեն,  
Վրայ բերաւ ծանրութեամբ մուղսի Պարա-  
պետը—հալա քառասուն տարի չըկայ նոցա-  
բացուելը, Ես արդարեւ, Ես յետոյ ստուգեցի,  
որ Վանայ բոլոր կրթարանները բացուած էին  
պաշտօնապէս Մատմէոս պատրիարքի կոնդա-  
կով 1848 թուին, Նոցա բացման ու բարգա-  
ւաճման մեծ զարկ էին տուած Վասպուրականի  
այն ժամանակուայ Առաջնորդ Պարբիէլ եպիս.  
Շիրոյեանը, Յակոր վարդապետ Թոփուղեանը  
և Վանցի հոչակաւոր Շարան բէյ Շարանեանը:

—Վարժապետութեանդ համար ի՞նչու ես  
զղացել, —արցուցի պ, Մելքոնին:

—Եղբայր, ի՞նչպէս չըզդամ. . . Ճիշգը  
խօսելով, եթէ ես արհեստաւոր մնայի, երբէք  
պիսի չըլսէի այն անարգանքները, որ հիմայ  
կուտեմ, Ամէն Թաղական, ամէն իշխան իրա-  
ւունք կըհամարի իրեն բոռալ վրաս խայտա-  
ռակել ու անպատռել զիս, —Անցեալ օր երգիչ-  
ներով գնացել էինք Մարտիրոս աղայի հարսա-  
նիք, Տղաները այստեղ «Ծիծեռնակ» երգեցին,  
նիք, Տղաները այստեղ նոր է և ես իմ գիտցած եղա-  
լիդ երգը այստեղ նոր է և ես իմ գիտցած եղա-  
լիդ ուսուցել, Մեր թաղական աղաներն  
նակն էի ուսուցել.

էլ էնտեղ էին. էլ աշքը դոցեցին ու բերանը  
բացին. — «Ծօ», Մելքոն վարժապետ. — ասացին  
— էն հարիւր զրուշն<sup>6)</sup> հարամ չէ, որ կ'առ-  
նես մեր վարժատնէն ու տղաներին զատ չես  
ուսուցեր . . . Էդ եղանակ է, որ ատոնք կ'ա-  
սեն. . . : Յետոյ բաշլայեցին (սկսեցին) ուրիշ  
շատ ծանր խօսքեր էլ ասել. բայց ես մնջայ  
քար կտրայ — ի՞նչ ասէի. Եւ այդ անպատիւ  
խօսքերը ինձ կ'ուղղեւին երկու հարիւրից ա-  
ւելի բազմութեան մէջ. . .

Նա լռեց մէկ րոպէ ու շարունակեց.

— Կարելի է հրամանքդ ասես, թէ ի՞նչու  
համբերեցի ես ու պատասխան չըտուի, ես ա-  
ռաջ! Ճիշը խօսելով, այդպէս չէի, բայց քիչ  
քիչ վարժուեցայ. Տեսայ, որ բոլոր վարժա-  
պետներն էլ այնպէս կ'անեն. Ես համոզուեցայ  
որ վարժապետութիւնը մի ծառայութիւն է ու  
մուրացկանութիւն, ուզես, չ'ուզես՝ պէտք է  
գլուխդ ծռես. . . Եւ քանի անգամ պատահած  
է, որ երր Թաղականները ամսականներս տուեր  
են ինձ կտոր կտոր և իբրև մուրացկանի մը, —  
ես ցաւ եմ յայտներ ու ասեր, թէ մուրացկան խօ  
չեմ ես, որ այդ ձեռվ փարայ տան . . . «Ասոր  
խօսքերին նայեցէք, ասոր խօսքերին նայեցէք,  
— կատաղել է մեր հաջի Պօղոսը — ծօ», Մելքոն  
վարժապետ, դու մայէր (մի՞թէ, իցէ՞թէ) իշխանի

<sup>6)</sup> Տաս ըուբեմ.

մը տեղ կըդնես եղեր քե. . . վարժապետը որ  
մուրացկան չ'էլի՛, էլ ո՞վ պէտք է էլինի . . . դու  
չե՞ս գիտեր էն թիւրքերէն խօսքը, թէ սար-  
մայասըզ սանաաթ՝ դիլինջելըք<sup>7)</sup>) . . . Էլ ի՞նչ  
յիմար յիմար խարըներ կուտաս. . . Բայց կա-  
րելի է հրամանքդ ասես՝ «Թէ որ սկուն ի՝ ի՞ն-  
չու վարժապետութիւնդ չես թողներ»: — Բայց  
այդ էլ չեմ կարող. Նախ որ ես իմ հիւսնու-  
թիւնս մոոցեր եմ. այսքան տարի է ձեռքս նա  
ուրագ եմ առեր, նա ուղնդայ, նա եղրախան,  
երկրորդ՝ շատ եմ ծուլացեր. Գիտե՞ս թէ մեր  
վարժապետութիւնը ի՞նչ թամբալութիւն կը-  
բերէ մարդու վրայ, ես միշտ կառավարիչ եմ  
եղեր և ամբողջ օր զլուխս կըգետրացուցեմ  
300 անկարգ տղայի մէջ<sup>8)</sup>: Օրական մէկ երկու  
դաս էլ «Ճաղկոցի»<sup>9)</sup> տղաներին կըտամ: Մարդ  
կարո՞ղ է օրական 8—10 ժամ էդա դժոխքի մէջ  
մնալ. . . Ես էլ կըտեսնեմ որ ճար չըկայ. «Ճայ-  
նամ աշակերտաց զլուխս կ'ասեմ, թո՞ղ զիբար  
ջարդեն ու սպանեն, ես էլ յիմար չեմ, որ ամ-  
սական 100 զրուշի համար կեանքս փճացնեմ»  
— կ'ասեմ ու կըբնանամ նստած տեղս: Օրական  
է՞ն քիչը երեք ժամ քնած կըլինիմ. . . Բայց որ  
արհեստիս երթամ: 'ի հարկէ պէտք է լաւ աշ-

7) Անդըամագլուխ ալկեստը՝ մուրացկանութիւնն է:

8) Դրանք բոլորն էլ նստած են լինում մի լնդարձակ  
սենեակում:

խատեմ որ հաց գտնեմ: Իսկ ես, ձիշդը եւս-  
սելով, այդ չեմ ՚արող, որովհետեւ արդէն փը-  
շացուեր ու դախացեր (ծերացել) եմ . . Ո՞չ,  
անպիտանացայ, անպիտանացայ . . .

Մելքոն վարժապետը հայր էր եօթ զաւակ-  
ների: Այդ 100 զրուշը նա ստանում էր վերջին  
տարիներին, իսկ առաջ նրա ոռձիկը ամսական  
50 զրուշէն աւելի եղած չէ: Եւ նա միշտ պար-  
տաւոր էր, բացի վերակացութիւնից ու դա-  
սատւութիւնից, նոյն թաղի եկեղեցու մէջ ա-  
մենօրեայ տիրացութիւն էլ անել: Եթէ նա չու-  
նենար իր հօր ժառանգութիւնից մնացած այ-  
գիով տուն ու մէկ արտ, ի հարկէ չէր կարող  
պահել իր ընտանիքը: Բայց իր ասելով նա ու-  
նէր նոյնպէս բաւականաչափ պարտքեր, որ դի-  
զուած էին նրա վրայ 1879—1880 թուական-  
ների Վանայ յայտնի սովոր ժամանակից:

Մենք շարունակում էինք կուլ տալ մէկ մէկ  
կարմիր ծիրանները ու լսում մուղսի Մանուկի  
անվերջ շատախօսութիւնները: Մուղսի Կարա-  
պետն էլ էր խօսում: Բայց նրա ասածների մէջ  
երևում էին կապ, խելք ու ծանրաբարյութիւն:  
Ըստ երևութիւն, նա շատ համեստ ու աղքատ  
մէկն էր:

— Մուղսի! — դարձաւ դէպի նա առաջինը —

<sup>9)</sup> «Մաղկոց» է կոչում այն կողմեր կը թարանի նաև  
խապատրաստական մասը:

մուղսի, միտդ կուգայ որ բեռու-Մուստաֆա  
փաշի ժամանակ Լիմ անապատ թօլ ձմերուկ կե-  
րանք: Հետո... մըկայ մեր աշխարհ ի՞նչքանտար  
ի փոխութե... Մեր ժամանակ, էֆէնդի՛, սուրբ  
Խաչին աշխըքի կէսը Լիմ կ'երթար... ուխտի  
սէր կար, Աստուածասիրութիւն կար... Միտդ  
կուգայ, մուղսի, Զըթչենքն էլ էնա տեղն էին,  
լուսաշոգի հաջի Աւետիս աղան <sup>10)</sup> սեղան իտու  
միարանութեան: Քառասուն վեղարաւոր կէր  
էն ժամանակ, մըկայ եօթ, ութ հատ են, պակ.  
սէր են... Ովկ սուրբ, մաքրակրօն Գէորգ ճըգ-  
նաւոր, ես որ գիտեմ՝ մըկայ հոգիդ եղինջի  
(7-րդ) երկինքն ի, Ամենակալ Աստուծոյ Աթոռի  
մօտն ի... Միտդ կուգայ, մուղսի, ինչ պետ  
պետ (խոշոր) քարեր կըթալէինք ծով տաշեղի  
պէս... Մեծ է զօրութիւն Քրիստոսի... Ա-  
ֆանդի՛, հրամանքդ Գէորգ ճգնաւորի անուն  
լսած ես...

— Լսած եմ, բայց քիչ բան գիտեմ նրա մա-  
սին, — պատասխանեցի ես:

— Մուղսի՛, քիչ թարիփ արա՛ (պատմի՛ր) է-  
ֆէնդուն, թող ճանչնայ էտա մեր հրեշտակին,  
— դարձաւ նա մուղսի Կարապետին ու խօթեց  
բերան Մելքոն վարժապետի մատուցած նար-  
գիլէի կոթը:

— Ճատ զարմանալի՛ սուրբ էր Գէորգ ճըգ-

<sup>10)</sup> ՏԵ՛ս «Հին սերունդ» վէպիկս:

Նաւորը՝ սկսեց ծանր ծանր՝ մուղսի Կարապետը՝ կայ կղզին առաջ խոշոր քարերով լեցուն էր. Մըկայ կըտեսնես արտ կայ ինե (մէջը), պանեղ (բոստան) կայ, առաջ էտպէս չէր . . . Այնպիսի քարեր կային էնտեղ, որ երեք մարդ չէին կանայ տեղախան անել: Գէորգ Ճգնաւորը տաշեղի պէս կ'առնէր էտա քարեր, կըթալէր (կընետէր) ծով, Երբ անապատ ուխտաւոր երթար, չէր թողներ որ պարապ ման. «Որդի՛, կ'ասէր, էսա քարն ա՛ռ, թալ ծով» ու նշանց կըտար մէկ քար, որ թորայ թէ տասը մարդ կանային ծովը թալէլ: — «Հայր սուրբ, կ'ասէի, ոտացդ հողն եմ, ամմայ (բայց) ես Երբ կանամ էսա քար տեղախան անել: — «Ա՛ռ, որդի, Աստուած եարդըմ (օգնութիւն) կ'անե», — կ'ասէր. և ի՞նչ կասես, աֆանդի՛, տաշեղի մը նման կ'առնէի էնա քար ու ծով կընետէի . . .

— Զարմանալի՞ զարմանալի՞ սուրբ էր լու-  
սահոգին, — մէջ մտաւ Նորէն մուզսի Մանուկը,  
Նարգիչի աշազին ծուխը հանելով բերնէն -  
շաբաթներով ծոյմ կըրոնէր, բայց մարդ որ ի-  
բիշկէր (նայէր) ինոր լոս երես, եա հետը խա-  
բար տարու — հիշ չէր կանայ հասկանալ, թէ  
էտա մարդ նա անօթութիւն ունի, նա բան,  
Հաց կերած գեախն էլ օրը մէկ դիր կ'ուտէր,  
Առաւոս կանուխ կ'երթար մաղարէք (քարայր)  
ու օրնիբուն կըմմար էն տեղէր անօթի, Նոր  
իրիկուն կուգար մառնապետին կըհարցուցէր

թէ «Որդի՛», հիշքան մնացե՞ր է, որ ուտեմ»:  
Մառանապետն էլ եա կտոր մը թանապուր,  
եա մածուն, եա ցամաք հաց մը կուտար որ  
ուտէր, Խնոր խուց եաթաղ—մաթաղ (անկողին)  
չըկէր, մէկ փոստէն (մորթի) զատ հիշ բան  
չըկէր: Գիշերը չէր հանուէր պառկելու, ճրագ  
կըվառէր, կ'ուլէր, կ'ասլաշխարէր, Սաղմոս կ'ա-  
սէր... Թէ որ բնանալ ուզէր առանց շորն հա-  
նելու կըկծկուէր վեր ուր փոստին: Բազի (եր-  
բմն) կըպատահէր ժամուց կըտային, աջահամ-  
բոյր կըտային ինոր, նա հիշ ձեռքը չէր առնէր  
էտա փարան. «գի՛ր, որդի՛, էսա փոստի տակ»  
կ'ասէր, եա՝ «գի՛ր էնա պատխան (պատուհան)»,  
կ'ասէր, Թէ որ աղքատ մը մանէր ինոր խունց,  
«էսա փոստի տակ փարայ կայ, հան, տար» կ'-  
սէր, եա՝ «էնա պատխան մէկ հատ իրիշկի՛,  
թէ Տէրն յաջողի փարայ գտնաս, առ քե»  
կ'ասէր... Զարմանալի՝ արտսունք ունէր լուսա-  
հոգին. զուրն ինոր աչքերէն քեահրէզի պէս  
(աղքիւր) կըչուար, Բազի խոստովաննք կ'ա-  
նէր ինոր մօտ, աման, աֆանդի՛... ի՞նչին  
կուց արուն կուլէր... «Հայր սուրբ, կ'ա-  
սէի, զուրբան էլնեմ էտա սուրբ ոտացդ, ես  
մեղքերս կ'ասեմ, դու ի՞նչու կուլաս», «Որ-  
դի՛, կ'ասէր, ես որ էսքանդար կըզջամ մեղացդ  
համար, դու ի՞նչին պիտօր անես—կ'ասէր ու  
կուլէր լուսահոգին սաւայ աղու. (ծծկեր) պէս...

— Լուսահոգին Ալսոնցի՝ էր, — Հարցուցի ես  
ծերունիներին,

Մուղսի Մանուկի բերնում նարդիլէի կոթ  
կար, ուստի մուղսի Կարապետն յանձն արեց  
պատասխան տալ ինձ.

— Եւ, աֆանդի, — ասաց նա — Աստապատցի  
էր, Աջամստանայ (Պարսկաստան), էր, Տղայ  
ժամանակ եկած էր անապատ, մոնթ էր դար-  
ձե, Կ'ասեն գեախ գեախ մեր քաղաք կուգար,  
բայց երբ վարդապետ կ'էլնի, կ'ելնէ մէկ հատ  
ուիտ կ'երթայ սուրբ Երուսաղէմ: Էն ժամա-  
նակ 40 տարեկան կ'էլնի: Սորայ (յետց), երբ  
կըվերադառնայ անապատ, աշխարհից ձեռք կը-  
քաշի, Կ'ասի որ մինչև մահ էլ կղզին դուրս  
պիտի չ'ելնեմ: Եւ աղործ որ էնպէս արաց.  
Հարիւր տարեկան էր լուսահոգին, որ առ Աս-  
տուած փոխեցաւ և վաթուուն տարի անապա-  
տէն ոտը դուրս դրած չէր...

Տիրեց մի փոքր լութիւն:

— Քե մեռնեմ: Մելքոն վարժապետ, — դար-  
ձաւ մուղսի Մանուկը դէպի նա — մէկ հատ  
եսա թամբաքին թաղացուր, տուր մուղսուն,  
թող խմէ (քաշէ):

Հրամանը կատարուեցաւ և նարգիլէ խմելու  
կարգն եկաւ մուղսի Կարապետին: Ես կպցնում  
էի իրարու վրայ իմ սիգարաս: Ծիրանն արդէն  
վերջացել էր:

— Մուղսի Կարապետ, — Հարցուցի ես — Կ'ա-

սեն թէ նարգիլէ խմելը աւելի օգուտ է մար-  
դուն. Ճիշդ է:

Նա մի բանաստեղծական հայեացք ձգեց  
վրաս ու խնդաց, զլու խը շարժելով:

— Գիտե՞ս, էֆէնդի, — ասաց նա մի րոպեից  
յետոյ՝ Ճիշդ աչքերիս նայելով — մեր թաղ փիս  
տաճիկ մը կէր, հաջի Բաքիր կ'ասէին: Էս  
խօսքը մէկ երեսուն տարուան խօսք է: Ես բնայ  
(որմնագիր) ի, ինոնց իգին (այգի) կըբանէի <sup>11)</sup>,  
Մէկօր ինոր տուն Ալիքը անունով մուսաֆիր  
(շիւր) մը եկաւ: Որ նարգիլէ շատ կըխմէր,  
Մէկ օր էդ երկուքը իգին նստած՝ խաբար կը-  
տային, ես էլ քովէն ականջ կ'անէի: «Բէյ», —  
Հարցուց հաջի Բաքիրը — աջարայ (արդեօք) էտա  
նարգիլէն մարդուս բահաթութեն (հանգւտու-  
թիւն) կուտայ: Զանին փայդա (օգուտ) կ'անի՞:

— Հրամանն քե, — ասաց խնդալով Ալիքը —  
Հրաման քե, էսա նարգիլէն երեք մեծ մարիֆաթ  
ունի. մէկ որ՝ անոր խմողի տուն գող չի մոներ,  
երկրորդ՝ անոր խմողին շները հիշ չեն դիպներ,  
երրորդ՝ անոր ծամեր հիշ չեն սիպտըկեր...:

— Ի՞նչպէս, — բացականչեցի ես զարմանօք:

— Համրերիր, ասեմ: Ալիքը ասաց թէ  
«Գողի անոր համար չի մաներ իր տուն, որ

<sup>11)</sup> Խակապէս Վանայ լեզուով այս անցեալ գերբառ  
ները սոսկ վրով պէտքէ վերջանան ու նու կըքանի  
կուտի և այլն:

նա որ ու գիշեր հազ կունենայ... Ըստը ա-  
նոր համար վնաս չեն տար ինոր, որ նա ա-  
ռանց փետի մանդալ չի կանայ... Վերջապէս  
ինոր ծամեր չեն սիպտըկեր, չիւնքի (որովհետեւ)  
հալա չըծերացած՝ գերեղման կըմտնի...։ Հաս-  
կացար, էֆէնդի...։

Ես հիացայ ծերունու այդ հետաքրքիր պատ-  
մութեան վրայ։

— Հաջի աղայ, — զիմեցի ես նրան—արդեօք  
չիգարան (պապիրոս) էլ վնաս կըտայ մարդուն։

Նա նայեց վրաս իբրև մի տղայի վրայ։

— Ես հրամանոցդ մի պատմութիւն անեմ, —  
վրայ բերաւ նա—յիսուն տարի առաջ, Սուլթան  
Մազիդի ժամանակ ես Ստամբուլն էի: Էնտեղ  
Շատախցու մը ռաստ եկայ, որ նոր էր թիւր-  
քերէն սովլեր, — ՞օ՞, տղայ—հարցուցի ինոր—  
ասաւ խենք (տեսնենք) իշուն ի՞նչ կ'ասեն տաճ-  
կեվար։ — «Էշակ», ասաց նա: — «Աղէկ», ասի,  
հապա քուռկուն ի՞նչ կ'ասեն։ «Գիօյ էն էլ  
որ մեծնայ՝ կ'էլնի էշակ», պատասխանեց. . .

Հասկացայ ծերունու կծու քննադատութիւնն  
ու խնդացի։

— Լաւ չէք աներ, — դարձաւ նա ինձ փոքր  
ինչ յետոյ—լաւ չէք աներ, որ մկավան ջա-  
հիլներդ էդքանդար ծուխ կըխմէք... Ափսօս  
է ձեր ջիգեար, Բալքի ասէք, թէ ի՞նչու մենք  
իսթեարներս (ծերունիներ) նարդիէ կըխմէնք:  
— Վեր բանն ուրիշ է, մեր ժամանակն անցեր

է, իխթիարցեր ենք... նարգիլէն ու արաշը  
մեր ծերութեան գաւաղանն է...։

Տիրեց կարճ լուսթիւն։

— Կ'ասեն թէ Գէորգ Ճգնաւորը ծովի վրայ  
էլ կան կ'ուգայ եղեր (կանգալ=մանգալ), — մէջ  
մտաւ պ. Ակլքոնը։

— Կ'ասեն, ջանըմ. . . շատ բան կ'ասեն, —  
պատասխանեց մուղսի Մանուկը — ամմայ (բայց)  
մեղայ Աստուծոյ, մենք մեր աշքով չենք տե-  
սեր էտա բաներ, Կ'ասեն թէ լուսահոգին փի-  
լոնը կըփոէր վեր ծովու ու կըփուար վեր ջրին...  
Կ'ասեն, շատ բան կ'ասեն, ամմա մենք չենք  
տեսեր, Կ'ասեն թէ մէկ օր Ալջաւազայ (Արծկէ)  
կողմեր քրդեր կըտեսնան, որ վարդապետ մը  
ծովը կընետուի ու կերթայ՝ նստած ջրի երեսին,  
զեխ անապատ . . . Կ'ասեն թէ սօրայ (յետոյ)  
էտա քրդեր ծովի ափին ինոր սոլերը կըգտնան,  
կըբերեն Լմա «ջրիսան»<sup>12)</sup> . . . Կ'ասեն, շատ  
բան կ'ասեն, Կ'ասեն թէ, երբ ուրիշ երկեր  
Ճգնաւոր մը մեռնէր, մեր լուսահոգի հայր սուր-  
բը ս. Հոգու շնորհիւ կ'իմանար էտա բան ու  
գաղտուկ կ'երթար ինոր թաղման . . . Վո՞վ  
գիտէ, ջանըմ, շատ բան կ'ասեն . . . Ամմայ  
ինչ որ մենք դամին (քիշ առաջ) թարիֆ ա-

<sup>12)</sup> Ջըլսան, և զլըսի—տուն, են կոչւում Բղունեաց  
ծովի Յ կղզիների զիմացը գտնուող (յամաքի վրայ:  
վանական շինութիւնները կրենց հաւահանգիստներով)

րինք, բիթիւնն էլ մեր աչքով տեսած ենք.  
Սկուն չե՞, մուղսի. . .

—Սկուն ի, ջանըմ սկուն ի, —հաստատեց  
մուղսի Կարապետը—մեր տեսած բաներն են,  
վո՞վ կանայ ասել թէ չչէ:

Պէտք է ասած, որ ծերունիների պատմութիւնը մի հեքեաթ չէր: Այդ նիւթերը ես քազել եմ նյուպէս քանի մի տասնեակ հին ականատեսներից: Գէորգ Ճգնաւորը մի պատմական մարդ էր, ինչպէս նաև պատմական էր նրանիմ կղզուց ամբողջ վախուն տարի ցամաք չ'ելնելը: Նա դասուած է այսօր, մինչեւ իսկ Վասպուրականի շատ հեռաւոր անկիւններում: Ի շարս ամենամաքուր սրբոց, Եւ գիւղացիք յատուկ ուխտ են գնում նրա շիրմին, որ զետեղուած է Նիմ կղզու մատուան մը մէջ: Նա մեռած է մօտ 50 տարի առաջ:

Խրիմեան Հայրիկը հաղորդում է նյուպէս քանի մի գծեր այդ սրբի կեանքից իր «Հրահրակ» Արարատեան: ումն

Գէորգ Ճգնաւորի մահուան մասին մուղսի Կարապետը աւելցուց նուև հեեեալը:

—Հոգին աւանդելու ժամանակ լուսահոգին կը յայտնէ միաբաններաց, որ դուրսը իմաց չքտան առ ժամանակ ոչ ոքի՝ իր մահուան մասին, որպէս զի Վանցիք կամ գիւղացիք նեղութիւն չըքաշեն գալու նրա թաղման: Բայց

միւս օր ամենքն իմացան էդ բօթն ու հազարաւոր մարդիկ լեցուեցան «գրսի-տուն»: Ամմազարմանալի՝ են Աստուծոյ գործերը. աֆանդըմ այնպիսի ֆըռթնայ մը (փոթորիկ) ընկաւ մէջ ծովին, որ ութ օր շարունակ կայեղ մը (նաւակ), գեամի մը (նաւ) չեր կանայ մտնել ջուր... Աստուած լսեց սուրբի աղաչանքը և նա թաղուեցաւ միմիայն իր ընկեր—միաբաններով:

Մութն արդէն կոխել էր և մենք հրաժեշտ տուինք տան տիրոջ:

—Ճիշտը խօսելով, շատ ուրախ եղայ ձեր այցելութենէն: — լսուեցաւ յետէս Մելքոն վարժապետի ձայնը:

—————

ուշաց առ մեջոց որ նորակի օքանու դաստի  
անելք և առողջ մարդոցի թիրանի դասոց  
նորմանա ըստ ճարու առ առ մասնաւոր  
չեն առժոյ ։ (Ճարուի վեհապետութիւն անհամա-  
կան) այս բանի մասունք որ են որ անհոգ  
ու ուղարկ վաճառք ունեն (առ) այս ժամանք ։ (Ճար-  
ուի ամ և զարուարա հայուս ըստ նույնութ-  
յան անհամական զամանք ոյ Մարտին առժոյ ։

Հայուս առ զամանք  
ով արք մասու առ անհամական զամանք ։  
անհամական առ առ առ անհամական զամանք  
անհամական առ առ առ անհամական զամանք

ԹԻԳԼԻՈՒՄ. ԽԻԴԻԿԵԼԻ ԳՐԱՎԱՀԱ-

ՌԱՆԱՅՈՒՄ ԾԱԽԻՈՒՄ ԵՆ.

1. ԽՐԻՄԵԱՆ ՀՈՅԲԻԿ, լուսամնկար  
պատկերով (աղառուած) . . . . . 40 կ.  
ԽՐԻՄԵԱՆ ՀՈՅԲԻԿ (առանց պատ-  
կերի) . . . . . 25 կ.  
Ճան, ծախս . . . . . 10 կ.
2. ՊԱՏԿԵՐՆԵՐ ՎԱՍՊՈՒՐԱԿՈՆԻ  
ՀՈՅՈՅ ԿԵԱՆՔԻՅ. Գրքոյի Ա. 40 կ.  
Ճան, ծախս . . . . . 15 կ.

Գառառացի գրավաճառները զեզ օ կոնենան,  
եթէ դիմեն հեղինակին.

Տիֆլիսъ, Ваниская ул. домъ Апіанца.



1392

ՀՀ Ազգային գրադարան



NL0343304

